

Արտաշես Քալանթարյան

ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Գիշերային խոր լռության մեջ, ցածրաձայն ու տագնապալի ընդհատ- ընդհատ հնչեց հեռախոսի զանգը: Առաջին իսկ զնգոցի հետ Անդրանիկ Աթայանը արթնացավ քնից, բայց երկար ժամանակ չէր հասկանում, որ այդ զանգը իրեն է վերաբերվում: Նրան նույնիսկ մի պահ թվաց, թե երազի մեջ է: Հետո սթափվեց միանգամից:

“Բա ուրիշները ճիշտ չե՞ն անում, որ քնելուց առաջ անջատում են հեռախոսը, - սրտնեղած մտածեց նա: -Կամ սխալ են ընկել, կամ էլ անքուն մի ապուշ իր- համար թվեր է հավաքում : Կարգին մարդը այս ժամին զա՞նգ կտա”:

Բայց որովհետև ստույգ չգիտեր, թե որ ժամն է, սկզբում վառեց կողքի պահարանիկի վրա դրված փոքրիկ լուսամփոփր, վերցրեց լսափողն ու նայեց ժամացույցին: Գիշերվա ժամը երկուսն անց էր քսանհինգ թոպե:

- Այլ՛, - խռպոտած ձայնով արձագանքեց նա, սպասելով, թե ուր որ է, լսափողի մյուս ծայրում անջատման չիսկոց կլսի:

Եվ հանկարծ պարզ, ասես կողքից մեկը հարցրեց.

- Անդրանի՞կ:

- Հա, - լրիվ արթնացավ Անդրանիկ Աթայանը: -Ո՞վ է:

- Ես եմ, - լսվեց լսափողի մեջ:

- Ո՞վ, - ականջներին չհավատաց Անդրանիկը:

- Վասակ Սերոբյանը:

Անդրանիկ Աթայանը հանկարծ զգաց, որ ուժգին բաբախում է սիրտը; Լսափողը բռնած ավր թրտնեց միանգամից:

- Ի՞նչ ես ուզում, այ մարդ, - խեղդված ձայնով հագիվ շշնջաց նա:

- Ուզում եմ, որ մեր տուն գաս:

- Ե՞ս, ե՞րբ, ինչի համար, - տակնուվրա եղած հարցրեց նա:

- Հենց հիմա:

Անդրանիկ Աթայանը լռեց, լսափողը հեռու տարավ, որպեսզի հեռախոսալար

մյուս ծայրում իրեն Վասակ Սերոբյան հայտարարած մարդը չլսի իր անհանգիստ հետքը: Հետո հարցրեց.

- Հա, բայց ինչի. է՞... էդ ի՞նչ գործ է, որ առավոտյան թողնել չի լինի:

- Գործը մինչև առավոտ չպետք է հասնի, - հանգիստ և համառ պատասխանեց

Վասակ Սերոբյանը: -Քեզ համար եմ ասում: Ուշ կլինի:

Հեռախոսն անջատվեց: Անդրանիկ Աթայանը մի պահ դեռ թեքված մնաց մահճակալի վրա՝ լսափողը սեղմած ականջին, հետո վեր կացավ, հագնվեց արագորեն պատուհանից դուրս նայեց, տեսավ, որ ամպեր են երկնքում, զգեստապահարանից հանեց նաև կնգուղով անձրևանոցը, դրեց ձախ արմունկին և կամացուկ բացեց միջանցքի դուռը: Տունը չէր արթնացել և խաղաղ շնչում էր: Մեկ մտածեց արթնացնել որդուն, ասել, թե ուր է գնում, մեկ էլ՝ փոխեց միտքը: Երկու- երեք բառով բացատրել չի լինի: Հետո՝ կարթնանան ու կանհանգստանան տնեցիները:

Նա մթության մեջ անաղմուկ, անգիր շարժումներով հանեց հողաթափերը, հագավ կոշիկները, կանգ առավ մետաղապատ դռան մոտ, աչքերը փակ մի վերջին անգամ էլ մտածեց, թե ճի՞շտ է անում արդյոք, որ գնում է և զգուշորեն բացեց դռան փականքը:

Սանդղահարթակը լուսավորված էր թույլ, աղոտ լապտերով:

Անդրանիկ Աթայանը մի քայլ արեց դեպի ցած, հետո նորից ետ նայեց դռանը, մտածեց- մտածեց ու սկսեց դանդաղ, երեխայի նման աստիճան առ աստիճան իջնել սանդղակով:

- Կգա՛, - լսափողը ցած դնելով, ինքն իրեն բարձրաձայն ասաց Վասակ Սերոբյանը:

Ամեն շարժումի հետ ցավում էր նրա գոտկատեղը, պտտվում գլուխ, բայց գունատ, դողդոջուն շրթունքներից ժպիտը չէր իջնում:

- Կգա՛, - մի անգամ էլ ասաց նա՝ մանրիկ քայլերով մոտենալով իր մահճակալին:

Կանգ առավ, շրջվեց, ուշադիր, գննող հայացքով նայեց շուրջը: Ամեն ինչ կարգին է: Աչքերն ակամա անշարժացան պատից կախված լուսանկարից իրեն նայող պատանու վրա: Զինվորական հագուստով էր, առանց գլխարկի, ճակատին իջած մազերով ու ձեռքին բռնած երկարափող հրացան՝ օպտիկական սարքով: Նկարի վերևում դրոշ կար, իսկ ներքևում ռուսերեն գրված էր՝ «Վորոշիլովյան հրաձիգ- նշանառու Վասակ Սերոբյան»:

Հրաձիգ նշանառու...

“Ինչքան անարդար է աշխարհը, - առանց հայացքը նկարից կտրելու, դանդաղ, շատ դանդաղորեն մահճակալին պռոկելով միլիոներորդ անգամ մտածեց Վասակ Սերոբյանը, - Ի՞նչ կլինեք, չէ՞, ի՞նչ կլինեք, եթե մարդը մեծանար, դառնար քառասուն տարեկան ու այդպես

էլ մնար՝ առողջ, ուժեղ, գեղեցիկ... մինչև իր մահը: Թե չէ՝, ի՞նչ ես անում: Ոնց որ ծաղրես, ծիծաղես մարդու վրա: Ինչ որ տվել ես՝ առնում ես կամաց-կամաց, անգթորեն ու անվերադարձ”:

Նա գլուխն իջեցրեց բարձին, հառաչեց ու սկսեց մտածել, թե ինչ է ասելու Անդրանիկ Աթայանին և ինչպես է ասելու: Իհարկե, նա այդ մասին վաղուց էր մտածել, շատ վաղուց, բոլոր մանրամասներով, հարցրել էր իր փոխարեն և պատասխանել նրա փոխարեն, հետո նրա փոխարեն էր հարցրել և պատասխանել իր փոխարեն... Չէ, ամեն ինչ կլինի այնպես, ինչպես ծրագրել է: Անհնարին է, որ վրիպում լինի... ”Չէ որ դու Վորոշիլովյան հրաձիգ-նշանառու ես, Վասակ Սերոբյան, ինչի՞ց ես վախենում”, - դառը քմծիծաղ տվեց նա: Միայն թե գա, միայն թե գա... ”:

Նա այնպիսի անհամբերությամբ էր սպասում դռան զանգին, որ մի քանի անգամ բարձրացրեց գլուխն ու սկսեց ականջ դրեց: Ուղեղում ինչ- որ տեղ անընդհատ բվվոց էր, որ խանգարում էր լսել: Իսկ երբ իրականում հնչեց զանգը, մի պահ նույնիսկ չհավատաց ականջներին, լարվեց ու, հավաքելով ողջ կամքն ու ուժերը, իր համար էլ զարմանալի բարձր ու առույգ ձայն տվեց.

- Մտիր, մտիր... Դուռը բաց եմ թողել քեզ համար: Ներս եկ, Անդրանիկ Աթայան...

Խաչիկ եղբայրը դուրս եկավ ներքնահարկից՝ մի ձեռքին ցախավելը, իսկ մյուս ձեռքին՝ դույլը: Նայեց վեր, ամպերի արանքում հավվող- մարդ աստղերին ու լայն բացելով բերանը հորանջեց՝ թառանջ արձակելով և ուրախանալով, որ մարդ չկա, ու ինքը կարող է հորանջել, ինչպես ուզում է: Դեմքին ինչ- որ մանրիկ կաթիլներ ընկան, և նա նույնիսկ մի պահ չհասկացավ՝ անձրև է սկսվում, թե շաղն է իջնում շրջապատին: Դույլը մի կողմ դրեց ու սկսեց սովոր, համաչափ շարժումներով մաքրել մայթը, փոշին հավաքելով ասֆալտապատ փողոցի եզրին: Հետո ձեռքի ափով սրբեց ճակատի քրտինքը, նայեց փողոցի երկարությամբ ու փնթփնթաց.

- Արշուն էլի ուշանում է, երեխան հիվանդ չլինի՞:

Ուղիղ տասնհինգ տարի, ամեն օր, վաղ առավոտյան այսինքն՝ համարյա գիշերը, իրար հետ էին աշխատում Խաչիկ եղբայրն ու փողոցները ջրող, լվացող մեքենայի վարորդ Արշուն: Հենց որ հայտնվում էր Արշուն, ասես միանգամից զովանում էր օդը: Արշուն գործի էր դնում ջրամղիչ պոմպը, և մի կողմից ուժեղ շիթեր արձակող մեքենան դանդաղորեն տանում մայթի երկայնքով՝ լվանալով, քշելով ու ցանցապատ փոսերի մեջ լցնելով Խաչիկ եղբոր կուտակած փոշին: Հետո հերթով կանգ էր առնում յուրաքանչյուր ծառի մոտ, հաճույքով բերնեբերան լցնում բոլոր փոսերն ու հետն էլ գոռոռալով խոսում Խաչիկ եղբոր հետ:

- Բարի լույս, ո՞նց ես, Խաչիկ եղբայր

- Լավ եմ, բարի լույս լինի, Արշո:

- Լսեցի՞ր, թե Ռեյգանն ինչ ասաց...

- Ի՞նչ ասաց...

- Ասաց՝ ես էլ եմ խաղաղություն ուզում, բայց՝ զենքով:

- Է՛, զենքով խաղաղություն կլինի, - զարմանում է Խաչիկ եղբայրը:

- Եսիմ, - տարակուսում է Արշուն:

Իսկ այսօր Արշուն չկա: Երեկ ասում էր, թե հիվանդ է տղան, հազում է: Կամ ո՞վ գիտե, գուցե դեռ շու՞տ է: Ինքը հո ժամացույցի չի նայում, հենց որ արթնանում է, վերցնում է ցախավելն ու դուլերն ու դուրս գալիս: Երևի շուտ է, չի էլ լուսանում: Դե շուտ է, էլի...

Դեռ ոչ ոք չկա, ոչ մի մարդ: Անխիդ՝ բան էլ է, որ ինքը քնի այս քաղցր ժամանակ մարդկանց ականջի տակ իր ցախավելով խըշտ-խըշտ է անում: Հիմա էլ Արշուն կգա ու գոռոցը կգցի: Բայց ինչ կարող էս անել, մի քիչ էլ ուշացնես, խանգարելու էս մարդկանց:

Խաչիկ եղբայրը զգաց, որ ուժեղանում է անձրևը և զոջաց, որ անձրևանոցը չի վերցրել: Նա արագացրեց շարժումներն ու երբ ավելեց, հասավ մինչև մայրի ծայրը, ոտքից գլուխ թրջված էր: Գլուխն ուսերի մեջ առնելով շրջվեց, որ ետ դառնա ու մտնի շենքի մուտքը, երբ հանկարծ այդ մուտքից մի մարդ դուրս եկավ՝ սև անձրևանոցով, կնգուղով լրիվ ծածկած գլուխն ու աջ թևի տակ ինչ- որ թղթապանակ պահած: Չնկատեց Խաչիկ եղբորը, միանգամից աջ թեքվեց, գնաց գրեթե պատերին քսվելով:

Ու հանկարծ Խաչիկ եղբայրը տարօրինակ ձայներ լսեց: Մարդը խոսում էր ինքն իրեն, գրեթե բարձրաձայն.

- Ես քո հերն եմ անիծել... Հո պրծա... Հո պրծա.. Ես քո հերն եմ անիծել:

Դա այնքան տարօրինակ էր, որ Խաչիկ եղբայրը չդիմացավ, ձայն տվեց.

- Ի՞նչ է պատահել, ախպեր... Սպասիր, ի՞նչ է պատահել...

Խաչիկ եղբորը թվաց, թե մարդը ցնցվեց, բայց ետ չնայեց, ձևացրեց, թե ոչինչ չի լսում, արագացրեց քայլերը, շենքի կողքով ձախ թեքվեց ու անհետացավ անձրևի մեջ:

Խաչիկ եղբայրը ուզեց վազել նրա ետևից, բայց ամաչեց: Հետո՞ ինչ, որ մարդը խոսում է ինքն իրեն: Ինքը քի՞չ է խոսում: Հետո, որ վազես, կհասնե՞ս: Ու անմիջապես էլ մտածեց, որ անձանոթ մարդ էր... Նա նորից նայեց այն կողմը, որտեղ անհետացավ խորհրդավոր անձանոթը, և հանկարծ փողոցի ծայրում նկատեց Արշույի ջրող ավտոմեքենան, որ ստվերի նման հայտնվել ու առաջանում էր խավարի միջով... գունատ ու աղոտ լապտերներով լուսավորելով միայն անձրևի մանրիկ շիթերը...

Ներքին գործերի շրջանային բաժնի տեղամասային տեսուչ, միլիցիայի լեյտենանտ Կարեն Շախուլյանը դանդաղ, համաչափ քայլում էր իր հսկողության տակ գտնվող Խանջյան փողոցի

միակ աջ մայրով: Չախ մասում գրեթե մայր չկար, տրամվայի գծերն էին, որոնցից այն կողմ ձգվում էր Օղակաձև կոչվող այգին՝ իր ստվերախիտ ծառերով և սքանչելի շատրվաններով: Օղակաձև այգին, որպես հսկողության կետ, վաղուց չէր անհանգստացնում տեղամասային տեսուչին, այսինքն՝ ավելի ճիշտ այն

Օրվանից, երբ ”Կռունկ” ռեստորանը վերածվեց ուսանողական ճաշարանի, և արգելեցին այնտեղ ոգելից խմիչքների վաճառքը: Իսկ առաջ... առաջ ցավ ու կրակ էր այդ ռեստորանը: Օր չկար, որ կոփվներ ու տուրուղմփոցներ չլինեին... Լեյտենանտ Կարեն Շախուլյանը շատ գիշերներ միլիցիայի բաժնում էր անցկացնում՝ ռեստորանից այստեղ տեղափոխելով հարբած խուլիգաններին և նախնական արձանագրություններ կազմելով:

Դժվար էր նրա վիճակը, իսկ մյուս կողմից էլ՝ կինն էր նեղում:

- Դու ուրիշ օրեկտ չունե՞ս, - հարցնում էր նա: -Քո հսկելու միակ կետը ռեստորանն է, հա՞: Ես գիտեմ, շատ լավ գիտեմ, թե ում ես հսկում... Առիթ է, գոնե օգտվիր ու պարել սովորի, այ տղա... Լսել եմ, թե ինչ պարող աղջիկներ են հավաքում այնտեղ:

Պարող աղջիկներ: Դե եկ ու համոզի Արևիկին, որ ”Կռունկ” ռեստորանն իսկապես ամենավտանգավոր տեղամասն է: Ամենավտանգավորը ոչ միայն ռեստորանի այցելուների, այլև հենց իր՝ տեսուչ Կարեն Շախուլյանի համար: Չէ՞ որ նրա աշխատանքը չափվում ու գնահատվում է նրանով, թե որքա՞ն է քիչ օրինազանցությունների թիվը: Իսկ երբ ”Կռունկ” ռեստորան կա, էլ ի՞նչ թիվ:

“Հիմա՝ փառք աստծո, - մտածեց տեսուչը, - այսպես որ գնա, երեք ամիս հետո ավագ լեյտենանտի ուսադիրներ կպատվիրեմ”:

Կարեն Շախուլյանը սնոտիապաշտ չէր և չէր հավատում աչքով տալուն, ճանապարհը կտրող սև կատվի բերած անհաջողությանը, բուի չարագուշակ կոինչին և նման այլ բաների: Իսկ այդ դեպքից հետո տատանվում էր, որովհետև հենց նոր վերջացրել միտքը, երբ լսեց որ մեկը կանչում է իրեն:

Ընկեր լեյտենանտ, ընկեր լեյտենանտ...

Տեսուչը շրջվեց և տեսավ, որ ձայն տվողը հենց կողքի շենքի բնակիչներից մեկն է Արաքսյա Պետրոսի Սահակյանը. Կենսաթոշակի անցած ծեր ուսուցչուհին:

- Լսում եմ, ընկեր Սահակյան, - ասաց նա՝ ինչպես սովոր էր դիմել ուսուցչուհուն:

Եվ ուսուցչուհին էլ արդեն նրան դիմեց իբրև աշակերտի:

- Կարեն ջան, մի բան եմ ուզում ասել:

- Լսում եմ, ընկեր Սահակյան:

- Կարեն ջան, - ասաց ուսուցչուհին, - մտածում եմ, թե երևի իմ հարևանի հետ ինչ- որ բան է պատահել:

- Ո՞վ է այդ հարևանը:
 - Վասակ Սերոբյանը: Թոշակի անցած տնտեսագետ է:
 - Իսկ ի՞նչ կարող է պատահած լինել:
 - Չգիտեմ: Ծեր, հիվանդ մարդ է: Կողքին ոչ մի հարազատ չունի:
 - Գիտեմ, - ասաց Կարեն Շախուլյանը: -Շատ պատկառելի ծերուկ է:
 - Մի անգամ, նկատելով, որ խանութ էմ գնում, խնդրեց մի շիշ կաթ էլ իր համար բերել: Վատ էմ զգում, ասաց: Ես էլ սովորություն դարձրեցի, ամեն առավոտ մի շիշ կաթ էի բերում նրա համար:
 - Հետո՞, - ակամա անհանգստացավ տեսուչը:
 - Երեկ առավոտյան սովորականի պես բերեցի կաթը, զանգը տվեցի, բայց դուռը բացող չէր: Մտածեցի, թե ո՞վ գիտե, երևի գործով որևէ տեղ է գնացել: Օրվա ընթացքում էլ մի քանի անգամ սեղմեցի զանգի կոճակը և զանգահարեցի հեռախոսով.
- Բայց պատասխան չէր: Ես այսօր, մի ժամ առաջ զանգահարեցի... ու, պատկերացնում ես՝ դարձյալ ոչ մի արձագանք...
- Հնարավո՞ր է, որ հյուր գնացած լինի որևէ բարեկամի և գիշերի այնտեղ:
 - Ի՞նչ ասեմ, - ուները թոթովեց ուսուցչուհին, - որքան ինձ հայտնի է, նա այդպիսի սովորություն չունի... Ես մի բանից էմ անհանգստանում, Կարեն ջան, հիվանդ մարդ է, հանկարծ ուշագնաց եղած չլինի՞ ... Գուցե ուղղակի չի՞ կարողանում մոտենալ հեռախոսին կամ դռանը:
- Միլիցիայի տեսուչը վերջնականապես անհանգստացավ.
- Գնանք տեսնենք, - ասաց նա:
- Կարեն Շախուլյանը կանգ էր առնում յուրաքանչյուր հարթակում և սպասում, մինչև ուսուցչուհին հասնի իրեն: Հետո չդիմացավ. երկու-երկու աստիճան ցատկելով, հասավ երրորդ հարկի N9 բնակարանի դռանը ու սեղմեց զանգի կոճակը: Տան ներսից պարզ լսվեցին զանգի դողանջները: Սպասեց, սպասեց ու նորից զանգահարեց՝ երկար ու համառ: Ոչ մի ձայն:
- Դուք սպասեք այստեղ, - ասաց նա ուսուցչուհուն, - ես գնամ փականագործ բերեմ...
 - Մի՞ թե կոտրելու եք դուռը, - սարսափեց տիկին Արաքսյան...
 - Դժվար թե, - փականքն ուսումնասիրելով, ասաց տեսուչը:

Եվ նա չսխալվեց: Դուրը կոտրելու հարկ չեղավ: Փականագործը գրպանից բանալիների մի տրցակ հանեց, ստեպ- ստեպ փականքի անցքը շոշափելով ընտրեց բանալիներից մեկը, հազցրեց անցքին ու առանց որևէ ջանքի, բացեց դուռը:

- Բա որ ձեզ միշտ ասում եմ, - զարմացած ընթերակա-հարևաններին դառնալով, նախատեց տեսուչը, - բա որ ասում եմ կարգին կողպեքներ դրեք դռներին... Տեսա՞ք ձեր բոլորի դռներին նույն այս կողպեքներն են և տասից չորսը բացվում են նույն բանալիով...

- Կար՝ չառա՞նք ընկեր լեյտենանտ, - հայացքը կիսաբաց դռնից չկտրելով, արդարացավ հարևաններից մեկը: -Մենք ի՞նչ մեղավոր ենք, որ խանութներում մի տեսակ կողպեք կա...

Կարեն Շախույյանը պատասխան չունեց, եթե ունենար՝ կխոսեր և կխոսեր երկար, որովհետև ոտքերը կարծես թե չէին ուզում ներս մտնել: Բայց նա պատասխան չունեց և մտավ մուֆ միջանցքը:

- Վա՛յ, տանը մարդ կա, - լսվեց ուսուցչուհու խուլ ճիչը: -Ես ձայներ եմ լսում:

Խոր լռություն տիրեց և միանգամից ու պարզորոշ լսվեց, որ ներսում երկու հոգի բարձրաձայն վիճում են: Հաստատ վիճում էին. բայց խոսքերը չէին հասկացվում:

Տեսուչը ետ ընկրկեց, շփոթված նայեց շուրջը:

- Է՛, հեռուստացույցն է, հեռուստացույցը, - կամացուկ ծիծաղեց փականագործը: -"Սարոյան եղբայրներն" են ցույց տալիս: Ինձ որ ձայն տվեցիք, ես նայում էի:

- Ուրեմն՝ բոլոր դեպքերում տանը մարդ կա, - ասաց ուսուցչուհին:

- Շատ տարօրինակ է, ես վախենում եմ, Կարեն:

- Վախենալու ի՞նչ կա, - իրանից անկախ բարձրաձայն առարկեց տեսուչը:

Նա մեկնեց ձեռքը, վառեց լույսը, ներս հրավիրեց ընթերականերին, համենայն դեպս բախեց ճաշասենյակի դուռը, բայց որովհետև պատասխան չստացավ, միանգամից բացեց այն:

Հեռուստացույցի էկրանին իրոք որ Սարոյան եղբայրներն էին: Բղավում քաշքշում էին իրար: Բայց ոչ ոք էկրանին չէր նայում, հեռուստացույցի դիմաց, պատի մեջ բացված կիսաննջարանում, մահճակալի մոտ բերանքսիվայր ընկած էր մի ծերունի՝ ճերմակ- ճերմակ մազերով, տնական մուգ շերտավոր խալաթով, ոտքերին հողաթափեր: Ավելի ճիշտ՝ հողաթափերից մեկը հագին չէր, ընկած էր մի քիչ հեռու: Ծերունու ձախ ձեռքը մարմնի տակ ծավված էր անբնականորեն, իսկ աջը մեկնված էր գետնին: Պրկված, ջղաձգված մատների մոտ ընկած էր կոտրված, դատարկ մի բաժակ...

- Ախ, աստված իմ, Վասակ եղբայր... - մրմնջաց ուսուցչուհին առաջանալով, բայց երիտասարդ տեսուչը կտրեց նրա ճանապարհը:

- Խնդրում եմ չմոտենալ և ձեռք չտալ ոչ մի առարկայի, - խստորեն ասաց նա, մոտեցավ, զգուշորեն բռնեց- շոշափեց զարկերակը և նույն զգուշությամբ էլ ձեռքը քաշեց: Հետո նորից թեքվեց, շրջեց դեմքը և նայեց կապտած շրթունքներին:

- Ախ, հիվանդ էր խեղճը, հազիվ էր շարժվում, - մորմոքում էր ուսուցչուհին, - սիրտն էր, սիրտը: Երևի ինֆարկտ է խփել, ու կողքին ոչ ոք չի եղել, որ օգնության հասնի: Ոչ ոք: Ի՞նչ սարսափելի բան... Ո՞ւմ են պետք ծեր, միայնակ մարդիկ, աստվա ծ իմ...

- Սրտից հաճա՞խ էր բողոքում, - հարցրեց Կարեն Շախուլյանը՝ աչքերով հեռախոսը որոնելով:

- Ինձ ոչինչ չի ասել, բայց դե հիմա ինչի՞ց են մեռնում մարդիկ՝ կամ սիրտն է, կամ արյունազեղում, կամ քաղցկեղ... Դրանք չե՞ն համարվում դարիս հիվանդությունները:

Իսկ Կարեն Շախուլյանը արդեն հեռախոսի մոտ էր ու մտածում էր տեսչորեն՝ շտապ օգնություն զանգահարի, թե՞ դատախազին: Կարելի էր շատ հանգիստ շտապօգնություն զանգահարել և բժիշկ հրավիրել՝ մահը հաստատելու համար: Ծեր մարդ է և ինչպես հարևանուհին է ասում՝ ծանր հիվանդ, հազիվ է կարողացել շարժվել...

Ցավալի է, բայց ի՞նչ մի տարօրինակ բան կա, որ մարդը հանկարծամահ է եղել: Բայց երիտասարդ տեսուչը չէր կարողանում խլացնել իր ներքին ձայնը... Իսկ այդ ձայնը նրան հուշում էր, որ այնուամենայնիվ, ճիշտ է դատախազություն զանգահարել: Բայց ինչո՞ւ դատախազություն այլ ոչ թե միլիցիա: Որովհետև դատախազությունում էր աշխատում տեղամասային տեսչի կարծիքով իրավաբանական ամենանշանավոր դեմքերից մեկը՝ ավագ քննիչ Հարություն Մամյանը, երիտասարդ լեյտենանտի կուռքը, որի մոտ ժամանակին իր ուսանողական պրակտիկան էր անցկացրել Կարեն Շախուլյանը:

Նա գրպանից հանեց թաշկինակը, բացեց, զգուշորեն բռնեց լսափողն ու հավաքեց Հարություն Մամյանի հեռախոսի համարը:

Հեռուստատեսության "Մարդը և օրենքը" խմբագրությունը մի անգամ հարցազրույց էր կազմակերպել ավագ քննիչի հետ, և մեկնաբանը, մագնիտոֆոնի կոճակը սեղմելով, հարցրեց.

- Ընկեր Մամյան, ինչո՞ւ որոշեցիք իրավաբան դառնալ: Նա ինքնատիպ չէր. ում հետ հանդիպում էր, առաջին այդ հարցն էր տալիս և ստանում էր գրեթե միևնույն պատասխանը.

- Շատ էի սիրում արկածային- դետեկտիվ գրքեր կարդալ... Շերլոկ Հոլմս... Դեռ մանուկ հասակից երագում էի...

Իսկ Հարություն Մամյանն ասաց.

- Հայրիկիս համար:

- Ի՞նչ, - չհասկացավ մեկնաբանը, - իրավաբան դարձաք ձեր հոր համար՞ը...

- Այո, - ասաց Մամյանը: -Հասկանում եք, հայրս բացառիկ ազնիվ ու միամիտ մարդ էր: Եվ նրան շատ էին խաբում: նրան հեշտ էր խաբելը, որովհետև երբեք մտքով իսկ չէր անցկացնում, թե որևէ մեկը, մանավանդ ընկերը, բարեկամը կամ ծանոթը կարող է խաբել իրեն: Նա երջանիկ էր իր անգիտությամբ, այնքան, որ մայրս ու ես չէինք համարձակվում նրան ճշմարտությունը, որ բոլորը տեսնում էին, իրենից բացի: Մի անգամ ես փորձեցի:

Ասացի, թե ծանոթներից մեկը խաբում է նրան: Եվ հայրս վիրավորվեց, նախատական ծանր հայացքով ինձ նայեց ու ասաց՝ ”Բա դու գետինը չե՞ս մտնում: Նա ոնց կարող է ինձ խաբել: Իրար հետ հաց ենք կերել”։ Եվ վերջ: Ու հենց այդ ժամանակ էլ որոշեցի, որ ես իրավաբան եմ դառնալու: Անպայման: Որպեսզի պայքարեմ այն մարդկանց դեմ, ովքեր խաբում են իմ հոր նման միամիտ ու ազնիվ մարդկանց:

Մեկնաբանը ձայն չհանեց, բայց երբ հաղորդումը եթեր գնաց, Մամյանի այդ խոսքը չկար: Երևի ինչ- որ մեկը մտածել էր, թե լավ բան չէ, դուրս է գալիս, որ մարդը անձնական վրիժառությունից դրդված է մասնագիտություն ընտրել...

Այդ օրը ծանր սկսվեց Հարություն Մամյանի համար: Հասմիկն առավոտյան ասաց. ”Հարություն, ժամանակ որ գտնես, դպրոց մտիր, հա՞: Գոռն ինչ- որ պատմության մեջ է ընկել, ծնող են կանչել”:

- Ինչո՞ւ դու չես գնում, Հասմիկ, - տնքաց Հարություն Մամյանը:

- Քեզ են ուզում տեսնել, - ասաց Հասմիկը: -Հատուկ խնդրել են, որ դու գնաս...

- Բա ասում ես՝ ծնող են կանչել: Ես ի՞նչ ծնող եմ: Ես ժամանակ ունե՞մ եմ ծնող լինելու: , փնթփնթաց քննիչը: -Իսկ գիտե՞ս ինչ է արել:

- Կռվել են տղաներով...

- Գո՞ռը

- Հա: Նրբերշիկ եմ տաքացրել, Հարություն ջան:

- Չեմ ուզում, խռոված ասաց քննիչը

- Իսկ սուրճ կխամե՞ս:

- Չէ, ուշանում եմ:

- Սպասիր, այդ ումի՞ց ես նեղանում, - բարկացավ Հասմիկը, - ես որևէ բան կարող եմ անել ու չե՞մ անում... Արդեն մեծ տղա է, խոսել լինու՞մ է հետը: Նրա վրա միայն խոսքը կազդի, քո...

- Էհ, , - ձեռքը թափ տվեց Հարություն Մամյանը:

Դատախազությունում խրվեց գործերի մեջ, մնաց, իսկ երբ հիշեց, որ խոսք է տվել դպրոց գնալ, արդեն ընդմիջման ժամ էր: Ավելի լավ, մտածեց նա, ժամանակ չեմ կորցնի: Հավաքեց սեղանի թղթերը, թաքցրեց անկեզ պահարանում, հագավ պիջակը և դուրս եկավ: Արդեն

ծածկել էր դուռը, երբ հեռախոսը զնգաց: Նորից բացեց դուռը, ներս մտավ ու վերցրեց լսափողը:

- Լսում եմ:

- Ընկեր Մամյան, Կարենն է:

Մամյանը կնճռոտեց ճակատը:

- Կարեն՝ Ախ, հա, լսում եմ, Կարեն:

- Ընկեր Մամյան, իմ շենքներից մեկում՝ Խանջյան փող. N8 մի ծերունի է մահացել:

- Բժիշկն ի՞նչ է ասում:

- Ընկեր Մամյան, շատ եմ խնդրում, որ դուք գաք:

Քննիչի համար ամեն ինչ պարզ էր: Կարեն Շախուլյանը հենց այնպես զանգ չէր տա:

Ուրեմն՝ պետք է:

- Անհրաժեշտ է ո՞րչ քրիզադը, - համենայն դեպս հարցրեց նա:

- Լավ կլինի, - ասաց լեյտենանտը:

- Ո՞ւմ համար լավ կլինի, Կարեն, - ակամա ծիծաղեց Հարություն Մամյանը:

Բայց, ինչպես երևում է, երիտասարդ տեղամասային տեսուչը կորցրել էր հումորը:

- Գործի համար:

- Հը՞, հարցրեց Հարություն Մամյանը:

Նրա հարցը ուղղված էր դատական բժշկին:

Լուսանկարիչ Ստեփանը պրոֆեսիոնալի հմտությամբ տարբեր դիրքերից լուսանկարում էր հանգուցյալի մարմինը: Փորձագետ Վահան Ալոյանը իր վրձիններով ու փոշիներով մատնահետքեր էր հավաքում բաժակի, դռան բռնակի, հեռախոսի լսափողի վրայից, իսկ դատական բժիշկ Արթուր Ծերունյանն արդեն ավարտել էր իր գործը, խնամքով լվացվել ու հիմա ինչ- որ տեղեկանք էր լրացնում պատուհանի գոգին:

Սեղանը զբաղված էր: Տեղամասային տեսուչ Կարեն Շախուլյանը տեղագնության արձանագրությունն էր կազմում:

- Հը՞, - հարցրեց Հարություն Մամյանը:

- Թույն է, - ասաց դատական բժիշկը:

- Հաստա՞տ, - առաջ թեքվեց քննիչը:

Արթուր Ծերունյանը ծիծաղեց՝ ցույց տալով ծխից դեղնած ատամները:

- Այնքան հաստատ, ինչքան ես Արթուր Ծերունյանն եմ և այս դժբախտ մարդու պատճառով գրկվելու եմ "Արարատի" խաղը տեսնելու հաճույքից:

- Իսկ կարո՞ղ եք ասել, թե ինչ թույն է, - ականա ժպտաց Մամյանը:

- Իհարկե, կարող եմ: Բայց գերադասում եմ ասել հերձումից հետո: Տարեք դիակը, - ասաց նա ներս մտած սանիտարներին: -Ես վերջացրել եմ:

Վասակ Սերոբյանի մարմինը պատգարակի վրա դրեցին ու դուրս տարան, տեղում, պարկետի վրա թողնելով միայն նրա կավճե ուրվագիծը:

- Հնարավո՞ր է, որ ինքնասպանություն լինի: Մարմնի վրա բռնության հետքեր կա՞ն, - հարցրեց Մամյանը:

- Ես չտեսա, - ասաց դատական բժիշկը, - տեսնենք ինչ ցույց կտա հերձումը:

- Իսկ ե՞րբ է վրա հասել մահը:

- Մոտավորապես երեսուն - երեսուն երկու ժամ առաջ:

Մամյանը հաշվեց մտքում:

- Ուրեմն անցած գիշերվա ժամը մեկից երե՞քը:

- Հավանաբար: Դե, ես գնացի, թե չէ ինձ գրելու բան չես թողնի, - ծիծաղեց Արթուր Ծերունյանը:

- Արթուր... - սկսեց Մամյանը:

- Առավոտյան կլինի սեղանիդ:

- Դու, դու, ախպեր ջան, գիտե՞ս ով ես, - հիացմունքով ժպտաց քննիչը...

- Ինչո՞ւ չգիտեմ... մի շարքային ու համեստ Հիպոկրատես, - նորից ծիծաղեց դատական բժիշկն ու ձեռքով հրաժեշտ տալով դուրս եկավ սենյակից:

Կարեն Շախուլյանը շարունակում էր գրել տեղագնության արձանագրությունը և հետն էլ ականջի ծայրով լսում էր, թե ինչ են խոսում քննիչն ու դատական բժիշկը: Լսում էր ու զարմանում, այնպես, ինչպես իր աշխատանքի առաջին օրը, թե ո՞նց են մարդիկ սովորականի նման ժպտում, խոսում ու կատակում, երբ նրանց կողքին մահ կա: Մա՛հ: Քիչ առաջ ծերունու անշունչ մարմինը պատգարակին դրեցին ու տարան: Եվ վերջ: Ոչ եղել է, ոչ կա:

- Հը՞, - այս անգամ Կարենին դարձավ քննիչը:

- Նամակ չկա, ընկեր Մամյան, - ասաց տեղամասային տեսուչը:

Մամյանը ձեռքը լեյտենանտի ուսին դրեց.

- Ճիշտ է, - ասաց նա: -Ամենատարօրինակն այն է, որ նամակ չկա: Եթե սա այն դեպքն է, ինչ երևում է առաջին հայացքից, ապա որևէ տեղ նամակ պետք է լինի:

- Ուրեմն դուք էլ եք կարծում, թե ինքնասպանություն է:

- Ես ասացի՝ եթե սա այն դեպքն է... Ես առայժմ ոչինչ չեմ կարծում: Սակայն գիտեմ, որ հարյուրից իննսունինը դեպքում ինքնասպանները նամակ են թողնում, որտեղ բացատրում են, թե ինչու են վճռել հեռանալ կյանքից և ում են մեղավոր համարում իրենց դժբախտության մեջ:

- Ուրեմն սա այն միակ դեպքն է...

- Չշտապենք, - ասաց քննիչը, - չշտապենք, Կարեն... Գուցե դեռ գտնվի նամակը...

Տեսուչը թերահավատորեն տարուբերեց գլուխը:

- Ընկեր Մամյան, դուք էիք ասում, որ նման դեպքերում ինքնասպանը նամակը ամենաբացահայտ տեղում է դնում: Առաջին հերթին՝ ճաշասեղանի վրա, որ նկատեն անմիջապես: Իսկ ես քրքրել եմ ամբողջ տունը, նույնիսկ գրքերն եմ թերթել մեկ- մեկ...

- Եվ այքի ընկնող որևէ բան չե՞ս գտել :

- Ջարմանալին այն է, որ ոչ:

- Իսկ ինչու՞ է զարմանալի...

- Բոլոր տներում, ուր ես եղել եմ, անպայման մի հատուկ թղթապանակ կա, որտեղ մարդիկ պահում են իրենց փաստաթղթերը, հին նամակները, նկարները... Այս տան մեջ չկա: Եվ դա շատ տարօրինակ է, որովհետև Վասակ Մերոբյանը զարգացած, մտավորական մարդ է... եղել: Տեսնո՞ւմ եք, ինչ գրադարան ունի: Ուրեմն տարօրինակ չէ, որ ոչ օրագիր է պահել, ոչ նշումների, ծախսերի տետր և ոչ էլ թղթապանակ...

- Հարազատներ ունի՞...

- Մի որդի միայն: Նա էլ հեռավոր ծովագնացության նավապետ է: Ես, իհարկե, հեռագիր կուղարկեմ Վլադիվոստոկ, կիսնդրեմ, որ տեղյակ պահեն... Նրա ընտանիքն այնտեղ է...

- Բա զարմանալի բան չե՞, Կարեն: Հայից ի՞նչ նավապետ: Ամենացամաքային ժողովուրդն ենք:

- Գեները հիմա շատ են հարգի, ընկեր Մամյան: Իսկ մի ժամանակ մենք ծովեր ունեցել ենք:

- Երևի, երևի եղբայր, - համաձայնեց քննիչը և հարցրեց առանց որևէ կապի.

- Տանը դրամ կամ ուրիշ արժեքներ կա՞ն:

- Վեց հարյուր ռուբլի ունի խնայողամարկդի գրքույկի մեջ և երեք տոկոսանոց փոխառության երկու տոմս, որոնցից յուրաքանչյուրի վրա ձեռքով մի անուն կա գրված: Երևի թոռների անուններ են:

- Ուրիշ ոչի՞նչ:

- Ուրիշ ոչինչ:

Հարություն Մամյանը վեր կացավ տեղից:

- Ես գնում եմ դատախազություն: Ավելի ճիշտ դատախազությունում կլինեմ մի ժամ հետո, - դպրոցը հիշելով, ավելացրեց նա: -Բոլոր նյութերի մասին նախ զեկուցիր քո պետին և ապա բեր ինձ... Եվ խնդրիր ուսուցչուհուն վաղը, առավոտյան ժամը տասին, ինձ մոտ լինի: Եղա՞վ:

- Եղավ, ընկեր Մամյան, - գլխով արեց տեղամասային տեսուչը:

Փորձագետ Վահան Ալոյանին Մամյանը հանդիպեց հենց դատախազության մուտքի մոտ:

- Հը, - սովորականի պես սպասումով հարցրեց նա:

- Բաժակի վրա տանտիրոջ մատնահետքերի բացի մեկ ուրիշի մատնահետքեր կան:

- Հետո՞ ... քարտադարանում համեմատեցի՞ր, - հարցրեց նա հենց այնպես, համոզված, որ բացասական պատասխան է ստանալու:

- Համեմատեցի, - ասաց Ալոյանը, - այնտեղից եմ գալիս: Մեզ մոտ նման մատնահետքեր չկան: Հնարավո՞ր է որ մեզնից առաջ աշխատողներից կամ հարևաններից որևէ մեկը բաժակին ձեռք տված լինի:

- Բացառված է, - գլուխը թափահարեց Մամյանը: -Կարենն այդպիսի սխալ թույլ չէր տա:

- Ի՞նչ ես կարծում, չարժե՞ ստուգել նրանց մատնահետքերը:

- Ոչ, - վճռականորեն ասաց Մամյանը: -Չարժե:

- Բայց մեկնումեկինը հո պե՞տք է լինեն այդ մատնահետքերը, - համառեց Վահան Ալոյանը: - Դրանք քեզ չե՞ն անհանգստացնում, ինչ է...

- Այն էլ ոնց են անհանգստացնում... - հոգոց հանեց քննիչը, - բայց, միևնույն է, Վահան, ես այդ պատճառով անմեղ մարդկանցից մատնահետքեր չեմ վերցնի:

- Դե, տես, - ասաց Վահան Ալոյանը: -Գիտես, որ ես միշտ պատրաստ եմ:

- Շնորհակալություն, եղբայր, - ասաց Մամյանը ու արագորեն շրջվեց, որպեսզի թաքցնի ժպիտը: Վահան Ալոյանի մասին անեկդոտ էին տարածել, թե նա այնքան է տարված իր գործով, որ իրենց տուն հյուր եկած մարդկանց մատնահետքերի լրիվ քարտադարան ունի: Թե իբր՝ որևէ խնջույքից առաջ կնոջ հետ նայում են մատնահետքերի տետրը, որպեսզի որոշեն, թե ում հրավիրեն այս անգամ:

Մամյանը մոտեցավ իր առանձնասենյակին, զարմանքով նկատեց, որ դռան մոտ դրված աթոռին նստած է Վասակ Սերոբյանի հարևանուհին, շփոթվեց և ակամա ժամացույցին նայեց:

- Բարև ձեզ, - ասաց ուսուցչուհին, - մեղավորը ես եմ, չկարողացա համբերել ու շուտ եկա:

Հարություն Մամյանը բացեց դուռը և ներս հրավիրեց ուսուցչուհուն: Նրա աչքերը, անքնությունից թե արտասունքից, խիստ կարմրած էին: Կարմրած էր նաև քթի ծայրը...

- Ամբողջ գիշեր չեմ քնել, - ասաց նա՝ թաշկինակը կրկին տանելով աչքերին: -Ինչ ահավոր դժբախտություն... Ճի՞շտ է, որ թունավորել է իրեն:

- Տիկին Արաքսյա, - հարցրեց Մամյանը, - դուք լա՞վ էիք ճանաչում հանգուցյալին:

Ուսուցչուհին մտածեց.

- Չգիտեմ ինչ ասել, ասաց նա: -Կներեք, բայց հիմա ո՞վ է ում լավ ճանաչում: Այն էլ՝ ժամանակակից շենքում ապրող հարևանները: Ի դեպ, նա մեր շենք է տեղափոխվել երեք տարի առաջ: Իր երեք սենյականոց բնակարանը տվել է բազմանդամ մի ընտանիքի, իր աշխատանքային ընկերոջը, իսկ ինքը տեղափոխվել է այստեղ:

- Որտե՞ղ էր աշխատում, - հարցրեց Մամյանը:

- Մետաղյա իրերի կոմբինատում:

- Իսկ ե՞րբ անցավ թոշակի:

- Արդեն մեկ տարի կլինի...

- Եկող- գնացողներ լինու՞մ էին:

- Երբ աշխատում էր՝ մեկ- մեկ տեսնում էի, որ հյուրեր ունի: Թոշակի անցնելուց հետո չեմ նկատել: -Նա նորից թաշկինակը աչքերին տարավ: -Ու՞մ են պետք ծեր միայնակ մարդիկ:

- Ինչ տեսակ մարդ էր Վասակ Սերոբյանը՝ կարո՞ղ էք բնութագրել:

Ուսուցչուհին նրան նայեց զարմանքով:

- Իսկ մի թե մարդուն չի բնութագրում հենց միայն այն, որ իր երեք սենյականոց բնակարանը զիջում է գործընկերոջը և ինքը ծվարում մի սենյականոց խղճուկ բնակարանում: Նման մարդկանց շատ եք հանդիպել:

- Ներողություն, - ասաց Հարություն Մամյանը: -Իհարկե դուք իրավացի եք:

- Կարիք չկա, - մեղմացավ ուսուցչուհին: -Դուք ինձ ներեք... Ես լրիվ կորցրել եմ ինձ:

- Տիկին Արաքսյա, - շտապեց առաջ անցնել քննիչը, - Վասակ Սերոբյանը ընդունա՞կ էր ինքնասպանություն գործելու:

- Դուք ինձ շատ բարդ հարց եք տալիս, - ասաց ուսուցչուհին: -Ես այդ գործում որևէ փորձ չունեմ:

- Ոչ, ոչ, - գրուցակցի ներքին հեգնանքն իբր չնկատելով, բացատրեց Մամյանը: -Ուզում եմ ասել՝ թու յլ մարդ էր, ընդունա՞կ էր արագորեն խուճապի մատնվելու, հաճա՞խ էր դժգոհում կյանքից, իր վիճակից:

- Երբեք, - ասաց ուսուցչուհին: -Նա ընդհանրապես քիչ էր խոսում: Ինձ հետ նման թեմաներով ընդհանրապես չէր խոսում: Շատ հպարտ և ինքնամփոփ մարդ էր Վասակ Սերոբյանը: Դժվար, շատ դժվար է միայնակ ապրելը: Ես դա լավ գիտեմ: Իսկ տղամարդու համար, անշուշտ, կրկնակի դժվար է: Բայց նա երբեք չէր ընկճվում, նրա վերնաշապիկները միշտ ճերմակ էին և տաբատի գծերը՝ անթերի:

- Նրա վարքագծի, կենցաղի մեջ ոչ մի տարօրինակ բան չէիք նկատում:

Ուսուցչուհին կնճռոտեց ճակատը:

- Գիտե՞ք ինչ, - ասաց, - նա գրեթե ոչ մեկի հետ չէր առնչվում, բայց տարօրինակն այն է, որ նամակներ հաճախ էր ստանում և այն էլ՝ պաշտոնական նամակներ:

- Իսկ դա ձեզ որտեղի՞ց է հայտնի:

Ուսուցչուհին զարմացավ.

Ինչպես թե որտեղից... Նրա խնդրանքով միշտ ես էի դատարկում փոստարկղը:

“Իսկ տանը թղթապանակ չկար, - մտածեց Հարություն Մամյանը: -Կարենը ճիշտ էր նկատել”:

- Ներեցեք, իհարկե, բայց չե՞ք կարող ասել, թե որտեղից էին այդ նամակները:

Ուսուցչուհին բարձրացրեց գլուխը.

- Ես չգիտեմ, - ասաց նա: -Գուցե փոստատա՞րն իմանա:

Հեռախոսը զանգեց և Մամյանին փրկեց ամաչելուց: Նա անմիջապես վերցրեց լսափողը:

- Արթուրն է, - լավեց դատական բժշկի ձայնը:
 - Հը, - ականա տեղից բարձրացավ քննիչը:
 - Թույնը թույն է, եզրակացությունը հիմա կուղարկեմ, - ասաց բժիշկը: -Մահն անկասկած ուժեղ թույնի ներգործության հետևանք է:
 - Իսկ, ինչ է, ուրիշ բան էլ կա:
 - Քաղցկեղ:
 - Ի՞նչ:
 - Եթե թույնը չկատարեր իր գործը, նա, միևնույն է, ամենաշատը երկու-երեք շաբաթվա կյանք ուներ:
 - Հաստատ, - ականա բացականչեց Մամյանը:
 - Բարեկամս, դուք սկսում եք վիրավորել իմ անձը: Ես այլևս մտադիր չեմ ունկնդրելու ձեզ: Գերադասում եմ ձեզ հետ խոսել միայն գրավոր, - հայտարարեց Արթուր Ծերունյանն ու անջատեց հեռախոսը:
 - Կարելի՞ է, ընկեր Մամյան, - դուռը կիսաբաց արեց Կարեն Շախուլյանը:
 - Դու մշտական տոմս ունես: Մտիր: -հրավիրեց քննիչը ու ավելացրեց անմիջապես, - Հը՞ ...
- Տեղամասային տեսուչը նստեց:
- Դո՞նապանը տեսել է հանցագործին:
 - Ի՞նչ հանցագործ, - հարցրեց Մամյանը:
 - Որի մատները հավանաբար հենց նույն մատներն են, որոնց հետքերը մնացել են կոտրված բաժակի վրա:

Իհարկե, այդ մատնահետքերը մնում էին գործի ամենամութ կետը: Եթե դրանք չլինեին, Հարություն Մամյանը կարող էր հանգիստ խղճով ծալել գործը, և ավարտված համարել քննությունը: Պարզից էլ պարզ էր, որ Վասակ Սերոբյանը ինչ- որ կերպ իմանալով իր անբուժելի հիվանդության մասին, վճռել էր վերջ տալ կյանքին՝ թույն ընդունելով: Այսինքն՝ ի՞նչ է նշանակում "ինչ-որ կերպը": Հարություն Մամյանը լավ գիտեր, որ որոշ բժիշկներ, "ինքնատիպություն" խաղալով, ցինիկորեն հիվանդի հարազատներին և երբեմն նույնիսկ հենց իրեն՝ հիվանդին, հայտնում են նրա ախտորոշումը: Եվ ոչ բոլորն են, որ կարող են հանգիստ սպասել իրենց մահվանը: Մարդիկ կան, որ չեն դիմանում և ինչպես Թումանյանն է գրել՝ ինքնասպան են լինում "մահու ահից": Շատ- շատ հնարավոր է, որ այդպես էլ եղած լինի: Թեև այդ մեկնակերպը ևս թույլ օղակներ ունի: Եթե Վասակ Սերոբյանը թունավորել է

իրեն, որտե՞ղ է այն սրվակը, որի մեջ պահել է թույնը: Եվ ինչո՞ւ իր վարմունքը բացատրող նամակ չի թողել: Ինչո՞ւ կտակ չի գրել: Չէ՞ որ որդի, թոռներ ունի: Մարդը չի կարող հենց այնպես, անշշուկ ու անձայն հեռանալ աշխարհից... եթե իր կամքով է հեռանում:

- Գնա ու այդ դռնապանին ինձ մոտ բեր, - Կարեն, - տեղից բարձրացավ քննիչը:

- Դռան ետևում է, ընկեր Մամյան, - ասաց տեղամասային տեսուչը: - Կանչե՞մ:

Մամյանը հիացած տարուբերեց գլուխը: Ներս մտավ Խաչիկ եղբայրը՝ գրեթե տոնականորեն հագնված, սպիտակ վերնաշապիկով, մուգ փողկապով և սև կոստյումով: . Դեռ դռնից օծանելիքի սուր ու տհաճ հոտ եկավ, տարածվեց սենյակում: Մամյանն ակամա ժպտաց, «Ճիշտ էր ասում այն օրը Հասմիկը, հիմա դռնապանին ու մինիստրին հագուստով իրարից տարբերելը հեշտ չէ»:

- Նստեք և պատմեք մանրամասն, - առաջարկեց քննիչը: - Բայց նախ՝ ներողություն, ձեզ ինչպե՞ս դիմեմ, ի՞նչ է ձեր անուն-ազգանունը:

- Ինձ մեծից փոքր Խաչիկ եղբայր են ասում, - հպարտ- հպարտ ասաց դռնապանը:

- Թող այդպես լինի, - ծիծաղեց քննիչը, - պատմեք, Խաչիկ եղբայր:

Խաչիկ եղբայրը տեղամասային տեսուչին նայեց, տեսավ, որ գլխով է անում հավանությամբ, նստեց, երկու ձեռքով ետ տարավ մազերն ու սկսեց,

- Գիշերը քունս չէր տանում: Այսինքն՝ ճիշտը որ ասեմ, սկզբում տանում էր, բայց գիշերվա կիսին էնքան հետաքրքիր էր, որ քունս փախավ: Իմ կարծիքով, ճիշտ բան չեն անում, բա կես գիշերին էդքան հետաքրքիր ու վախենալու կիսն ցույց կտան: Մարդիկ առավոտները քնի մեջ օրորվելով են գործի գնում: Ես հո տեսնում եմ... էլ նրանց աշխատածն ինչ պիտի լինի... Մի երկու ժամ էլ իրար կպատմեն կիսնն ու թե որ...

Քննիչը զգաց, որ առանց իր միջամտության չի լինի:

- Ժամը քանիսին դուրս եկաք տնից:

- Ժամին չեմ նայել, - ասաց Խաչիկ եղբայրը, - բայց դեռ մութ էր... Ուրեմն՝ իջա ներքին հարկ, առա ցախավելս ու վեղորս, փողոց դուրս եկա և սկսեցի իմ գործը: Սկսեցի ու տեսա, որ շատ շուտ եմ սկսել, , ,

- Ինչի՞ց ենթադրեցիք:

- Արշոն չկար, - ասաց դռնապանը:

- Ջրող ավտոմեքենայի վարորդն է, - բացատրեց տեղամասային տեսուչը:

- Հա՛, - հաստատեց Խաչիկ եղբայրը: - Արդեն վերջացնում էի գործս՝ անձրև սկսեց: Որ շատ ուժեղացավ, ետ դարձա, ուզեցի մտնեմ պողեզը. Ու մեկ էլ էն տեսա, որ ինձնից առաջ մեկը

դուրս եկավ պողեզդից, պլաշը հագին ու կամաց- կամաց, պատերին քսվելով գնաց... Միրսու կասկած ընկավ, ետևից գնացի... . Մութ էր, անձրև էր գալիս, , ,

- Խաչիկ եղբայր, ասա թե ինչ էր ասում... - չդիմացավ Կարեն Շախուլյանը:

- Ո՞ւմ էր ասում, - հարցրեց քննիչը:

- Ինքն իրեն էր խոսում, ինքն իրեն, - ասաց դռնապանը՝ օձիքը խեղդող փողկապը ձգելով, - ասում էր՝ ... հեռի ձեզանից... ասում էր՝ «Ես քո հերն եմ անիծել... Հո պրծա... Հո պրծա քեզանից, , . Ես քո հերն եմ անիծել»:

Հարություն Մամյանը զգաց, որ շունչը կտրվում է և ինքն էլ թուլացրեց փողկապը:

- Ո՞վ էր, ինչ մարդ էր- հարցրեց արագորեն:

- Մենակ մեջքը տեսա - մեղավոր ձայնով ասաց դռնապանը: - Գոռացի ետևից, ասացի՝ «Ի՞նչ է պատահել, ախպեր»... Լսե՞ց, թե չլսեց... Վայ թե լսեց... Հաստատ լսեց... Համա շուռ չեկավ... թողեց գնաց: Հա, թևի տակին էլ պապկայի նման մի բան կար:

- Ի՞նչ մազեր ուներ, գոնե դա տեսա՞ք:

- Որտեղի՞ց: Պլաշի գլխարկը աչքերին էր քաշել: Ախր թե իմանայի, թե իմանայի... Բա չէի՞ վազի ու... հեռի ձեզանից... հերն անիծելի... Բայց ի՞նչ իմանայի...

- Դեպի ո՞ր կողմը գնաց: .

- Վարդան Մամիկոնյանի արձանի կողմը...

- Ոչինչ չզգացի՞ք, կերպարանքը ծանոթ չերևա՞ց:

- Անծանոթ էր: Մեր շենքում եղախսի մարդ չկա: Հաստատ:

- Եթե հանկարծ տեսնեք նորից, կճանաչե՞ք:

Խաչիկ եղբայրը հանեց փողկապը և թեթևացած շունչ քաշեց.

- Ի՞նչ ասեմ: Որ էլի եղպես պլաշը հագին պողեզդից դուրս գա՝ վայ թե ճանաչեմ:

- Լավ, - հառաչեց Մամյանը:- Ծնորհակալություն ձեզ, Խաչիկ եղբայր: Եթե պետք լինի, նորից կանհանգստացնենք ձեզ:

- Բա դա խո՞սք է, - զարմացավ դռնապանը ու դուրս եկավ ակնհայտ ուրախությամբ:

Կարեն Շախուլյանը հարցականորեն քննիչին էր նայում: Եվ Հարություն Մամյանն ասաց.

- Դժվար բան է:

Ու որովհետև շատ բարկացած էր իր որդի Գոռի վրա, որի պատճառով նախորդ օրը հանցագործի նման կես ժամ գլխահակ կանգնել էր նրա մեծամիտ դասատուի առջև, ու որովհետև շատ բարկացած էր ընդհանրապես երիտասարդ սերնդի վրա, որը կարծես թե պատասխանատվության ոչ մի զգացում չունի և միայն թեթևորեն պահանջում է, դատախազության քննիչը չդիմացավ ու կծու ժպտալով ասաց Կարեն Շախուլյանին.

- Լեյտենանտ, նման դեպքերում աշխատիր գոնե երկու վկա ունենալ, որ մեկը կասկածյալին թիկունքից տեսած լինի, մյուսն էլ դիմացից:

- Միջանցքում սպասում է, - ասաց տեղամասային տեսուչը:

- Ո՞վ:

- Ով անձրևանոցով մարդուն դիմացից է տեսել:

Քիչ էր մնում, որ Հարություն Մամյանը քրքջար:

- Ինչպե՞ս թե սպասում է: Ներս կանչիր, տարօրինակ մարդ: Ներս կանչիր, ախպեր ջան:

Անուն, ազգանուն, հայրանուն:

Մեղինե Գևորգի Մուրադյան:

- Որտե՞ղ եք ապրում:

- Խանջյան փողոցի N 8 շենքի 3- րդ մուտքի N 22 բնակարանում:

- Դա ո՞ր հարկն է:

- Վեցերորդ:

- Պատուհանները փողոցի՞ն են նայում:

- Այո, - զարմացած հաստատեց Մեղինե Մուրադյանը:

- Եվ ի՞նչ եք տեսել այդ օրը պատուհանից:

- Իսկ ո՞վ է ասում, թե պատուհանից եմ տեսել: Ընկեր թաղային, ես ձեզ այդպիսի բան ասե՞լ եմ:

- Չի ասել, - հաստատեց Կարեն Շախուլյանը:-

- Դե, ուրեմն պատմեք այն, ինչ տեսել եք, - համաձայնեց Հարություն Մամյանը:

- Պատմեմ, բայց... բայց խնդրում եմ... խոստացեք, որ չեք պատժի ինձ:

- Ինչի՞ համար, - հարցրեց քննիչը:

- Չգիտեմ՝ գիտե՞ք չգիտե՞ք, բայց մեր շենքը տարօրինակ շենք է: Բակից եթե հաշվենք՝ վեց հարկ է, իսկ եթե փողոցից հաշվենք՝ չորս:

- Հետո՞ :

- Հետո այն, որ շատ դժվար է առավոտ շուտ աղբի ծանր դուլերը ձեռքիդ վեց հարկ իջնելն ու բարձրանալը: Իսկ մեր տան աղբ թափողը ես եմ:

- Հասկացա, - գլխով արեց քննիչը: - Դուք գերադասում եք ընդամենը չորս հարկ իջնել և աղբը թափել փողոցի փոքրիկ աղբարկղում:

- Ճիշտ է, - մրմնջաց Մելինե Մուրադյանը: - Բայց դուք խոստացաք...

Քննիչը ժպտաց.

- Դա լեյտենանտ Շախուլյանի բնագավառն է: Հետո՞ :

- Ես էլ գիտեմ, որ չի կարելի, բայց մեկ-մեկ... Ի՞նչ անեմ, աղբի կուտակում ունեմ: Հողերս այնպես են ցավում, մանավանդ ամպամած, անձրևոտ օրերին... Ոնց որ ծնկներիս մեջ սուր ասեղներ խրեն...

- Առաջ անցիր, տիկին Մելինե, - շտապեցրեց տեղամասային տեսուչը:

- Ախր պիտի բացատրեմ, չէ՞, - վիրավորվեց Մելինե Մուրադյանը: - Չպիտի՞ բացատրեմ, թե ինչու էի նայում լուսամուտից:

- Ուրեմն, այնուամենայնիվ, ես իրավացի էի, - ուրախացավ քննիչը: - Պատուհանից եք տեսել:

- Հա, բայց ես հո նրան չէի նայում, ընկեր քննիչ: Գլուխս հանում էի ու ներքև նայում, որ տեսնեմ՝ մարդ կա՞, չկա՞, որպեսզի աղբն իջեցնեմ, Ու երբ որ սկսեց անձրև գալ, ուրախացա: Ասացի էլ ոչ ոք չի տեսնի:

- Գիշերվա մեկը-երկու՞սն էր:

- Չէ, ի՞նչ եք ասում, տասնմեկը հազիվ լիներ:

- Բայց եթե չեմ սխալվում՝ անձրևը գիշերն է եկել, նույնիսկ՝ առավոտվա կողմը...

- Գիշերը չգիտեմ, գուցե և եկած լինի, բայց երեկոյան հաստատ գալիս էր: Ես վախից լվացքս էլ հավաքեցի ու նոր իջա...

- Իսկ այդ մարդը...

- Հա, երբ լուսամուտից նայում էի, որ տեսնեմ խաղաղվե՞լ է փողոցը, թե չէ, մեկ էլ նկատեցի, որ տրամվայի գծերից այն կողմ, այգու ծառի տակ անձրևանոցով մի մարդ է կանգնած ու

նայում է մեր շենքին: Գլուխն էլ ծածկված էր նույն սև անձրևանոցի գլխարկով: Ասացի՝ թող հեռանա, նոր կիջնեմ, ի՞նչ իմանաս ով է: Մեկ էլ տեսար միլի...

Մելինե Մուրադյանը լռեց միանգամից ու կարմրատակեց:

- Հասկանալի է, հետո", - ժպտաց քննիչը:

- Քիչ անց նորից նայեցի՝ դարձյալ այնտեղ էր: Կանգնել ու մեր շենքին էր նայում:

- Չէ՞ր զգացվում, թե որ կողմն է նայում:

- Չէ, համարյա ոչինչ չէր երևում, համ մութ էր, համ էլ անձրև էր սկսվել:

- Հետո, հետո... .

- Այսպես մի քանի անգամ նայեցի, բայց նա շարունակում էր կանգնած մնալ նույն տեղում: Հետաքրքրությունս շատ շարժվեց, ի վերջո մարդ ենք, չէ : Մտածում էի, թե դա ով կլինի և ի՞նչ գործ ունի մեր շենքի հետ: Գուցե գո՞ղ է, գուցե... .

- Ու դրա համար էլ, աղբի դույլը վերցնելով, ցած իջաք:

- Հա... Չէ, չէ, աղբը, միևնույն է, թափելու էի, դիտմամբ մոտեցա հենց այն աղբարկղին, որից ոչ շատ հեռու կանգնած էր այդ կասկածելի մարդը ու նայեցի նրա կողմը: Միայն մի վայրկյան տեսա, հաջորդ վայրկյանին թաքնվեց ծառի ետևում: Բայց այդ մի վայրկյանն էլ բավական էր ինձ: Զգացի, որ շատ ծանոթ մարդ է...

- Ծանոթ, ո՞վ էր, - գրեթե գոռաց Մամյանը: Մելինե Մուրադյանը վախեցած նրան նայեց:

- Սկզբում գլխի չընկա: Միայն զգում էի, որ ծանոթ է, որ ես երբեմն-երբեմն տեսնում եմ նրան: Բայց թե որտեղ էի տեսնում, չէի կարողանում հիշել:

- Հետո, հիշեցիք, ո՞վ էր, - գրեթե հուսահատ, ասելությամբ շշնջաց քննիչը:

- Սկզբում չհիշեցի, - անվրդով շարունակեց Մելինե Մուրադյանը: - Դույլը դատարկեցի, բարձրացա վեր, նորից նայեցի պատուհանից ու ի՞նչ տեսնեմ՝ չկա: Անհետացել է: Շատ զարմացա, ուր գնաց, ինչպես հասցրեց, մտածում էի: Չղիմացա, կրկին դույլը ձեռքս առա ու ցած իջա:

Հարություն Մամյանը այլևս չէր նայում նրան: Գլուխն ավերի մեջ էր առել ու սեղմել ատամները:

- ... Հենց նոր էի մուտքից դուրս եկել, երբ տեսա, որ այդ մարդը գլուխը կռացրած մտավ կողքի մուտքը: Ու հենց որ նրան տեսա կռացած գլխով հիշեցի անմիջապես... . որովհետև երբ նա խոսում է մարդկանց հետ, միշտ կռացնում, ուսերի մեջ է առնում գլուխը... . Ու ես դրանից միշտ տհաճություն էի զգում: Մի անգամ նույնիսկ մեր հարևանուհուն ասացի...

- Ո՞վ էր այդ մարդը, - սպառնալիորեն տեղից բարձրացավ Հարություն Մամյանը:

- Կապի բաժանմունքի պետը, - տեղից վախեցած վեր կացավ նաև Մելինե Մուրադյանը: - Մեր կապի բաժանմունքի պետը: Ազգանունը չգիտեմ, բայց ամեն անգամ, որ կապի բաժանմունք էի մտնում...

- Ո՞ր մուտքը մտավ:

- Մեր կողքի, երկրորդ: Որ մտնում էի հեռագիր տալու կամ որևէ ծանրոց ուղարկելու, , ,

- Թևի տակ թղթապանակ կամ նման բան կա՞ր:

- Ե՞րբ...

- Այդ օրը, երբ շենք էր մտնում... Այդ օրը...

- Չէ, կարծես թե չկար: Իսկ ընդհանրապես երբ տեսնում էի դրսում՝ կաշվե պայուսակ էր լինում: Գուցե անձրևանոցի տակ էր պահել, բայց դժվար թե, որովհետև, եթե լիներ...

- Շնորհակալություն, տիկին Մելինե, դուք ազատ եք, - հատ- հատ արտասանեց քննիչը: - Դուք ազատ եք:

- Ուրեմն կարող եմ գնա՞լ: Որովհետև երբ Խաչիկ եղբայրը պատմում էր, թե խեղճ ձերուկի մահվան օրը ոնց է տեսել շենքից դուրս եկող մի կասկածելի մարդու, ես էլ անմիջապես հիշեցի, որ նրան ներս մտնելուց եմ տեսել: Խաչիկ եղբայրն էլ ասաց, որ թաղայինին գտնեմ ու ես էլ...

- Շատ-շատ շնորհակալություն,- աչքերը փակած ասաց քննիչն ու դառնալով տեղամասային տեսչին, կարգադրեց, - լեյտենանտ, տիկին Մելինեից ձեր սենյակում բացատրություն վերցրու ն...

- Արդեն վերցրել եմ, - ասաց Կորեն Շախուլյանը և կաշվե թղթապանակից մի թուղթ հանելով, դրեց սեղանին, քննիչի առջև:

- Դուք ազատ եք, Մելինե Մուրադյանին ասաց քննիչը, և երբ նա վերջապես դուրս եկավ, շունչ քաշեց թեթևացած, տրորեց ճակատն ու ասաց, - Կարեն, երդվում եմ, եթե մի օրվա մեջ երկու այսպիսի վկաներ լինեն, ես էլ հաճույքով թույն կխամեմ:

Տեսուչը ծիծաղեց սրտանց:

- Բա ե՞ս ինչ ասեմ, մինչև այս բացատրությունը վերցրեցի, հանեց հոգիս, ամբողջ տոհմի կենսագրությունը պատմեց:

- Ուրեմն՝ կապի բաժանմունքի պետը... Դու ճանաչո՞ւմ ես նրան... Ո՞վ է, ինչ մարդ է

- Հայկազ Վարոսի Ավետիսով... ծնվել է 1930 թվականին, Բաքվում: Ավարտել է տեղի կապի տեխնիկումը, իսկ հետո հեռակա, Ռոստովի կապի ինժեներների ինստիտուտը:

Կուսակցության անդամ է 1956 թվականից, ամուսնացած է, ունի մի տղա, որն իր ընտանիքով

առանձին է ապրում: Կինը՝ Ռոզա Ավետիսովան, այս տարի կենսաթոշակի է անցել կուսշրջկումից, որտեղ երկար ժամանակ հաշվառման սեկտորի վարիչն է եղել...

Հարություն Մամյանը ծիծաղեց,

- Եթե այդ բոլորին ավելացնես, թե նա հիմա կանգնած սպասում է միջանցքում...

- Ոչ, ոչ, - ծիծաղեց տեսուչը, - չհամարձակվեցի հրավիրել: Մտածեցի, թե գուցե դուք էք ուզում նրան այցելել, ընկեր Մամյան:

- Կեցցես, տղաս, - սրտանց ասաց քննիչը: - Կեցցե՛ս:

Խաչիկ եղբայրը կոշտացած ափով, գրեթե շոյելով, պոկում էր խաղողի որթի չորացած տերևները, էտի մկրատով հեռացնում արմատի մոտ աճած փոքրիկ մատերը, նոր ծլած տերևներն ու մազմազակները և իր մանկությունն էր հիշում Օշականում: Ի՛նչ այգի ունեին... ոնց անցավ կյանքը: Նա նայում էր իր փերին ու հոր ձեռքերն էր հիշում, որ ճիշտ այսպես, հենց այսպես, միայն թե շատ ավելի վարժ ու վարպետորեն էտում էին խաղողի վազերը: «Վա՛խ, հեր ջան, վա՛խ, հեր ջան», - հառաչեց Խաչիկ եղբայրը: Հետո օրորեց գլուխը մտածելով, որ ինքը հիմա հայր էլ է, պապ էլ է, բայց էլի հեր է կանչում ու հառաչում է, որովհետև եթե ապրում է, ուրեմն դեռ երեխա է» Որ ինքը հազար տարի է, ինչ դուրս է եկել Օշականից, դարձել երևանցի բանվոր, հետո թոշակի է անցել, ձեռքն առել ցախավելն ու դույլը և դռնապան է աշխատում, բայց միշտ, միշտ աչքն ու միտքը գյուղի կողմն են, անհնարին է, չի կարողանում մոռանալ իրենց խաղողի այգին... Չի կարողանում քաղաքացի դառնալ... Թե չէ՛ ո՞վ էր ստիպում նրան գնալ Օշականից մատեր բերել Երևանի Խանջյան փողոցի շենքերի ճակատային մասում խաղողի վազեր տնկել ու բարձրացնել-բարձրացնել, տանել հասցնել չորրորդ-հինգերորդ հարկերը: Կարող էր ծաղիկներ ցանել, շատ ավելի հեշտ էր, և դեկավարությունը շատ ավելի գոհ կլիներ: Բայց՝ չէ, խաղող էր տնկել, ջրում-մշակում էր ամեն տարի, հարյուր տեսակ սրսկումներ էր կատարում ու ստանում հրաշալի բերք, որից ինքը ոչ մի օգուտ չունեի: Է՛, չունեի՝ չունեի, ի՞նչ անենք: Բայց հո խաղողի հետ գործ ուներ: Հո իր մի անկյունն ուներ, որտեղ «Վախ, հեր ջան» էր հառաչում և վերջապես հնարավորություն ստանում երբեմն-երբեմն սուտի-մուտի տրտնջալու, թե աշխարհի բանն է այդպես, թե ամեն ինչ էլ խաղողի վազի նման է... Մարդիկ աշխատում են ներքններում, չարչարվում ու տանջվում են, իսկ բերքը ուրիշներն են վայելում վերններում:

Խաչիկ եղբայրը կռացավ, վազի թասակի միջից մատներով ճանկոտտելով հանեց կտրած ու պոկած- թափած ճյուղերն ու կեղևները, լցրեց դույլի մեջ, տեսավ, որ մի քանի մանր-մուր կեղևներ էլ են մնացել, մատներով մի անգամ էլ ճանկոտտեց - հավաքեց դրանք ու հանկարծ զգաց, որ ձեռքի մեջ ողորկ, օտարոտի մի բան կա: Բացեց փորձ փոքրիկ մի սրվակ էր փոքրիկ կափարիչով, ու ներսում մի քիչ, շատ քիչ բաց դեղին գույնի հեղուկ կար: Մի պահ սրվակը ուզեց զցել դույլի մեջ, բայց հանկարծ հիշեց, որ այն օրը, այն օրը, երբ միլիցիայի աշխատողները տակնուվրա էին անում թոշակառու Վասակ Մերոբյանի բնակարանը, առաջին հերթին հենց ինչ- որ սրվակ էին որոնում: Հոգնած աչքերով քննիչն ասում էր.

- Շիշը գտեք, շիշը գտեք, ա՛յ տղերք, թույնը ինչ-որ բանի մեջ լցված է եղել, հո երկնքից չի՞ թափվել:

Բայց սրվակ ոչ մի տեղ չկար:

Իսկ գուցե հենց սա՞ է: Գուցե հենց այս շշի մեջ է եղել այն թույնը, որն ընդհատել է խեղճ ծերունու կյանքը:

Խաչիկ եղբայրը դեպի աջ նայեց: Դե, իհարկե, հենց այն մուտքից դուրս եկավ անձրևանոցով մարդը, եկավ ու պատերին քսվելով անցավ հենց այս տեղով: Նրա համար ի՞նչ մի դժվար բան էր ք մեջ աննկատելիորեն թառմայի վազի թասակի մեջ նետել թույնի սրվակը:

Ուրեմն սրա մեջ թո՞ւյն է: Խաչիկ եղբայրը վախից ձեռքից բաց թողեց սրվակը, Հետո ավելի վախեցավ՝ մտածելով, թե կջարդվի ու պարունակությունը լրիվ կթափվի, գրպանից հանեց շերտավոր թաշկինակը, զգուշությամբ բռնեց սրվակի ծայրը և աջ ձեռքն առաջ մեկնած՝ կամաց- կամաց քայլեց դեպի տեղամասային տեսչի հենակետ- առանձնասենյակը :

Հայկազ Վարոսի Ավետիսովը ինչ- որ հաշվումներ էր կատարում գրասեղանին դրված էլեկտրոնային փոքրիկ հաշվիչ մեքենայի վրա և միաժամանակ նեղլիկ առանձնասենյակի կիսաբաց դռնից հետևում, թե ինչ է կատարվում կապի բաժանմունքի սրահում:

Իսկ սրահում գրեթե այցելուներ չկային: Գրեթե, որովհետև մեկը կար, բայց նա էլ կարծես թե գործ չուներ կապի բաժանմունքի հետ և ներս էր մտել ավտոմատ- հեռախոսով խոսելու համար: Եվ բավականին էլ երկար խոսում էր: Հայկազ Ավետիսովը տանել չէր կարողանում, երբ երկար ժամանակ զբաղեցնում էին հեռախոսը և նման դեպքերում հաճախ էր միջամտում, դիտողություն անում: Բայց հիմնարկում հիմա ոչ ոք չկար, մինչև աշխատանքի ավարտը մնում էր դեռևս տասնհինգ րոպե և այդ ամենից բացի, հեռախոսով խոսող մարդու կեցվածքի մեջ ինչոր ազդեցիկ բան կար, որ ետ էր պահում կապի բաժանմունքի պետին:

Այցելուն ի վերջո ցած դրեց լսափողը, բայց Հայկազ Ավետիսովը զարմանքով նկատեց, որ նա ոչ թե դեպի դուռն է գնում, այլ ընդհակառակը մոտենում է իր առանձնասենյակին:

- Բարև ձեզ, ընկեր Ավետիսով, - ասաց այցելուն:

- Բարև ձեզ... Բայց ինձ թվում է, թե ես ձեզ չեմ ճանաչում, - տեղից բարձրացավ Ավետիսովը:

- Իսկ ես ձեզ ճանաչում եմ, - անվրդով ասաց այցելուն մեկնելով փաստաթուղթը: - Ես ձեր շրջանի դատախազության ավագ քննիչն եմ: Հարություն Մամյան:

- Ավագ քննի՞չը, - նկատելիորեն հուզվեց կապի բաժանմունքի պետը: - Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել,՝

Հարություն Մամյանը ժպտաց.

- Ձեր անկեղծ խոստովանությամբ:

Հայկազ Ավետիսովը իր տարիքին անհարիր թեթևությամբ ակնթարթորեն դեպի դուռը նետվեց, բայց Մամյանը կարծես թե սպասում էր դրան, որովհետև հասցրեց մի ձեռքով փակել դուռը, իսկ մյուսով ամուր բռնել կապի բաժանմունքի պետի արմունկը.

- Հանգիստ, հանգիստ, - խստորեն ասաց նա:- Այդ ու՞ր...

- Ուզում էի ծածկել դուռը, որպեսզի մեզ չլսեն, - քաթանի նման ճերմակած դեմքով մրմնջաց կապի բաժանմունքի պետը:

- Նստե՛ք, - կարգադրեց քննիչը:

Հայկազ Ավետիսովը փլվեց իր աթոռին՝ վախեցած աչքերը քննիչից չկտրելով:

- Այստե՞ղ իսուենք, թե գերադասում եք քննիչի առանձնասենյակը:

- Այստեղ, այստեղ, - ձեռքերը կրծքին տարավ կապի բաժանմունքի պետը: - Միայն թե կամաց, խնդրում եմ: Միայն մի վայրկյան: Աշխատանքն ավարտված է: Թույլ տվեք աշխատողներին տուն ուղարկել և փակել ընդհանուր դառը:

Քննիչը տատանվեց.

- Լավ, - ասաց նա, - միայն թե առանց հիմարությունների: Տարիքով մարդ եք, ամոթ է...

Նա կիսաբաց դռնից տեսավ, թե Հայկազ Ավետիսովը ինչպես է փութով ճանապարհում իր աշխատակիցներին և փակում դուռը: Իսկ երբ միանգամից թուլացած, հազիվ քաշ տալով ոտքերը, ետ եկավ ու ընկավ իր աթոռին, քննիչն անմիջապես հարցրեց.

- Հայկա՛զ Ավետիսով, ի՞նչ հարաբերությունների մեջ եք եղել Վասակ Սերոբյանի հետ:

- Ես այդպիսի անուն- ազգանունով մարդ չեմ ճանաչում, - հանկարծ կարծես թե հանգստացած ասաց կապի բաժանմունքի պետը:

- Լավ հիշեք, - հեզանքով ժպտաց քննիչը:- Կամ գուցե դուք նրան ա՞յլ անուն-ազգանունով գիտեք:

- Ո՞ւմ,

- Վասակ Սերոբյանին: Գուցե օգնե՞մ ձեզ: Վաթսունմեկ տարեկան, թոշակառու, աշխատել է մետաղյա իրերի կոմբինատում, որպես ավագ տնտեսագետ: Գրանցված է Խանջյան փողոցի N 8 շենքում:

- N 8- ո՞ւմ:

- N 8- ում, Հիշեցի՞ք... Դե, ուրեմն, շարունակեք... Ի՞նչ հանգամանքներում եք ծանոթացել...

- Ես Վասակ Սերոբյան անուն- ազգանունով որևէ մեկի չեմ ճանաչում:

Հարություն Մամյանը մտածեց.

- Լավ, հարցը այլ կերպ տանք: Որտե՞ղ եք եղել երեք օր առաջ, ապրիլի 20- ին, երեկոյան ժամը տասից մինչև առավոտվա ժամը չորսը:

Կապի բաժանմունքի պետը գունատվեց կրկին.

Մեր տանը: Որտե՞ղ:

- Լավ մտածեք:

- Ես մտածելու բան չունեմ, - հանկարծ բարկացավ նա: - Հարցնում եք, պատասխանում եմ:

- Որևէ մեկը կարո՞ղ է հաստատել, որ իրոք այդ ժամերին տանն եք եղել:

- Ոչ:

- Ինչո՞ւ, - հարցրեց քննիչը: - Մի՞թե տիկին Ռոզան տանը չէր:

Հայկազ Ավետիսովը քննիչին նայեց ապշած.

- Դուք իմ տիկնոջը որտեղի՞ց գիտեք, - հարցրեց նա:

- Հարցերը ես եմ տալիս, - խստացավ Հարություն Մամյանը:

Կապի բաժանմունքի պետը շփոթվեց, .

- Ճիշտ է, - խոնարհ ասաց նա: - Ռոզան տղայիս տանն էր մնացել: Հիվանդ է թոռս:

- Ռուբե՞նը:

- Սաթիկը, - իրեն լրիվ կորցրած, ճշտեց Հայկազ Ավետիսովը:

- Իսկ դուք, ուրեմն, տանն եք եղել:

Կապի բաժանմունքի պետը գլխով արեց:

- Իսկ եթե ես առնվազն երկու վկա բերեմ, որոնք նայելով ձեր աչքերին, հաստատեն, որ սույն թվականի ապրիլի 20-ից 21- ը ձեզ տեսել են Խանջյան փողոցի N 8 շենքում, ի՞նչ կասեք:

- Կասեմ, որ նրանք զրպարտում են:

- Հանուն ինչի՞:

- Ի՞նչ իմանամ: Հանուն ինչի՞ են մարդիկ զրպարտում իրար: Հանուն ինչի՞ են մարդիկ հետևում ու հետապնդում իրար: Հանուն ինչի՞ են ես աշխատանքից հետո մնացել այստեղ ու պատասխանում ձեր հարցերին: Հանուն ինչի՞ է, որ դուք ինձ չեք հավատում:

Հարություն Մամյանը զարմացած դիմացինին նայեց.

- Ահա թե ինչ... Իսկ ինձ թվում էր, թե դուք արդեն պատրաստ եք խոստովանել ամեն ինչ և հենց դրանով էլ թեթևացնել ձեր մեղքը...

- Ես ոչ մի մեղք չունեմ, , , գործ գտեք ձեզ համար:

- Լավ, - գլխով արեց քննիչը: - Ուրեմն պայմանավորվենք այսպես, կամ դուք հավաստի վկաներով ապացուցում եք, որ ապրիլի 20- ի լույս 21- ի գիշերը տանն եք եղել, կամ էլ ես ձեզ հենց հիմա դատախազություն եմ տանում և մեղադրանք առաջադրում սպանության համար:

- Սպանության համա՞ր, - տեղից վեր թռավ Հայկազ Ավետիսովը, - դուք հո չեք խելագարվել:

- Աշխատեք հանգիստ լսել ինձ ու հասկանալ: - Հարություն Մամյանը կապի բաժանմունքի պետի ուսը սեղմելով, նրան նորից արո՞ռին իջեցրեց, իսկ ինքը մոտեցավ կախիչին, որից կախված էր կնգուղավոր սև մի անձրևանոց: - Ուրեմն այսպես, ապրիլի 20- ի գիշերը Խանջյան փողոցի N 8 շենքի 9- րդ բնակարանում տեղի է ունեցել սպանություն: Անհայտ մարդասպանը թունավորել է տարեց թոշակառու Վասակ Սերոբյանին...

- Բայց ես...

- Լռեք: Բնական է, որ կատարվում է քննություն, փնտրվում են ականատեսներ: Եվ ահա բնակիչներից մեկը հայտնում է, որ երեկոյան ժամը 10-ից 11-ի սահմաններում տեսել է ձեզ այս սև անձրևանոցով N 8 շենքի դիմացի Օղակաձև այգու ծառերից մեկի տակ կանգնած: Դուք երկար ժամանակ հետևելիս եք եղել շենքին, ապա արագորեն մտել եք այն մուտքը, որտեղ ապրում էր հանգուցյալ Վասակ Սերոբյանը...

Կապի բաժանմունքի պետը կրկին վեր ցատկեց.

- Սպասեք, ես...

- Դուք սպասեք, - բարկացավ քննիչը: - Սպասեք, լսեք և նորից եմ կրկնում, , աշխատեք հասկանալ: Այնուհետև ձեզ տեսնում է շենքի դռնապանը, երբ նույն այս սև անձրևանոցի մեջ, առավոտյան դուրս եք գալիս նույն մուտքից և անհետանում: Եվ ահա ճիշտ նույն ժամերին, նույն մուտքի N 9 բնակարանում ինչ- որ մեկի ձեռքից թույն ընդունելով, մեռնում է թոշակառու Վասակ Սերոբյանը: :Ճիշտ նույն ժամերին: Հիմա տեսնում եք, որ մեր ապացույցները ծանրակշիռ են: Հիմա համոզվում եք, որ մենք իրավունք ունենք կասկածելու ձեզ, Հայկազ Ավետիսով: Այսքանից հետո նորից կարո՞ղ եք պնդել, որ վերոհիշյալ ժամերին չեք եղել խանջյան փողոցի N 8 շենքում:

- Չեմ կարող, - աչքերը փակ շշնջաց կապի բաժանմունքի պետը: - Չեմ կարող:

- Ուրեմն ընդունո՞ւմ եք, - առաջ թեքվեց քննիչը:

- Ընդունում եմ:

- Ճիշտ եք անում, - ասաց քննիչը, - թեև շատ ավելի ճիշտ կլինեք, եթե ինքներդ խոստովանեիք: Իսկ հիմա թուղթ ու գրիչ վերցրեք և առանց շտապելու, մանրամասն գրեք, թե երբ և ինչ հանգամանքներում եք ծանոթացել հանգուցյալ Վասակ Մերոբյանի հետ, ի՞նչ է տեղի ունեցել ձեր միջև և ինչո՞ւ որոշեցիք թունավորել նրան:

Կապի բաժանմունքի պետը բարձրացրեց գլուխը.

- Ես այդ մարդուն չեմ թունավորել, - ասաց նա: - Ես ոչ-ոքի չեմ թունավորել...

- Նորից սկսեցիք: - Հարություն Մամյանը այլևս չգիտեր ինչ անել: -Այդ դեպքում ասացեք, թե ինչո՞ւ էիք գնացել նրա տուն:

- Ես նրա տանը չեմ եղել, - կամացուկ ասաց Ավետիսովը:

- Բա որտե՞ղ եք եղել, գրողը տանի:

- Չեմ կարող ասել, - գլուխը ձեռքերի մեջ առավ կապի բաժանմունքի պետը: - Ավելի շուտ՝ կընդունեմ, թե ես եմ թունավորել այդ Վասակ Մերոբյանին կամ ում մատնացույց կանեք դուք, բայց չեմ ասի, չեմ կարող ասել, թե որտեղ եմ եղել: Դա ձեզ չի վերաբերում և ոչ մեկին չի վերաբերում: Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի իր անձնական կյանքն ունենալու, և բոլորովին պարտադիր չէ, որ այդ կյանքը ձեր հսկողության տակ անցնի:

Դատախազության ավագ քննիչը խոր շունչ քաշեց, - Որևէ կնոջ մո՞տ եք եղել, , ,

- Եղել եմ թե չեմ եղել, դա ձեր գործը չէ, քաղաքացի քննիչ, - ասաց Հայկազ Ավետիսովը: - Կարծում եմ, որ ոչ մի կին դատախազությանը բողոք չի ներկայացրել: Թե՞ սխալվում եմ...

Հարություն Մամյանը զգաց, որ շնչահեղձ է լինում:

- Լսեք, Հայկազ Ավետիսով, - ատամների արանքից նետեց նա: - Լսեք, հարգարժան ամուսին, սիրեցյալ հայր ու պապ, լսեք՝ 1956 թվականից կուսակցության անդամ, ձեր տարիքին անհամապատասխան սիրային էժան արկածներն ինձ այսօր չեն հետաքրքրում: Ես սպանության գործ եմ քննում, հասկանո՞ւմ եք: Մարդ են սպանել: Եվ ես, ինչ էլ լինի, պետք է գտնեմ մարդասպանին: Եվ պետք է քննեմ բոլոր նրանց, ովքեր թեկուզ մազաչափ կասկած են հարուցում: Կարծում եք, թե այդպիսի մի ընդհանուր հայտարարությամբ կազատվեք: Մտքներովդ թող չանցնի: Ես ստիպված պետք է լինեմ ուսումնասիրել, թե ինչ կանայք են ապրում այդ մուտքում, առանձին- առանձին խոսել յուրաքանչյուրի հետ, որքան էլ տհաճ լինի՝ հարցաքննել ձեր կնոջը...

Կապի բաժանմունքի պետը տնքաց.

- Նրա՞ն ինչու: Չէ՞ որ խոստովանում եմ... Ինչո՞ւ եք ուզում քանդել իմ տունը...

- Դուք ձեզ ծիծաղելի վիճակի մեջ եք դնում, - ասաց քննիչը: - Հո երեխա՞ չեք: Մինչև մատնացույց չանեք այն տունը, որտեղ եղել էք, ո՞վ կհավատա ձեզ, թե դուք չեք մարդասպանը: Ձեր վերացական հայտարարությանը քանի՞ կոպեկ արժե:

- Ես ուզում եմ ծիւե՛լ, - դանդաղ ձեռքը գրպանը տարավ Ավետիսովը:

- Որքան սիրտներդ կամենա:

Կապի բաժանմունքի պետը «Արին-բերդի» տուփից մի սիգարետ վերցրեց, պիջակի փոքրիկ ներքին գրպանիկից հանեց սպիտակ, փայլուն վառիչը, փորձեց վառել, բայց ինչ արեց, կրակ դուրս չեկավ: Նա գայրացած գրասեղանին նետեց վառիչը, դարակից լուցկի հանեց, վառեց ու վերջապես ինքնամոռաց ներս քաշեց ծուխը:

- Հը՞, - շտապեցրեց Հարություն Մամյանը:

- Թույլ տվեք մի օր մտածել, - խնդրեց Հայկազ Ավետիսովը

- Միայն միլիցիայի մեկուսարանում, - վճռականորեն ասաց քննիչը:

Կապի բաժանմունքի պետը հուսահատ տարածեց ձեռքերը.

- Ինչ էք ասում, ինչ էք ասում... Եթե ես տանը չգիշերեմ, ինչ պատասխան կարող եմ տալ կնոջս:

- Ըստ ձեր հայտարարության՝ դուք դրա փորձն ունեք, - խայթեց քննիչը:

- Քաղաքացի քննիչ, - ասաց Հայկազ Ավետիսովը: - Մի վայրկյան պատկերացրեք, թե իմ դրության մեջ դուք եք:

- Դա անհնարին է, - պատասխանեց քննիչը: - Ես երբեք ձեր դրության մեջ չեմ գտնվի:

- Մի ասեք, մի ասեք, - գլուխն օրորեց Ավետիսովը: - Իմ մտքով նույնպես երբեք չեմ անցնի, թե ես կհայտնվեմ այս վիճակի մեջ: Մի ասեք: Ես ուղղակի անբախտ մարդ եմ: Անբախտ: Դուք կարծում եք քչե՞րը կան, որոնք դավաճանում են իրենց կանանց: Անձամբ ես իմ շրջապատից տասնյակ մարդիկ գիտեմ, որոնք դավաճանել ու դավաճանում են ամբողջ կյանքում: Եվ ի՞նչ: Ոչինչ: Երբեք նրանց հետ որևէ արտասովոր բան չի պատահում: Նրանցից ոչ մեկի մտերմուհու հարևանը մինչև հիմա սպանության զոհ չի դարձել, չի թունավորվել, չի կախվել, ցած չի նետվել պատշգամբից... Իսկ եթե նույնիսկ պատահում է որևէ դեպք, այդ օրը նրանք ինձ նման սև անձրևանոց հագած չեն հայտնվում, ինչպես դուք եք ասում, դեպքի վայրում:

Քննիչն ակամա ծիծաղեց:

- Դա իմ անբախտությունից է, - շարունակեց Հայկազ Ավետիսովը, - Ես ամբողջ կյանքում, ինչպես կենսաթերթիկներում է գրվում՝ բարոյապես ամուր մարդ եմ եղել: Եվ գիտե՞ք ինչու, որպեսզի ստվեր չգցեմ պատասխանատու աշխատող կնոջս կարիերայի վրա: Միայն այդ պատճառով: Եվ գիտե՞ք ինչե՞ր եմ քաշել: Պատկերացնել չեք կարող, որովհետև գաղափար չունեք, թե ինչ է նշանակում կուսշրջկումի հաշվառման սեկտորի վարիչ կին ունենալ: Իսկ

դրանք այն կանայք են, որոնք անգիր գիտեն, թե ինչ է, կատարվում շրջանի բոլոր կազմակերպություններում, բայց մազաչափ իսկ տեղեկություն չունեն թե ինչ է. կատարվում իրենց տանը: Նրանք ճաշ չեն եփում, շոր չեն արդուկում, հյուր չեն գնում և, հասկանալիորեն՝ չեն ընդունում, չգիտեն, թե որտեղ է շուկան և որտեղ են մուծում էլեկտրականության վարձը... Ամբողջ կյանքում այդ ամենը ես եմ արել, ե՛ս... . Ես եմ պահել մեր տղային, իսկ ինքը, պլենումի է գնացել, կոնֆերանսի, համագումարի, սիմպոզիումի, հանդիսավոր նիստերի

«Չէ, Հասմիկս փառք աստծո»- գոհունակությամբ մտածեց Հարություն Մամյանը:

- Եվ ահա վերջերս, բոլորովին պատահաբար, հանդիպեցի մի կնոջ...

- Խանջյան փողոցի N 8- ում:

- Այո: Եվ նոր միայն հասկացա, թե ինչ բան է կինը... թե ինչ կարող է լինել կինը ամուսնու համար, ամուսնու կյանքում: Պատկերացնում եք, ես դեռ անկողնու մեջ՝ սուրճ է մատուցում...

- Հայրենադա՞ր՞ է, - հենց այնպես հարցրեց Հարություն Մամյանը:

- Ծնողները Բեյրութից են, - ճշտեց կապի բաժանմունքի պետը, կակազեց, վախեցած նայեց քննիչին, բայց նրա դեմքն այնքան անխռով էր, որ հանգստացավ ու շարունակեց:- Սուրճը խմելուց հետո վեր եմ կենում և տեսնում, որ հենց մահճակալի կողքին, աթոռի թիկնակից ինձամքով կախված է իմ արդուկված վերնաշապիկը, իսկ աթոռի վրա լվացված և արդուկված թաշկինակս է: Չէ, դուք հասկանո՞ւմ եք, թե դա ինչ բան է... ախր ամբողջ կյանքում ես եմ արդուկել իմ վերնաշապիկն ու լվացել թաշկինակս, ես եմ ներկել կոշիկներս ու ճաշ եփել... Որտեղի՞ց պիտի հասկանաք... Իսկ նա... Իսկ նա ինձ համար եփում է իմ ամենասիրած կերակուրները, նստում է դիմացս, երջանիկ ու նվիրված հայացքով ինձ է նայում ու ասում է «Կեր, Հայկազ ջան, ախր դու շատ ես հոգնում: Քո գործը այնքան պատասխանատու է, ծանր, մտավոր աշխատանք է՝ նյարդերի և ուղեղի հետ կապված... Քեզ ուժեղ սնունդ է պետք, Հայկազ ջան»: Իսկ քո գործը հե՛շտ է, ինչ է, ասում եմ, հե՛շտ է մարդկանց հետ գործ ունենալը, այն էլ ծաղիկներ վաճառելը, երբ միշտ չէ, որ կարգին ծաղիկ է լինում... - Հայկազ Ավետիսովը շփոթվեց միանգամից, կծեց լեզուն, նորից վախեցած նայեց քննիչին: Բայց քանի որ Մամյանի դեմքը առաջվա նման բարեհամբույր և անվրդով էր, մտածեց, որ գլխի չընկավ ու որոշեց հարցից հեռացնել նրան:- Իսկ ինքն ասում է՝ «Հայկազ ջան»...

- Հայկազ ջան, - ժպտալով ընդհատեց նրան Հարություն Մամյանը:- Ինձ համար կարծես թե ամեն ինչ պարզ է: Ցտեսություն: Սոռացել էի, որ մի շատ կարևոր գործ ունեմ: Ես գնում եմ: Դեմ չե՞ք լինի, եթե հետս վերցնեմ նաև ձեր վառիչը... երկու-երեք օրով...

- Խնդրեմ, խնդրեմ, ընդմիշտ, բայց մեջը գազ չկա, - ոչինչ չհասկանալով, իրար խառնվեց Հայկազ Ավետիսովը:

- Նշանակություն չունի, ես կլցնեմ, - ասաց քննիչը, զգուշությամբ վերցրեց փայլուն վառիչը, հիացած երկար դիտեց լույսի տակ ու խնամքով փաթաթեց թաշկինակի մեջ:

Միլիցիայի տեղամասային տեսուչ Կարեն Շախուլյանը արագ- արագ քայլում էր Ալավերդյան փողոցով դեպի ցած՝ աջ ու ձախ նայելով: Թեև շտապում էր, բայց սովորության համաձայն երբեմն- երբեմն կանգ էր առնում որևէ անկյունում, կողքից առաջ բերում սպայական պլանշետը, հանում փոքրիկ ծոցատետրն ու ինչ- որ նշումներ կատարում: Եթե որևէ մեկը կարողանար կարդալ այդ ծոցատետրը, կգարմանար հարցերի բազմազանությունից.

“Մացակ Այդինյան: Ուրեմն վերադարձել է գաղութից: Ինչո՞ւ ինձ մոտ չի գալիս ու ենթարկվում հաշվառման: Կանչել հենակետ”:

“Ժամը 11-ն է, բայց թերթերի կրպակը փակ է”:

“24ր շենքի աղբը տեղափոխված չէ”:

“Դեղատան ցուցանակը...”:

Կարեն Շախուլյանը չէր ուզում նայել երկու բարձրահարկ շենքերի արանքում ծվարած- մնացած հին միահարկ տան երկաթաճաղ պատուհանին: Համոզված էր, որ հենց նայի՝ կտեսնի Սվետայի չքնաղ ու անամոթ դեմքը: Եվ չէր սխալվում:

- Բարև, թաղային ջան, ո՞նց ես, - լսեց նա:

- Բարև, - չոր ասաց Կարեն Շախուլյանը... Նայեց մի վայրկյան և անմիջապես էլ, ասես օձից խայթված, փախցրեց դեմքը:

Սվետան պատուհանի ճաղերի արանքից մեկնել էր սքանչելի, հուլանի թևերը, կրծքով հենվել պատուհանի գոգին ու դեմքով լրիվ մի վանդակ գրաված՝ ժպտում էր:

- Կարեն ջան, կարելի՞ է մի րոպե, - զրնգուն արձաթ ձայնով

հարցրեց Սվետան:

Տեղամասային տեսուչը կանգ առավ և, առանց պատուհանի կողմը

նայելու, ասաց մռայլ.

- Ստիպված եմ նորից կրկնել, բնակչուհի Զիրոյան, ես ձեզ համար երբեք Կարեն չեմ եղել: Ես լեյտենանտ եմ, ազգանունս էլ Շախուլյան է:

- Դու ինձ համար միշտ էլ Կարեն ես եղել, ազիզ ջան, - մազաչափ իսկ չմտահոգվելով, թե ուրիշները կարող են լսել իրեն, շարունակեց Սվետան:- Դու մեր թաղի ամենասիրուն տղան ես եղել: Եվ ումից թաքցնեմ, աստծուց հո չեմ կարող թաքցնել, ես միշտ էլ աչք եմ ունեցել քեզ վրա:

Կարեն Շախուլյանը ակամա շուրջը նայեց, հանկարծ ու Արևիկը պատահաբար տեսնի այս պատկերը,

- Ես մի օր կգրադվեմ ձեզանով, բնակչուհի Զիրոյան, - սպառնաց նա: -Կասկած չունենաք:

- Երանի այդ օրը, - ձեռքերը կրծքին խաչեց Սվետան: - Մոմ կվառեմ...

- Կտեսնենք, այն ժամանակ կտեսնենք, - պարզ զգալով, որ ինքը ծիծաղելի վիճակի մեջ է, բարկացավ երիտասարդ տեսուչը: - Իսկ մինչ այդ պաշտոնապես զգուշացնում եմ: Հարևանները բողոքում են, որ հաճախ կասկածելի վարքի տեր տղաներ են հավաքվում ձեր տանը, խմում, աղմկում են...

- Մինչև ժամը 11-ը, ազիզ ջան: Ես օրենքները գիտեմ: Իսկ դրանք, որ բողոքում են, նախանձից են բողոքում, որովհետև իրենց տունը մտնող, իրենց բանի տեղ դնող չկա:

- Եթե ուզում եք խուսափել անախորժություններից, բնակչուհի Զիրոյան, դրանց ոտքը պետք է կտրել ձեր տնից:

- Որ օրը որ դու իմ տուն մտնես, ազիզ ջան, - ձեռքերը կրկին առաջ պարզեց Սվետան, - որ օրը որ դու իմ տուն մտնես, նրանք դուրս կգան: Քեզնից բացի ինձ ոչ ոք պետք չէ:

Կարեն Շախուլյանը թափահարեց գլուխը: Ի՛նչ հաճույքով հիմա տղամարդավարի կհայիոյեր այդ անիծածին... բայց ինչ կարող է անել: Ինքը օրենքի ներկայացուցիչ է: Այնպես որ մնում է թափ տալ ձեռքը, , ,

Նա ճիշտ հենց այդպես էլ վարվեց, ջղայնությունից ակամա քայլեց արագ-արագ և չանցած հինգ բոպե, հայտնվեց շրջանային դատախազությունում, որտեղ տեղամասային տեսչի հեռախոսազանգից հուզված, անհամբերությամբ նրան էր սպասում ավագ քննիչ Հարություն Մամյանը:

- Հը՞, - շտապեցրեց Մամյանը:՝

Կարեն Շախուլյանը հանդիսավոր դանդաղությամբ գրպանից հանեց թաշկինակը, բացեց և քննիչի գրասեղանին դրեց փոքրիկ սրվակը:

- Իմ կարծիքով, սա հենց այն է, ինչ փնտրում էինք, ընկեր Մամյան:

Մամյանը գլուխը առաջ մեկնած, ասես հոտոտելով, ուշադիր դիտեց սրվակը:

- Որտե՞ղ էր:

- Փողոցի խաղողի վազի թասակի մեջ: Ուղիղ հանգուցյալի պատուհանի տակ, հանցագործի անցած ճանապարհին է:

- Վրան մատնահետքեր կա՞ն:

- Մեկի հետքերը որ հաստատ կլինեն:

- Ո՞ւմ:՝

- Եղբայր Խաչիկի:

- Ինչեր ես խոսում, Կարեն - կնճռոտեց քննիչը, - եղբայր Խաչիկը: Քո կարծիքով...

- Նա է գտել սրվակը:

Հարություն Մամյանը խոր շունչ քաշեց, և ծուռ- ծուռ նայելով տեղամասային տեսչի ժպտացող դեմքին, մոտ բերեց հեռախոսը, ինչ- որ համար հավաքեց:

- Վահան, - ասաց նա լսափողի մեջ, ե՞ս գամ քեզ մոտ, թե՞ դու գաս ինձ մոտ:

- Մեջն ի՞նչ ունեմ, - հարցրեց փորձագետը: ` `

- Մի տուփ «Մառլբորո» կտամ:

- Մեծ տուփ թե փոքր տուփ...,

- Առևտուր մի սկսիր: Գեները խոսեցի՞նք մեջդ, - ակնարկելով Վահանի հոր խանութի վարիչ լինելը, հեզնեց Մամյանը:

Հեռախոսի մյուս ծայրում փորձագետը ծիծաղեց.

- Գալիս եմ, գալիս... Իմ խելքն ասա, որ քեզ հետ կատակ եմ անում: Դու վաղը ժողովում էլ կասես:

Հարություն Մամյանը նստեց իր տեղում, բացեց գրասեղանի գրոցը, հանեց ու սեղանին, սրվակի մոտ դրեց Հայկազ Ավետիսովի վառիչը:

- Վերադարձին կմտնես կապի բաժանմունք ու կտաս պետին: Կասես լիքն է:

- Հետն էլ ներողություն ինձրեմ:

- Ինչի՞ համար, որ մարդասպան չե՞, - ժպտաց Հարություն Մամյանը: Իսկ այդ Պարզիկն ի՞նչ տեսակ կին էր. արժե՞ր, որ Հայկազ Ավետիսովն այդպես հալումաջ էր լինում նրա համար

- Ամենաճիշտը Խաչիկ եղբայրը բնորոշեց, ասաց՝ հենց ծաղկի խանութ մտնեք՝ կճանաչեք, ոնց որ նոր թխած սպիտակ բոբոն հաց...

- Եվ նմա՞ն էր, - ծիծաղեց քննիչը:

- Նման էր, - ծիծաղեց նաև տեսուչը: Եվ արդար որ լինենք, իսկապես մեղավոր ենք և պետք է ներողություն խնդրենք կապի բաժանմունքի պետից, ուշացումով փախցրած նրա փոքրիկ երջանկությունը խորտակելու համար: Տիկին Պարզիկը ոչ մի պայմանով այլևս տուն չի թողնի նրան: Ու գիտե՞ք ինչ ասաց իրենց կապը և իր տանը այդ գիշեր Ավետիսովի գտնվելու փաստը ընդունելուց հետո, ընկեր Մամյան: Ասաց՝ ծեր մարդ էր, խղճում էի:

- Եթե տիկին Ռոզային ճանաչեիր, դու էլ կխղճայիր նրան, - հաշվառման սեկտորի նախկին վարիչի խուզած վիզը հիշելով, լրջորեն ասաց Հարություն Մամյանը:

Դուրը բախեցին:

- Վերջերս շատ բարեկիրթ է դարձել մեր փորձագետը, - ժպտաց Մամյանը, մոտեցավ ու բացեց դուռը:

Դռան մեջ կանգնած էր կապի բաժանմունքի պետ Հայկազ Ավետիսովը իր անբաժան կաշվե պայուսակով:

- Բարև ձեզ, - ասաց նա, միանգամից նկատեց սեղանին դրված իր վառիչը ու ժպտաց երեխայի նման, - Իմ վառիչը:

- Վերցրեք, վերցրեք, լցված է, - վառիչը մատով նրան մոտեցրեց Հարություն Մամյանը: - Հենց սեռուչին խնդրում էի, որ ձեզ բերի: Սրա համար էիք եկել, - հարցրեց նա, թեև լիովին համոզված էր, որ այդպես չէ:

- Չէ, ի՞նչ եք ասում, - ձեռքը ետ քաշեց կապի բաժանմունքի պետը: - Ոչ, ոչ, մի հարց կա, ուղղակի մտածեցի, թե կարող է հետաքրքրել ձեզ: Այսօր առավոտյան լսեցի, որ մեր փոստատարներից մեկը բողոքում է առաքման բաժնի վարիչին: Ասում էր Խանջյան փողոցի N 8 շենքի 9-րդ բնակարանի փոստարկղը չեն դատարկում ու լցնելու տեղ չկա: Թե ինքը անընդհատ սեղմում է զանգի կոճակը, բայց ինչպես երևում է, տանը ոչ ոք չկա: Ի՞նչ անի. թերթերը դեռ ոչինչ, հարցն այն է, որ նամակներ կան... Հավանաբար ես ուշադրություն չդարձնեի, ընկեր Մամյան, եթե փոստատարը հանկարծ այդ տան տիրոջ անունը չտար: Այն անունը, որ անընդհատ դուք էիք տալիս ու համոզում ընդունել, թե ես ճանաչում եմ նրան: Այդ... այդ Վասակ Սերոբյանին: Եթե մեռած չլինեիր, գիտեի, թե ինչ կասեի նրա մասին: Կներե՞ք:

- Վասակ Սերոբյան, - հարցրեց Մամյանը: - Ես ե՞րբ էի համոզում, Ավետիսով, ես պարզապես հարցնում էի, - անմեղ-անմեղ ավելացրեց նա:

Բայց Հայկազ Ավետիսովը շատ էր խոցված:

- Գիտեմ, գիտեմ, ձեր երիտասարդ աշխատակիցն էլ հավանաբար պարզապես է հարցեր տվել ծաղկի խանութում:

Լարված լռություն տիրեց:

- Դուք ինչ- որ նամակների մասին էիք խոսում, - պաշտոնական ու սառը հիշեցրեց Մամյանը:

Հայկազ Ավետիսովը լուռ բացեց պայուսակը և այնտեղից երկու նամակ հանեց:

- Ստորագրեք, որ ստացել եք:

Նա մեկնեց մի տետր, որտեղ գրանցված էին նամակները, և Հարություն Մամյանը ստորագրեց այնտեղ:

- Եթե էլի նամակներ լինեն, ի՞նչ անեմ:

- Ուղարկեք մեզ, - ասաց Հարություն Մամյանը, մինչև դուռը ուղեկցեց կապի բաժանմունքի պետին և, դուռը բացելով, մեղմացած ասաց.- Աշխատեք հասկանալ ու ներել մեզ, ընկեր Ավետիսով: Գուցե բարին սա էր, ո՞վ գիտե ինչ կլիներ, եթե տիկին Ռոզան իմանար այս ամենի մասին:

Հայկազ Ավետիսովը հառաչեց, ուզեց ինչ- որ բան ասել, բայց թափ տվեց ձեռքն ու դուրս եկավ:

Նամակներից մեկը ՄՍՀՄ Պաշտպանության մինիստրությունից էր: Ի պատասխան Վասակ Մերոբյանի հարցման, հատուկ բաժնից հայտնում էին, որ Հայրենական Մեծ պատերազմում «Փառքի» երրորդ աստիճանի շքանշանով պարգևատրվածների ցուցակում Անդրանիկ Ցոլակի Աթայան գրանցված չէ:

Երկրորդ նամակը եկել էր Գերագույն Սովետից:

“Հարգելի ընկեր Մերոբյան, - գրված էր այնտեղ, - ՀՍՄՀ Գերագույն Սովետի նախագահության նախագահին ուղարկած ձեր նամակը Մետաղյա իրերի կոմբինատի դիրեկտոր Անդրանիկ Աթայանի գործած ապօրինությունների մասին, ուղարկում ենք ՀՍՄՀ Ներքին գործերի մինիստրություն՝ ընթացք տալու: Այնտեղից էլ կստանաք պատասխանը: Նամակների բաժնի վարիչ՝ Վերմիշևա”:

- Հը՞, - հոնքերը կնճռոտեց Հարություն Մամյանը:

- Կարծես թե մշուշը ցրվում է, - պատասխանեց տեղամասային տեսուչը:

Անդրանիկ Ցոլակի Աթայանը այն մարդկանցից էր, որոնց մասին մի բառով ասում են՝ հին կոճղ է: Ամրակազմ, ջլապինդ, թիկնեղ, կարճ վզով ու կարճ խուզած սպիտակ մազերով նա ավելի շուտ նախկին ըմբշամարտիկի էր նման, որը տարեց հասակում անգամ հետևում է իրեն և առավոտ վաղ անպայման վազում է մոտակա պուրակում՝ մարզական զգեստ հագած, իսկ հետո փնչփնչալով լողանում սառը ցնցուղի տակ: Նրանից առողջություն, կամք ու ինքնավստահություն էր բուրում:

Հագին անթերի կարված մուգ կապույտ կոստյում կար, իսկ փողկապն էլ մոդայիկ, գրեթե հասած բալի գույն ուներ: Նա գրպանից դուրս բերեց ”Ախթամարի” տուփը, սիգարեթ հանեց, վառեց քննիչի մեկնած վառիչով ու ծուխը ներս քաշելով, ասաց.

- Ես ժամը 2- ին խորհրդակցություն եմ հրավիրել: Մինչ այդ ձեր տրամադրության տակ եմ:

- Կաշխատենք երկար չպահել ձեզ, - նրա նկատմամբ ակամա հարգանքով լցված՝ շտապեց հանգստացնել Մամյանը:

- Լսում եմ ձեզ:

- Ընկեր Աթայան, դուք անձնական թշնամիներ ունե՞ք:

Կոմբինատի դիրեկտորը մտածեց մի պահ:

- Էլ ի՞նչ դիրեկտոր, եթե թշնամի չունենա;- Ժպտաց նա: Չէ՞ որ ես մարդկանց հետ գործ ունեմ, որոնցից մեկին դուր է գալիս իմ աշխատանքի ոճը և հենց այդ պատճառով էլ դուր չի գալիս մյուսին:

- Իսկ մասնակցե՞լ եք Հայրենական Մեծ պատերազմին:

- Ոչ, չտարան: Հիվանդ էի:

- Հետո առողջացա՞ք:

- Ինչպես տեսնում եք, - ժպտաց դիրեկտորը:- Մի՞ թե չեք հավատում բժշկության գործությանը:

- Հավատում եմ, հավատում եմ, - գլխով արեց Մամյանը: - Եվ բժշկության գործությանը, և բժիշկների գործությանը...

- Ընկեր Մամյան, - ասաց Անդրանիկ Աթայանը, - այդ հարցը ժամանակին հազար տեղ քննվել է և հազար տեղում էլ գտել են, որ ես անմեղ եմ: Այնպես որ գուր տեղը մի տանջեք ձեզ:

- Եղավ, - անմիջապես համաձայնեց քննիչը:

Հարություն Մամյանն ու Անդրանիկ Աթայանը ուշադիր, բարյացակամ իրար էին նայում:

- Ընկեր Աթայան, - հարցրեց քննիչը, - ձեզ ծանոթ չէ՞ Վասակ Սերոբյան անուն-ազգանունով մեկը:

Եվ քննիչը, և տեղամասային տեսուչը միաժամանակ նկատեցին, որ դիրեկտորի գրասեղանի ապակուն սեղմած մատները լարվեցին:

- Մեր կոմբինատում էր աշխատում, - հանկարծ միանգամից հոգնած, ասաց նա: - Հիմա թոշակի է անցել

- Նա գիտեր: որ դուք պատերազմում չեք եղել:

- Իհարկե, գիտեր, - ասաց դիրեկտորը: - Մենք մի ժամանակ նույնիսկ ընկերներ էինք:

- Ուրեմն ի՞նչ է նշանակում այս նամակը, - հարցրեց; Մամյանն ու նշանակալի հայացքով նայեց Կարեն Շախուլյանին:

- Տվեք, տեսնեմ ի՞նչ նամակ է, - անկեղծորեն զարմացավ Անդրանիկ Աթայանը:

- Եկեք միասին կարդանք, - առաջարկեց Մամյանը իր գրասեղանի մոտ մի կողմ քաշվելով և նշանակալի հայացքը տեղափոխելով մյուս գրասեղանին դրված ապակու վրա, որտեղ քիչ առաջ գործարանի դիրեկտորն էր նստած:

Մինչ Աթայանը կարդում էր նամակը, Կարեն Շախուլյանը գրասեղանից վերցրեց հաստ ապակին, որի վրա պարզ երևում էին կոմբինատի դիրեկտորի մատնահետքերն ու դուրս, գնաց:

- Ոչինչ չեմ հասկանում, - մտախոհ ասաց Աթայանը: - Ի՞նչ «Փառքի» շքանշան, ի՞նչ բան: Անհեթեթություն է: - Նա կոպերը փակած մի պահ մտածում էր, իսկ հետո հարցրեց կասկածամտությամբ: - Իսկ այս նամակը ձեզ որտեղի՞ց: Ի՞նքն է տվել:

- Ընկեր Աթայան, - նախաձեռնությունը չզիջեց քննիչը: - Այդ Վասակ Սերոբյանը ի՞նչ էր ուզում ձեզանից: Ինչո՞ւ էր շարունակ բողոքներ գրում ձեր դեմ:

Անդրանիկ Աթայանը կրկին նստեց աթոռին ու խոր շունչ քաշեց.

- Նախանձում էր, - ասաց նա: - Հենց սկզբից նախանձում էր, որ ինքը բանակ է գնացել, ես՝ չէ, որ ինձ անմիջապես առաջ քաշեցին, իրեն չէ, որ ես լավ ընտանիք ունեմ, ինքը չէ, որ ես երեք տղա ունեմ, ինքը՝ մեկը... Եթե մարդ ի ծնի նախանձ է, նախանձելու քի՞չ նյութ կա:

- Բայց դուք ասում եք, թե ընկերներ եք եղել:

- Մի հույն փիլիսոփա ասել է, ովքե՞ր են իմ թշնամիները, եթե ոչ իմ նախկին բարեկամները...

Հարություն Մամյանը դռան կողմը նայեց, հետո՝ ժամացույցին: Չէ, դեռ շուտ է,

- Եվ նրա բողոքների հիման վրա շա՞տ ստուգումներ են եղել ձեզ մոտ:

Կոմբինատի դիրեկտորը դառը քննիչի տվեց,

- Վերջին, տարիներին ես ավելի շատ ստուգող բրիգադներ եմ ընդունել, քան զբաղվել արտադրությամբ: Ինձ սխալ չհասկանաք, ես այս երկիրը կառուցողներից մեկն եմ և երկու ձեռքով եմ քվեարկում հանուն մեր կարգերի: Բայց սխալ է, սխալ է, սխալ է, որ այդքան ստուգող կազմակերպություններ կան: Յոթ տարի է, տեղ չեմ թողել, բանավոր ու գրավոր խնդրում, սպառնում, աղաչում պաղատում եմ, որ ավելացնեն մեր կոմբինատի ֆոնդերը: Որովհետև արտադրական տարածությունները կրկնապատկվել են, իսկ ֆոնդերը մնացել են նույնը: Եվ ի՞նչ, ոչ մի ձայն, ոչ մի պատասխան, ոչ մի հանձնաժողով: Իսկ բավական է, որ մի պորտաբույծ, որին արժանիորեն հեռացրել եմ աշխատանքից, թեկուզ անստորագիր բողոք գրի ինձ վրա... Տեսեք, տեսեք ինչպես են իրար խառնվում, ինչ լուրջ հանձնաժողովներ են կազմում, ինչ մանրակրկիտ ստուգումներ են կատարում: Ու գալիս են՝ իրար ետևից, Գերագույն Սովետից ու Մինիստրների Խորհրդից, քաղսովետից ու շրջսովետից, մեր մինիստրությունից ու ներքին գործերի մինիստրությունից, ֆինանսների մինիստրությունից ու ժողովրդական վերահսկողության կոմիտեից, դատախազություններից ու միլիցիայի բաժիններից... Էլ ԲԽՄՄի մասին չեմ խոսում, կազմ ու պատրաստ է: Գալիս են, կտրում են գործից, խանգարում են, զբաղեցնում են, նյարդայնացնում են մարդկանց, պարզում են, որ ոչ մի ապօրինություն չկա ու նույնիսկ ներողություն չեն խնդրում, անհետանում են:

Նորից մի նամակ՝ ու նորից են գալիս: Ու ամեն ինչ կրկնվում է նորից:

Ասում եմ արդեն հարցրել են, ստուգել են, , արձանագրություն են կազմել... որոշում են ընդունել... նույն հարցի մասին այդ որոշումը նրանց չի փավարարում: Ասում են բողոքը հենց այդ ստուգողների մասին է, և ամեն ինչ սկսվում է նորից: Բա սա եղավ արդարություն: Եղավ կոմունիստական վերաբերմունք: Եղավ պետական մտածողություն: Այդ ստուգումներն իրենք որքան ծախս են նստում պետության վրա, էլ չեմ խոսում դրանց բերած բարոյական վնասների մասին:

Կոմբինատի դիրեկտորը խոսում էր վշտացած, և Հարություն Մամյանը մտածում էր, որ նրա խոսքերի մեջ ճշմարտություն կա: Նույնն էլ իրենց մոտ է: Բավական է, որ մեկը բողոք գրի քննիչի մասին: Եվ վերջ: Հանցագործի բողոքի հիման վրա քննիչին են քննում: Նույնիսկ այն, թե ճի՞ շտ է, որ նա հարևանի երեխայի հեծանիվն է գողացել քառասուն տարի առաջ, երբ քննիչն ընդամենը երեսուն տարեկան է:

- Հիմա էլ՝ դուք, - շարունակում էր կոմբինատի դիրեկտորը, - ինձ կտրել էք գործից, կանչել դատախազություն և հարցեր էք տալիս ու ինչպես երևում է, դեռ տալու էք, երբ այդ հարցերն արդեն տրվել են հարյուր անգամ և պատասխան ստացել: Երբ այդ հարցերով նույնիսկ ձեր ներքին գործերի բաժինն է զբաղվել և հարցնողն էլ նստած է իր տեղում...

- Ո՞վ, - անմիջապես հետաքրքրվեց քննիչը,

Կոմբինատի դիրեկտորը երևի զգաց, որ շատ հեռու է գնացել, որովհետև կանգ առավ, լռեց ու ասաց անորոշ.

- Դա ի՞նչ նշանակություն ունի: Ընդհանրապես եմ ասում:

Բայց քարն արդեն նետված էր: Հարություն Մամյանը միանգամից հիշեց, որ մի քանի տարի առաջ միլիցիան զբաղվում էր Մետաղյա իրերի կոմբինատի հարցով, ինչ- որ ոսկու թե արծաթի պատմություն կար: Դե, իհարկե, հենց այդպես էլ կա՝ այն ժամանակ, և հիմա ԲԽՍՍ բաժանմունքի պետը նույնն է՝ Շավիդ Պետիկյանը:

Հարություն Մամյանը սևեռուն նայում էր դռանը, սպասելով, թե ուր որ է կբացվի այն ու շեմին կհայտնվի տեղամասային տեսուչը: Բայը դուռը չէր բացվում:

Կոմբինատի դիրեկտորը ժամացույցին նայեց, ապա ավագ քննիչին:

- Ես գնամ, - ասաց նա: - Հազիվ հասցնեմ: Եթե կրկին պետք լինեմ, զանգահարեք, ինդրեմ: Ես ուրիշ դիրեկտորների նման չեմ, ովքեր վիրավորվում են, երբ իրենց միլիցիա կամ դատախազություն են կանչում: Իսկ ինչ վերաբերում է այդ «Փառքի» երրորդ աստիճանին, դա ցնդաբանություն է: Հիվանդ ուղեղի զառանցանք: Մարդկային թուլությունները հատուկ են նաև ինձ, - ժպտաց նա, - ես էլ որոշ չափով սիրում եմ փառքի ցուլերի մեջ լինել: Բայց ոչ կեղծիքի գնով: Ես դրա կարիքը չունեմ: Իմ աշխատանքային շքանշանները փավարարում են. ինձ:

“Շա՛տ ես խոսում, - մտածում էր Հարություն Մամյանը, - շատ ես խոսում, որովհետև, այնուամենայնիվ, վախենում ես հարցերից”: Իսկ բարձրաձայն, թաքցրած ափսոսանքով ասաց.

- Դե ինչ, շնորհակալություն, որ եկաք: Պայմանավորվեցինք, եթե հարկ լինի՝ կզանգահարենք:

- Բարով մնաք, - ձեռքը մեկնեց Անդրանիկ Աթայանը:՝

- Հաջողություն:

Ավագ քննիչը բռնեց դիրեկտորի ամուր, մկանտոտ ափը և նրա ուսի վրայից էլ տեսավ, թե ինչպես բացվեց դուռը և հանգիստ քայլերով ներս մտավ Կարեն Շախուլյանը:

Տեղամասային տեսուչը անվրդով դեմքով մոտեցավ ավագ քննիչին և նրան մեկնեց մեքենագրված ինչ- որ թուղթ:

- Մի բոպե, - տեսնելով, որ Անդրանիկ Աթայանը արդեն հեռանում է, ձայնեց ավագ քննիչն ու շարունակեց կարդալ թուղթը:

Փորձագետ Վահան Ալոյանը պաշտոնապես հայտնում էր, որ ըստ դակտիլոսկոպիկ փորձաքննության տվյալների, գրասեղանի ապակու մատնահետքերը համընկնում են Վասակ Սերոբյանի օգտագործած բաժակի և թույնի փոքրիկ սրվակի վրա հայտնաբերված մատնահետքերին:

- Մի բոպե- ասաց ավագ քննիչը, թուղթը անփութորեն մի կողմ դրեց և հարցրեց՝ ասես ոչինչ էլ չէր եղել:- Ընկեր Աթայան, ես ձեզ մոռացա մի բան հարցնել դուք երբևէ եղե՞լ եք Վասակ Սերոբյանի տանը:

- Շատ, - պատասխանեց դիրեկտորը, - ասացի, չե՞, որ մի ժամանակ բարեկամներ ենք եղել:

- Իսկ վերջին անգամ՝

- Վերջին անգամ՝ դարձյալ նույն ժամանակներում:

- Ավելի ստո՞յգ:

- Մեկ-երկու տարի առաջ: Հիմա կարո՞ղ եմ գնալ, - ավելացրեց նա անհամբեր:

- Ոչ, - ասաց Հարության Մամյանը:- Հիմա չեք կարող գնալ: Մենք կզանգահարենք կոմբինատ և ձեր անունից կհայտնենք, որ խորհրդակցությունը հետաձգվում է, իսկ եթե շատ անհրաժեշտ է, առանց Ձեզ խորհրդակցությունը կանցկացնի տեղակալը:

- Ինչո՞ւ:

- Որովհետև դուք պետք է մնաք այստեղ: Կոմբինատի դիրեկտորի կզակը դողաց:

- Ինչի՞, համար, թույլ տվեք իմանալ:

- Ես պետք է հարցաքննեմ ձեզ:- Նա դարձավ Շախուլյանին.- Լեյտենանտ, զանգահարեք միլբաժին: Քաղաքացի Անդրանիկ Աթայանը այս գիշեր պետք է մեկուսարանում մնա:

- Բայց ինչի՞ համար, ի՞նչ մեղադրանքով, - ձեռքերը բռնոնցք դարձրած դեպի ավագ քննիչը շարժվեց կոմբինատի դիրեկտորը:- Մա՞ ինչ կամայականություն է: Դուք իրավունք չունեք կալանավորելու ինձ: Ես անձեռնմխելի անձ եմ:

- Ձեզ չենք կալանավորում, - հանգիստ ասաց Մամյանը:- Ձեզ պահում ենք մեզ մոտ, որպեսզի չխանգարեք քննությանը, քաղաքացի Աթայան: Իսկ մեղադրանք կներկայացնենք երեկոյան կամ վաղը: Հավատացնում եմ, որ օրենքի և օրինականության ոչ մի խախտում չի լինի:

- Գոնե թույլ կտա՞ք զանգահարել դատախազին, - միանգամից գունատված ու ընկճված հարցրեց դիրեկտորը:

- Ոչ, - ասաց ավագ քննիչը:- Ես հենց հիմա նրա մոտ եմ գնում:

Երբ Հարություն Մամյանը ներս մտավ Մետաղյա իրերի կոմբինատի դիրեկտոր Անդրանիկ Աթայանի տան ընդարձակ հյուրասենյակը և աչքերը կկոցելով շուրջը նայեց, առաջին պահ անմիջապես մտածեց, որ ինքը մի անգամ արդեն այստեղ եղել է: Ամեն ինչ ծանոթ էր նրան: Եվ առաստաղից կախված հսկայական բյուրեղապակյա ջահը, որն անկասկած սաքսոնական ծագում ուներ, և ֆրանսիական մուգ կարմիր հինավուրց կահույքը՝ կիսաքանդակներով, հարթաքանդակներով ու ոտքերով, որոնք առյուծի թաթի էին նման, և սենյակի ողջ բարձրությամբ կանգնած փայտե վիթխարի ժամացույցը, որի սլաքներից կախված ճոճվում էին ֆլամանդական հագուստներով մի տղա ու մի աղջիկ, և պատերին թանկարժեք շրջանակների մեջ կախված նույն ֆլամանդական ծագում ունեցող բնանկարներն ու որսորդության պատկերները, և ծովի մի պատկեր, որն անկասկած Այվագովսկու վրձնին էր պատկանում:

«Բայց ես ինչպես կարող էի այս ամենը տեսած լինել - մտածեց շրջանային դատախազության ավագ քննիչը և անմիջապես էլ հիշեց, որ այս հյուրասենյակը մանրամասն նկարագրել է իր կինը՝ Հասմիկը: Նա պարտուսի համար երեխաներին հաշվառման ենթարկելու առիթով մի անգամ մի տուն էր ընկել և ուղիղ մի շաբաթ հիացմունքից ու նախանձից այրվող աչքերով ամենայն մանրամասնությամբ պատմում էր այդ հյուրասենյակի մասին:

- Նրանք էլ կասեն թե ապրում են ու մենք էլ կասենք թե ապրում ենք, - ասում էր նա հառաչելով ու տխուր- տխուր նայելով իրենց աղքատիկ կահկարասուն:

Նման դեպքերում Հարություն Մամյանը և իսեղձանում, և՛ բարկանում էր միաժամանակ: Բայց չէր պատասխանում, չգիտեր ինչ պատասխանել:

- Դուք Անդրանիկ Աթայանի ի՞նչն եք, ընկերուհի, - հարցրեց նա դուռը բաց արած մանկամարդ կնոջը:

- Հարսն եմ:

- Տանն ուրիշ ո՞վ կա:

- Երեխաները:- Նա նայեց ժամացույցին:- Բայց հիմա ուր որ է ամուսինս ու նրա հայրը կգան:

- Ես դատախազության ավագ քննիչ Հարություն Մամյանն եմ, - բաց փաստաթուղթը առաջ մեկնեց Մամյանը, - ինձ ուղարկել են ձեր տանը խուզարկություն կատարելու, - ավելացրեց նա:- Ահա և խուզարկության արտոնագիրը: Ծանոթացեք:

- Չեմ թողնի, - հանկարծ ճչաց հարսը, - ես ձեզ չեմ ճանաչում և չեմ թողնի, մինչև որ ամուսինս ու սկեսրայրս չգան:

Առանց նրան պատասխանելու, քննիչը Կարեն Շախուլյանին դարձավ.

- Ընթերականերին ներս հրավիրիր:

Ընթերակաները թեև հարևաններ էին, բայց, հավանաբար, երբեք չէին եղել այդ տանը, որովհետև արձանացել էին շեմին ու զարմացած, զմայլված դիտում էին արվեստի կատարելությունները:

- Գործի անցեք, - կարգադրեց Մամյանը:- Լեյտենանտ, դուք Ալոյանի հետ Անդրանիկ Աթայանի առանձնասենյակն ուսումնասիրեք, - դարձավ նա Կարեն Շախուլյանին: - Իսկ ես ննջասենյակում կլինեմ:

- Իսկ ես ինչ անեմ, ընկեր Մամյան, - կույշ ու ձիգ անելով հարցրեց կապիտանի ուսադիրներով, լայն, ճարպակալած դեմքով մի մարդ, որ հենց նոր էր ներս եկել:

Տեղամասային տեսուչ Սիմոն Մաղաքյանն էր:

- Դու, Մաղաքյան, եթե ժամանակին քո տեղամասում բարեխղճորեն կատարեիր քո գործը, այսօր մենք այստեղ չէինք լինի:

- Ուրեմն ինչքան հարուստ մարդ կա՝ բռնե՞նք: Երեսուն թի՞վն է, - փնթփնթաց Մաղաքյանը:

- Չէ, ինչո՞ւ, նատիր, հետները հաց կեր, լողացիր նրանց ֆիննական բաղնիքում... Սառը զարեջուր խմի...

- Վայ, ընդամենը մի անգամ է եղել, - կարմրատակեց Մաղաքյանը:- Միթո՞ւմ թե դրա՞ մասին ինչի է պատմել: Շան որդու ամենամեծ մեղքը դա՞ էր:

Ինչ-որ տեղից լսվեց Շախուլյանի ձայնը.

- Ընկեր Մամյան, կարելի՞ է մի բոպեով...

Նա նստած էր Անդրանիկ Աթայանի առանձնասենյակի լայն, մեծածավալ գրասեղանի ետևում և ինչ- որ գրություններ էր կարդում: Դիմացը թափված էին բազմաթիվ այլ ծրարներ...

- Ճիշտն ասած մինչև հիմա հավատալս չէր գալիս, ընկեր Մամյան, - ասաց տեղամասային տեսուչը մի տեսակ տխրությամբ:- Բայց հիմա... Հանգիստ խղճով կարող եք դադարեցնել խուզարկությունը: Ինչպես դետեկտիվ վեպերում է գրվում՝ շրջանը փակված է:

- Հը՞, - հարցրեց Հարություն Մամյանը:

- Բոլոր այս ծրարները պաշտոնական պատասխաններ են, որ ուղարկվել են Վասակ Մերոբյանի հասցեով և չգիտես ինչու զարմանալիորեն հայտնվել Անդրանիկ Աթայանի գրասեղանին:

- Իսկ ինչո՞ւ զարմանալիորեն: Մի՞ թե մենք հենց այս ծրարները չէինք փնտրում, կամ սրանց նման որևէ բան, - հարցրեց ավագ քննիչը:

- Ջարմանալին այն է, որ փնտրելու հարկ չկար, - մտածկոտ ասաց Կարեն Շախուլյանը:- Այս նամակները կապով դրված էին հենց գրասեղանի վրա աչքի առաջ:

Հարություն Մամյանը ծիծաղեց.

- Հաճախ աչքի առաջ դրված բաները ամենալավ թաքցրածն են լինում, որովհետև ոչ մեկի մտքով չի անցնում փնտրել աչքի առաջ:

- Բայց այսպիսի մահացու հանցանշան պահել տանը... գրասեղանին... Ինչո՞ւ չի վառել կամ հակառակ դեպքում՝ ինչո՞ւ խորը չի թաքցրել այս նամակները: Պատկերացնո՞ւմ եք՝ թունավորել է մարդուն, հափշտակել է իրեն վարկաբեկող հանցանշանները և բերել, դրել է գրասեղանին: Սպանեք՝ խելքս չի մտնում, Մեզ սովորեցրել են, թե նման դեպքերում պետք է փորձել քեզ դնել հանցագործի տեղը... Ի՞նչ կանեիր, եթե հանցագործը դու լինեիր... Եթե, օրինակ, ես լինեի Անդրանիկ Աթայանի փոխարեն...

Հարություն Մամյանը ժպտաց.

- Քանի որ դատախազությունում չենք, անկեղծ կասեմ՝ այդ մտածողությունը խախուտ է, Կարեն: Եթե դու լինեիր հանցագործի փոխարեն, միևնույն է, դարձյալ դու կլինեիր, և բոլորովին էլ վստահ չեմ, թե կանեիր այն, ինչ կաներ հանցագործը:

- Կներեք, բայց եթե թույլ տաք, այդ թեմայով մի օր կվիճեմ ձեզ հետ, - ասաց տեղամասային տեսուչը:- Իսկ հիմա ի՞նչ ենք անում, գնո՞ւմ ենք:

Կողքի սենյակում, ընթերակաների ապշած հայացքի տակ, փորձագետ Վահան Ալոյանը փոքրիկ մուրճով, ինչ- որ համակարգով հարվածում էր պատերին, ականջ դնում ու հարվածում նորից:

- Ի՞նչ կա, - մոտեցավ, հարցրեց Հարություն Մամյանը: Վահան Ալոյանը թեքվեց նրա ականջին.

- Հարություն, կարդացել կամ կհիտնե՞րում տեսել ես, չէ՞: Երկրաբանը մի ժայռաբեկոր է գտնում և ինչ- որ նշաններից, ինչ- որ միացություններից, ինչ- որ մետաղների առկայությունից ենթադրում, թե մոտակայքում ոսկի կա, Հիմա ես ճիշտ այդ վիճակի մեջ եմ, ախպերս, գուշակում է սիրտս: Այս տանը ոսկի կա:

Սակայն, մինչև ոսկուն հասնելը, ուրիշ շատ բան հայտնաբերվեց Մետաղյա իրերի կոմբինատի դիրեկտոր Անդրանիկ Աթայանի տանը, ննջարանում դրված սպիտակեղենի ֆիննական շքեղ պահարանի դարակները խուզարկելիս, հնդկական փափուկ ցամքոցների կապի մեջ, տարբեր տեղերում հայտնաբերվեցին հին լրագրերի մեջ փաթաթված երեք տոկոսանոց փոխառության պարտատոմսեր՝ քառասունույթ հազար ռուբլի ընդհանուր գումարով: Ջգեստապահարանի վերևի մասում անփութորեն ընկած ծղոտե գլխարկն ավելի հարուստ էր: Նրա աստառի տակից հանվեց խնայողամարկդի երեք գրքույկ, երեքն էլ Անդրանիկ Աթայանի անունով, որոնցով նրան ուզած պահին այդ խնայողամարկդերը պարտավոր էին վճարել հիսուներկու հազար ռուբլի: Խնայողամարկդի երկու գրքույկ էլ Անդրանիկ Աթայանի որդու գրասեղանի դարակից հանվեց: Մեկը հենց որդու անունով, էր, երկարաժամկետ, մուծված էր քսան հազար ռուբլի, իսկ մյուսը բացել էր պապը թոռան համար, ընդամենը մի շաբաթ առաջ և մուծել էր առաջին ավանդը հազար ռուբլի:

Կարեն Շախուլյանը, գլուխը զարմացած թափահարելով, այդ գրքույկներին էր նայում, երբ ներս մտավ Անդրանիկ Աթայանի որդին: Նա հոր պես ջլապինդ ու ամբակազմ էր, և «Ադիդաս» ֆիրմայի ամառային մուգ կապույտ վերնաշապիկն ավելի էր ընդգծում նրա մկանները:

- Ալվարո, - ձայնեց նա, - գարաժի դուռը բաց արա, «Վոլգան» ներս տանեմ:

Մանկամարդ կինը դեպի նա նետվեց.

- Հակոբ ջան, խուզարկում են, ինչքան բողոքեցի, չլսեցին, ցավդ տանեմ:

Հակոբ Աթայանը ետ հրեց նրան, շուրջը նայեց ու նկատեց իրենց տեղամասային տեսուչ Սիմոն Մաղաքյանին.

- Յա՛, - ասաց զարմանքով, - ու դու էլ իրանց հետ ես, հա ...

Սիմոն Մաղաքյանը կորցրեց իրեն:

- Դատախազությունից են, այ տղա, - կակազեց նա:

- Իսկ ձեր իրավունքը, իրավունքը ցույց կտա՞ք, - մարտահրավերով հարցրեց Հակոբ Աթայանը, Հարություն Մամյանի ձեռքից վերցրեց խուզարկության արտոնագիրը, ուշադիր կարդաց և նայեց նրան: - Իսկ ձեզ ո՞վ է թույլ տվել խուզարկել իմ տունը: Որ դատախազությունից եք, ինչ կուզեք՝ կանե՞ք: Ձեր վրա օրենք չկա՞: - Երիտասարդ, - ասաց ավագ քննիչը, - դուք հենց նոր կարդում էիք արտոնագիրը:

- Կարդում էի, ճիշտ է, - բացահայտ հեզմանքով համաձայնվեց Հակոբ Աթայանը: - Բայց այստեղ պարզ գրված է, որ դուք իրավունք ունեք խուզարկելու Անդրանիկ Աթայանի տունը, այնինչ եկել իմ տունն եք խուզարկում: Էդ ո՞ր օրենքով: Խոտակերի տեղ եք դնում: Մենք իրար հետ ինչ կապ ունենք, մենք բաժանված ենք իրարից: Խոսիր է, կապիտան Մաղաքյան, դու էլ չգիտեի՞ր, որ մենք օրենքով բաժանված ենք:

- Ճ-ճիշտ է, - կակազեց Սիմոն Մաղաքյանը:

- Որտե՞ղ եք աշխատում, - հարցրեց Հարություն Մամյանը:
 - Կոմերիտմիության շրջկոմում: Հրահանգիչ եմ: Չէի՞ք սպասում:
 - Որքա՞ն է ձեր աշխատավարձը:
 - Հարյուր վաթսուն ռուբլի:
 - Քանի տարի է, ինչ աշխատում եք:
 - Երկու տարի:
 - Եվ երկու տարվա մեջ հասցրել եք «Վոլգայի» տե՞ր դառնալ:
 - Նախ՝ եղ իմ ավտոն չէ, կնոջս անունով է ձևակերպված: Իրեն հարցրեք:
 - Հայրիկս է ինձ նվիրել, - անմիջապես միջամտեց Ալվարդը: - Վա՛յ, չէ ք հավատում... թուղթը բերե՛մ...
 - Քաղաքացի Աթայան, - հարցրեց քննիչը: - Իսկ երբ ձեր հայրը ձեզ քսան հազար ռուբլի էր նվիրում, մտքներովդ չանցավ հարցնել, թե նրան որտեղից այդքան դրամ:
 - Ինչի, որ դուք ձեր տղերքին տալիս եք, նրանք հարցնո՞ւմ են, թե որտեղից է, - լկտիաբար ժպտաց Հակոբ Աթայանը:
- Կարեն Շախուլյանը գունատվեց, և ավագ քննիչը ձեռքը դրեց նրա ուսին:
- Լակոտ, - ասաց նա ուղիղ պատանու աչքերի մեջ նայելով: - Մի օգտվիր այն բանից, որ մենք պաշտոնական պարտականություններ ենք կատարում...
- Հայտնի չէ, թե նա ինչպես կավարտեր իր միտքը, եթե ինչ- որ տեղից չլսվեր փորձագետ Վահան Ալոյանի ձայնը.
- Ընկեր Մամյան, ընկեր Մամյան, ես ձեզ գարաժ եմ հրավիրում:
- Առաջինը ձայնի կողմը նետվեց Հակոբ Աթայանը՝ բղավելով.
- Դուք իմ գարաժում ի՞նչ գործ ունեք: Ասացի, որ մենք բաժանված ենք, չէ՞՞ Գնացեք, հորս գարաժը խուզարկեք, եթե պետք է: Մա ձեզ վրա էժան չի նստի: Ես Հակոբ Աթայանը չլինեմ, եթե ձեզ շրջկոմ քարշ չտամ...
- Նրա ետևից ննջարանի միջով միջանցք դուրս եկան և ապա գարաժ մտան Մամյանը, Շախուլյանը և Մաղաքյանը: Վահան Ալոյանը ընթերականների հետ կանգնած էր պատի տակ, որտեղ, ոչ մեծ բարձրության վրա, շարված էին բենզինի, ավտոյուղի մեծ բիդոններ և արգելակման հեղուկով լի բազմաթիվ սրվակներ: Փորձագետի վերնաշապիկի թևքերը ծավլած էին մինչև արմունկները և մատներն ու դաստակները թաթախված էին սև յուղի մեջ:

- Հիմա ես ձեզ մի ֆոկուս ցույց կտամ, որ նույնիսկ Հարություն Հակոբյանի ուժերից վեր է, - հանդիսավորությամբ ասաց Ալոյանը: Ուշադրություն դարձրեք, սովորական ավտոյուղի բիդոն է, այնպես չէ՞: Ես ձեռքս մտցնում եմ յուղի մեջ... տեսնո՞ւմ եք, և այնտեղից ի՞նչ եմ հանում, ո՞վ կարող է ասել...

- Հը՞ :- խոպոտած ձայնով շտապեցրեց Մամյանը:

- Հանում եմ թիթեղյա կլոր մի տուփ...

Ներկաների ապշած հայացքի տակ, նա տուփը մաքրեց փալասով, պտտեցրեց, հանեց կափարիչը և բավականին էֆեկտիվ շարժումով տուփը մեկնեց Մամյանին:

- Խնդրեմ: Իննսուններեք պրոբի մաքուր ոսկու փոշի է: Մոտ երկու կիլոգրամ:

- Երդվում եմ, հավատացեք, երդվում եմ ինչով ուզում եք, դա իմը չէ, հայրիկինն է: Ես ի՞նչ գործ ունեմ ոսկու հետ: Հայրիկենց գործարանում է ոսկի լինում:

Կարեն Շախուլյանը չդիմացավ:

- Իսկ հայրիկի ոսկին ի՞նչ գործ ունի ձեր տանը, ընկեր կոմերիտական հրահանգիչ, չէ որ դուք օրենքով բաժանված եք:

- Լավ, - միջամտեց Մամյանը, - եկեք ժամանակ չկորցնենք, և որպեսզի երիտասարդը չնեղանա, խուզարկենք նաև նրա հայրիկի գարածը: Չգիտես ինչու, ենթադրում եմ, որ իր հարստությունը թաքցնելու հարցում Անդրանիկ Աթայանի երևակայությունը այնքան էլ փայլուն և բազմազան չի լինելու: Ձեռքերդ գուր մի սրբիր, - դարձավ նա փորձագետին, - համոզված չե՞ս, որ այնտեղ ևս բիդոններ կլինեն:

Կարեն Շախուլյանը զգուշորեն բացեց դուռը, հանեց կոշիկներն ու գուլպաներով անաղմուկ ննջարան մտավ: Լուսնի շողը պատուհանից ներս ընկնելով, լուսավորել էր Լիլիթի փոքրիկ մահճակալը: Աղջիկը թեքվել, վրայից ցած էր նետել բարակ վերմակը, աջ ոտքը դուրս հանել փայտե ճաղերի միջից:

Կարեն Շախուլյանը ուղղեց դստեր վերմակը, հանվեց մթության մեջ ու անկողին մտավ: Երկար ժամանակ չէր կարողանում քնել: Խուզարկության պատկերները մո՞ղձավանջային երազի պես հաջորդում ու հալածում էին նրան: Ա՛յ քեզ ազահություն, ա՛յ քեզ ընչաքաղցություն: Այդ որքան կահույք կար, որքան ճաշասպասք, որքան բյուրեղապակի: Բյուրեղապակյա թասերը, սափորները, մոխրամանները, ծաղկամանները, մատուցարանները, սկուտեղները, մրգահյութերի փքված սափորներն իրենցից կախված փքված բաժակներով ոչ մի տեղ ցուցադրված չէին: Դրանք խցկված էին ամենուրեք պահարանների գլխավերևում և մահճակալների տակ, ինչ- որ արկղերի մեջ և նույնիսկ ավտոտնակներում:

- Ինչի համար, - հարցրեց Կարենը:

- Հիմա մոդա չեն, - պատասխանեց Հակոբ Աթայանի կինը Ալվարդը:

Ո՞նց են քնում այդ մարդիկ: Ինչպե՞ս է, որ չեն վախենում: Ինչո՞ւ չի վախեցել Անդրանիկ Աթայանը, որ այդքան գողացել է: Ինչպե՞ս չի վախենում Հակոբ Աթայանը, որ այդպիսի տան մեջ է ապրում, և միաժամանակ աշխատում կոմերիտմիության շրջկոմում: Ի՞նչ է սովորեցնում, ինչի մասին է խոսում Ալվարդը առաջին դասարանցիների հետ: Գողանալը դեռ մի կողմ, ինչպե՞ս են կարողացել հանգիստ քնել այդ մարդիկ, երբ տանն այդքան հարստություն կա:

Արևիկը «լոտորեա» էր խաղացել իրենց կլինիկայում, որպեսզի ամռանը գնան ծովափ: Լիլիթի առողջության համար ծով էր պետք: Հերթը իրեն էր հասել, տուն էր բերել հավաքված հինգ հարյուր ռուբլին ու կորցրել էր իրեն, չգիտեր ինչ անել, որտե՞ղ պահել դրամը, որ հանկարծ մեկն ու մեկը չգողանա, որ հանկարծ չկորչի: Ու ամեն օր փոխում էր տեղը, տուն էր գալիս թե չէ ստուգում էր, տեղում են արդյոք այդ անիծյալ դրամները: Երբեմն մոռանում էր, որ ուրիշ տեղ է դրել, ստուգում էր հին տեղը ու ճշում սարսափած:

Իսկ սրանք, սրանք ո՞նց են քնել, ու ո՞նց են քնում սրանց նմանները:

Նա հանկարծահաս մի խանդաղատանքով մեկնեց ձեռքը ու շոյեց Արևիկի բաց ուսը... Առանց աչքերը բանալու, Արևիկն ինչ- որ բան մրմնջաց:

- Ի՞նչ, - բարձրաձայն հարցրեց Կարենը հասկանալով, որ դա անխղճություն է, բայց և միաժամանակ շատ ցանկանալով, որ Արևիկն արթնանա ու ինքը նրա հետ խոսի իրեն տանջող հարցերի մասին:

- Եկա՞ր, - հարցրեց Արևիկը:

- Հա, - ուրախացավ Կարենը, - Արև ջան, մի տուն էինք խուզարկում: Ես կյանքումս այդպիսի շքեղ տուն չեի տեսել... Ասես պալատ լիներ... Շողշողում էր ամեն ինչ... Միայն քառասունութ հազար ռուբլի կանխիկ դրամ կար տանը, էլ չեմ ասում...

Արևիկն ինչ- որ բան մրմնջաց:

- Ի՞նչ, - հարցրեց տեղամասային տեսուչը:

- Դրամ ասացիր՝ հիշեցի, հեռախոսային ցանցից զանգահարեցին, - հազիվ արտասանեց կինը, - եթե վաղը վարձը չմուծես՝ կկտրեն:

- Իսկ ինչո՞ւ չէիր մուծում, - բարկացավ Կարեն Շախուլյանը:

- Ձեռքիս փող չկար, Կարեն ջան, - ասաց Արևիկը, հառաչեց, շրջվեց ու քնեց միանգամից:

Հաջորդ ամբողջ օրը Հարություն Մամյանը խուզարկության արձանագրությունը ձեռքին, շրջանի դատախազ Արշակ Միրականյանի հետ ընդունելությունների մեջ էր: Նրանց ընդունեցին և կուսքաղկոմի քարտուղարը, և հանրապետության դատախազը, և ներքին գործերի մինիստրը, և քաղաքի դատախազը: Իսկ հետևյալ օրը հանրապետության դատախազի հրամանով շրջանային դատախազության ավագ քննիչ Հարություն Մամյանը նշանակվեց հանրապետական դատախազության կարևորագույն գործերի քննիչ:

Առաջին հրամանին հետևեց երկրորդ շատ ավելի ծավալուն հրամանը, որով Մետաղյա իրերի կոմբինատի դիրեկտոր Անդրանիկ Աթայանի վերաբերյալ քննչական նյութերը տեղափոխվում էին հանրապետական դատախազություն, կարևորագույն գործերի նոր քննիչի իրավասության տակ: Հարություն Մամյանի ղեկավարությամբ ստեղծվում էր շտաբ, որը պետք է հավաքեր և համակողմանիորեն ուսումնասիրեր կոմբինատի նախկին աշխատող Վասակ Սերոբյանի գրած դիմումներն ու նամակները ուղղված հանրապետության տարբեր ղեկավարներին, կոմբինատում տեղի ունեցող ապօրինությունների և չարաշահումների մասին:

Այդ նյութերը դժվար չէր հավաքելը, քանի որ Վասակ Սերոբյանի դիմումների պատասխանները կոնկրետ ամսաթվերով և կոնկրետ համարներով, գտնվում էին կարևորագույն գործերի նոր քննիչի սեղանին: Հարություն Մամյանը կարողաց առաջին պատասխանը և զարմացած ու տխրությամբ մտածեց, որ եթե այդ առաջին նամակը արդար ու բարեխիղճ մարդու ձեռք ընկներ, դեռևս տասնհինգ տարի առաջ տեղն ու տեղը կլուծվեին հարցերը և չէին լինի ոչ հաջորդ նամակները և ոչ էլ վերջին, այս քստմնելի ոճրագործությունը:

Նա կոնկրետ հանձնարարություններ տվեց շտաբի անդամներին, անհրաժեշտ գրություններով պահանջեց Մետաղյա իրերի կոմբինատում տեղի ունեցած բոլոր ստուգումների արձանագրությունները, մարդիկ ուղարկեց կոմբինատ՝ պահեստը կնքելու համար, միլիցիայի բաժնից վերցրեց Անդրանիկ Աթայանի ղեկավարությամբ թույլ տրված չարաշահումների առթիվ հարուցված և ապա մերժված քրեական գործը, կարգադրեց կասկածի հիման վրա աշխատանքից մեկուսացնել ԲԽՄՍ-ի պետ Շավիղ Պետիկյանին, խուզարկություններ կատարել Անդրանիկ Յուլյակի Աթայանի մյուս երկու որդիների բնակարաններում և այդքանից հետո միայն շրջանային դատախազություն վերադարձավ, նստեց իր գրասեղանի մոտ ու վերցրեց լսավոդը:

- Ինձ մոտ բերեք ձերբակալված Անդրանիկ Աթայանին:

Մետաղյա իրերի կոմբինատի դիրեկտորը զարմանալիորեն չէր կորցրել իր կեցվածքը և մարտական տրամադրությունը:

- Ինձ ինչքա՞ն պետք է պահեք այստեղ, - ասաց նա խոժոռ, թավ հոնքերի տակից: - Ձեր այս... այս կամայականությունների մասին գիտե՞նք քաղկոմում, գիտի քաղաքի դատախազը:

- Գիտեն, - պատասխանեց Հարություն Մամյանը

- Եվ նրանք համաձա՞յն են, որ այսպես ստորացնեք, տանջեք ինձ, առանց գոնե ասելու թե ինչի մեջ եմ մեղադրվում:

- Ես ձեզ դրա համար եմ կանչել, - ասաց կարևորագույն գործերի քննիչը: -Քաղաքացի Անդրանիկ Աթայան, դուք մեղադրվում եք Սպանության մեջ: - Ի՞նչ,- ապշեց գունատվեց, ետ-ետ գնաց կոմբինատի դիրեկտորը:

- Կանխամտածված սպանության մեջ: Եվ առաջարկում եմ ասել ճշմարտությունը: Միայն անկեղծ խոստովանությունը կարող է թեթևացնել ձեր մեղքը: Անդրանիկ Աթայանը երկար ժամանակ չէր կարողանում խոսել: Նա կռացել էր, ասես հարվածից հետո, շնչահեղձ էր լինում, բայց ձեռքով ետ հրեց քննիչի մեկնած ջրով լի բաժակը ու հարցրեց՝ խեղդվելով,

- Բայց ես ո՞ւմ եմ սպանել:

- Ձեր նախկին ընկերոջն ու բարեկամին, ձեր աշխատակցին Վասակ Սերոբյանին:

- Վասակ Սերոբյանի՞ն... նա, նա մեռած է... Վասակ Սերոբյանը... Սատկել է վերջապես:

- Ի՞նչ է, վստահ չէիք ձեր տված թույնի ազդեցությանը:

- Թո՞ւյն, ի՞նչ թույն... նա թունավորվե՞լ է... Միայն իր մաղձից թունավորված կլինի նա, կասկած չունենաք: Ուրեմն չկա՞, էլ չկա՞ իմ հոգեառը... Դուք կարող էիք ինձնից մաղարիչ ուզել, քննիչ:

- Բավական է խաղաք, - բարկացավ Հարություն Մամյանը: - Թե չեք պատկերացնում մեղադրանքի ծանրությունը: Կարո՞ղ եմ արձանագրել, որ հրաժարվում եք սպանության մեղադրանքից:

- Կարող եք, կարող եք, - գլխով արեց կոմբինատի դիրեկտորը: - Ես, իհարկե, հրաժարվում եմ, բայց՝ սրտի ցավով: Մտքովս էլ չէր անցել, հետո՝ ես այն մարդը չեմ, թե չէ նրան սպանած կլինեի հարյուր անգամ:

Հարություն Մամյանը չէր կասկածում, որ կոմբինատի դիրեկտորը կհրաժարվի սկզբում, սակայն հրաժարվելու ձևը ուրիշ էր մի տեսակ, շատ էր տարօրինակ: Անդրանիկ Աթայանը ասես ուրախացել էր, որ իրեն սպանության մեջ են մեղադրում:

- Դե լավ, - ասաց նա ու ձեռքը վերցրեց գրիչը: - Հարցաքննությունն սկսված է: Ձեր անուն, հայրանուն, ազգանունը:

- Անդրանիկ Ցոլակի Աթայան:

- Որտեղ եք ծնվել:

- Հոկտեմբերյանի շրջանի Մրգառատ գյուղում:

- Ե՞րբ:

- 1923 թվականի հուլիսի 4- ին:

- Ի՞նչ ընտանիքում:

- Գյուղացու:
 - Կրթությունը:
 - Բարձրագույն տեխնիկական: Առանց արտադրությունից կտրվելու, հեռակա ավարտել եմ պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկայի ֆակուլտետը:
 - Կուսակցության անդամ եք:
 - 1949 թվականից:
 - Ամուսնացած եք:
 - Երեք որդի ունեմ: Բոլորն էլ բարձրագույն կրթությամբ: Փոքրս, իմիջիայլոց, կոմսոմոլի շրջկոմում է աշխատում:
 - Գիտեմ, - ասաց Հարություն Մամյանը, - տեսել եմ:
 - Որտե՞ղ, - զարմացավ դիրեկտորը: - Այստե՞ղ էր եկել, ինձնո՞վ էր հետաքրքրվում... Տեսնես հիմա ինչ են անում խեղճերը...
 - Կառավարական պարզներ ունե՞ք:
 - Ունեմ: "Պատվո նշան", մի շաբբ մեղալներ "Աշխատանքային արիության համար", "Աշխատանքային գերազանցության համար" և այլն,
 - Դատված եղե՞լ եք:
 - Ոչ:
 - Ստորագրեք այստեղ:
- Անդրանիկ Աթայանը ստորագրեց ու քանի որ դեռևս իր պատասխանների տպավորության տակ էր ասաց ժպտալով.
- Ինչ կենսագրություն է, չե՞... իսկը ակնարկի համար: Իսկ դուք ինձ տեսեք որտեղ եք բերել և ինչ հարցեր եք տալիս: Հետո շա՛տ եք զոջալու, Հարություն Մամյան, շա՛տ...
 - Ճանաչո՞ւմ եք Վասակ Սերոբյանին:
 - Միասին էինք աշխատում: Նախքան նրա թոշակի անցնելը:
 - Վերջին անգամ ե՞րբ եք տեսել նրան:
 - Ստույգ չեմ հիշում: Երևի մի տարի առաջ:
 - Չե՞ք սխալվում:

- Ոչ:

- Ստորագրեցեք այստեղ, - ասաց Հարություն Մամյանը: - Կարդացեք և ստորագրեք այստեղ:

- Ես ձեզ վստահում եմ, - առանց կարդալու ստորագրեց կոմբինատի դիրեկտորը:

Հարություն Մամյանը մի կողմ դրեց արձանագրությունը:

- Իսկ ես ձեզ չեմ վստահում, - ասաց նա: - Չեմ վստահում ու չեմ հավատում: Դուք ակնհայտ սուտ ցուցմունք եք տալիս, քաղաքացի Աթայան:

Կոմբինատի դիրեկտորը թոթովեց ուսերը:

- Այդ ի՞նչն է, որ ճիշտ չեմ ասում:

- Որտե՞ղ եք եղել ապրիլի քսանի լույս քսանմեկի գիշերը:

- Իսկ ի՞նչ օր է դա:

- Հինգ օր առաջ:

- Օրինավոր մարդը ուրիշ որտե՞ղ կարող է լինել գիշերը, եթե ոչ իր տանը:

- Ինչո՞ւ, ձեր նմանների պատճառով, ես, օրինակ, շատ հաճախ գիշերները տանը չեմ լինում: Ինչպե՞ս երեկ: - Չդիմացավ, խայթեց քննիչը: - Որևէ մեկը կարող է հաստատել, որ այդ գիշեր տանն եք եղել,

- Անպայման: Ե՛վ որդիս, և՛ հարսս, և՛ թոռներս. Միասին հեռուստացույց էինք նայում: Հետո թոռներս ու ես գնացինք քնելու:

- Հետո՞ :

- Առավոտյա՞ն... Առավոտյան հարսս նախաճաշ բերեց ինձ...

- Ոչ, գիշերը, գիշերը... Հետո՞ ... Ի՞նչ եք արել գիշերը:

- Տարօրինակ հարց եք տալիս: Քնել եմ, ի՞նչ եմ արել:

- Իսկ եթե ես վկաներ բերեմ, որոնք ապրիլի 20- ի լույս 21-ի գիշերը տեսել են ձեզ Խանջյան փողոցի N 8 շենքի մոտ՝ պատից կախված այ այն կնգուղավոր անձրևանոցով, ի՞նչ կասեք:

Անդրանիկ Աթայանը շրջվեց և նայեց կախիչին:

- Իմ անձրևանոցն է, - ասաց նա: - Ինչպե՞ս է այստեղ ընկել:

- Պատասխանեք իմ հարցին, քաղաքացի Աթայան:

Անդրանիկ Աթայանը կրկին շրջվեց, անձրևանոցին նայեց, լռեց ու խոնարհեց գլուխը,

- Չեք ուզում պատասխանել, թող այդպես լինի: Միայն կրկնում եմ որ դրանով ավելի եք ծանրացնում ձեր վիճակը: Ի՞նչ եք կարծում, քաղաքացի Աթայան, մի թե մենք ծանրագույն մեղադրանք, կառաջադրեինք ձեզ, պատկանելի կոմբինատի դիրեկտորին, շրջսովետի, դեպուտատին ու շքանշանակիր .մարդուն, եթե հիմնավոր, անհերքելի փաստեր չունենայինք մեր ձեռքին, փաստեր, որոնք ապացուցում են, որ այս տարվա ապրիլի 20- ի լույս 21- ի գիշերը դուք եղել եք հանգուցյալ Վասակ Սերոբյանի բնակարանում և թունավորել եք նրան:

Անդրանիկ Աթայանը բարձրացրեց գլուխը և քննիչին նայեց պղտորված աչքերով:

- Անհերքելի փաստե՛ր:

- Կարելի է ասել նույնիսկ՝ ավելի քան անհերքելի:

- Եվ, ի՞նչ փաստեր են դրանք: ներկայացրե՛ք՝ տեսնենք, քաղաքացի քննիչ:

- Իսկ չե՞ք ուզում ինքներդ պատմել, ինքներդ խոստովանել:

- Ես խոստովանելու բան չունեմ:

- Դե, ուրեմն՝ ծանոթացե՛ք փաստերին: Քննիչը սեղանին դրված տուփից հանեց և Անդրանիկ Աթայանի առաջ դրեց թեյի սովորական կոտրված մի բաժակ: - Մա այն բաժակն է, - ասաց նա, - որով դուք թույն եք տվել հանգուցյալ Վասակ Սերոբյանին: Իսկ սա, - ասաց նա՝ տուփից դուրս բերելով փոքրիկ մի սրվակ, - հենց այն սրվակն է, որից թույն եք լցրել բաժակի մեջ: Իսկ սա, - ավելացրեց նա քորոցով իրար ամրացված ինչ- որ թղթեր մոտեցնելով կոմբինատի դիրեկտորին, - սա, քաղաքացի Աթայան, փորձաքննության պաշտոնական եզրակացությունն է, ըստ որի թե բաժակի, թե թույնի սրվակի վրա ձեր մատնահետքերն են: Ձեր մատնահետքերը:

- Իսկ իմ մատնահետքերը ձեզ որտեղից, - չգիտես ինչու առաջինն այդ փաստի վրա զարմացավ կոմբինատի դիրեկտորը:

Հարություն Մամյանը մի քիչ ամաչեց,

- Երեկ, երբ նստած էիք այ այն սեղանին, ինքներդ էիք թողել ապակու վրա: Եվ ուրեմն ինչո՞վ կարող եք առարկել մեր ներկայացրած փաստերին, քաղաքացի Անդրանիկ Աթայան...

Կոմբինատի դիրեկտորը հանկարծ հուսահատ տարածեց ձեռքերը, հետո բռնեց գլուխն ու սկսեց կատաղորեն շփել քունքերը:

- Բավական է, - ասաց նա աղերսագին, - բավական է, այլևս ոչ մի հարց, աղաչում եմ, ոչ մի հարց:, Ես ոչինչ չեմ հասկանում: Երևի խելագարվել եմ: Ես հիմա ընդունակ չեմ պատասխանելու: Ես ոչինչ, չեմ| հասկանում: Թողե՛ք հանգստանամ, ուշքի գամ, . . . Հետո կասեմ, ամեն ինչ կասեմ...

- Թող այդպես լինի, - ձեռքը հեռախոսին տարավ Հարություն Մամյանը: Գնացե՛ք, հանգստացե՛ք, մտածե՛ք, և՛ երբ ասելու բան ունենաք, հերթապահին հայտնե՛ք, որ ուզում եք

տեսնել ինձ: Թեև, - ավելացրեց կարևորագույն գործերի քննիչը, - ես ձեր փոխարեն չեի ձգձգի... Եթե այդ փաստերը ձեզ լրիվ չեն համոզում, որ լռելն ավելորդ է, կարող եմ ուրիշ փաստ էլ բերել:

` - Ի՞նչ փաստ, ի՞նչ փաստ, ի՞նչ փաստ, - հանկարծ հիստերիկ ճչաց կոմբինատի դիրեկտորը:

- Եվս մի ապացույցի որ այդ գիշեր եղել էք Վասակ Սերոբյանի տանը: Այլապես ձեր բնակարանում ի՞նչ գործ ունեին նրա նամակների պատասխանները, Անդրանիկ Աթայան:

- Ասացեք, որ տանն ինձ, գժվում եմ, - բղավեց Անդրանիկ Աթայանը, - մարդ չե՞ք, չե՞ք տեսնում, որ գժվում եմ:

- Ինչ էք կարծում, կխոստովանի՞, ընկեր Մամյան, հարցրեց Կարեն Շախուլյանը:

- Ուրիշ ելք չունի, - մտածկոտ ասաց Մամյանը, - Բայց չեմ հասկանում, թե ինչու է ձգձգում: Ինչի՞ վրա է հույսը դրել:

Նրանք նստած էին օղակաձև այգում, Ռադիոյի շենքից ցած: Երեխաները վազվզում էին հսկա շատրվանի շուրջը, մագլցում հատկապես երեխաների համար սարքած վեր ու վար անում ճոճանակների վրա ու ճչում երջանիկ:

Արևիկն ու Հասմիկը, Մամյանի բնութագրումով, թխսկանների նման պտտվում էին երեխաների շուրջն ու զգուշացնում անընդհատ,

- Լիլիթ, հանգիստ:

- Նանար, իսկոք մնա:

- Արսեն, այնպես արա, որ մյուս անգամ էլ բերեմ:

- Պատկերացրու, երեկ քո ասածի մասին էի մտածում, - խոսքը շարունակեց Մամյանը, Կոմբինատի դիրեկտորին ասացի՝ ”Եթե ես լինեի քո փոխարեն...” ու միանգամից քեզ հիշեցի: Մտածելու բան է, գիտե՞ս, իսկապես, ես ինչպե՞ս կարող եմ նրա փոխարեն որոշում կայացնել... Ինչպե՞ս կարող եմ հայտնվել հանցագործի, մարդասպանի մորթու մեջ... Բարդ հարց է:

- Խնդրեմ, իբր թե մեզ այգի են բերել, - ծիծաղեց Հասմիկը, հայտնվելով տղամարդկանց առաջ: Երեխաներին զցել են մեզ վրա, իսկ իրենք էլ իրենց անիծյալ գործերից են խոսում:

- Այ կնիկ, կողքիս նստո՞ւմ ես, որ խոսեմ, - սուտ բարկացավ Հարություն Մամյանը:

- Ահա, նստում եմ, խոսիր:

- Ասում են խանութներում ձեռքի քուրք են ստացել, լավ փափկեցնում է մաշկը, - ասաց Հարություն Մամյանը: - Չգիտեմ՝ որտեղից գտնեմ... Օստինյանն էլ երեկ հետաքրքրվում էր, թե պասուց տոլմայի մեջ կարմիր լոբի գցո՞ւմ են, թե չէ...

- Ի՞նչ քուրք, ի՞նչ լոբի, - զարմացավ Հասմիկը: - Այդ դո՞ւ ես տոլմա եփում:

Կարենը քրքջաց:

- Ջրույց ենք անում, էլի, այ կին, - լրջորեն ասաց Մամյանը: - Բա ինչի՞ մասին խոսենք
- Ա՛խ, Հարություն, Հարություն, - հասկացավ, ժպտաց Հասմիկը: - Ուրեմն՝ քո կարծիքով մեր խոսակցության թեմաները միայն կոսմետիկան ու խոհանոցն են, հա՞: Մտքներովդ չանցնի: Որ իմանաք, թե երբ մեզ մենակ եք թողնում, ինչի՞ մասին ենք խոսում...

- Արգելված հարված է, Հասմիկ, հանձնվում եմ:

- Այդպես, - բավարարված ծիծաղեց Հասմիկը: - Իսկ եթե հանձնվում ես, պարտավոր ես նաև տուգանք վճարել:

- Հենց տեղն ու տեղը, - համաձայնեց Հարությունը:

- Ինչու՞ տեղն ու տեղը, մեզ տար որևէ ռեստորան...

Արևիկը, որ մոտենում էր երեխաների հետ, որսաց վերջին բառը:

Ընկեր Մամյան, իսկապես, բա մեզ մաղարիչ չե՞ք անելու կարևորագույն գործերի քննիչ նշանակվելու առթիվ:

Տեղն ու տեղը, հենց այստեղ, - կրկնեց Հարություն Մամյանը:

Ընկեր Մամյան, գուցե իսկապես որևէ տեղ տանենք: Մեկ է՝ չենք պրծնի...

Չեմ կարող, Կարեն ջան, - շշուկով ասաց քննիչը: - Ասել եմ, որ եթե պետք լինեմ, ինձ Օղակաձև այգում գտնեն: Ո՞վ գիտե, գուցե բացվում է կոմբինատի դիրեկտորը:

Ուրեմն, որպես մաղարիչի ավանս, մեզ հյուրասիրում եք պաղպաղակով, - ասաց Կարեն Շախուլյանը:

Պաղպաղակ, պաղպաղակ, պաղպաղակ, - վեր թռան երեխաները և առանց հարցնելու վազեցին դեպի գույնզգույն ամպահովանիների տակ դրված սեղանները:

Երկար ճշտելուց հետո, թե ով որքան է ուզում, և երեխաներից ում ինչքան կարելի է պաղպաղակ տալ, Հարություն Մամյանը մտքում թվերը կրկնելով շարժվեց դեպի կրպակը, սակայն, մեծ սկուտեղով նրան ընդառաջ եկած գեղեցկադեմ աղջիկը կանգնեցրեց նրան.

- Բերում եմ, հոգի ջան, արդեն բերում եմ, դուք հանգիստ նստեք:

Սկուտեղի վրա պաղպաղակով լի սկահակներ էին, ծիրանի հյութով լի բաժակներ և շոկոլադի սալիկներ:

- Բայց ո՞վ է պատվիրել, - զարմացավ քննիչը:

- Կարենը, - առանց աչքը թարթելու, ասաց գեղեցկուհին և նեղ իրանը նազանքով ճոճելով, մոտեցավ սեղանին:

Պայծառ ժպիտով նայելով գունատված տեղամասային տեսչին, ամեն անգամ աշխատելով ոտքերով կամ ուսերով ինչ-որ կերպ դիպչել նրան, աղջիկն արագորեն դասավորեց սկահակներն ու բաժակները և նվիրված աչքերը Կարեն Շախուլյանից չհեռացնելով, հարցրեց մեղմորեն.

- Ուրիշ ինչ կուզեիր, Կարեն ջան:

Արևիկը ամուսնուն նայեց ապշած ու կարկամեց:

- Բնակչուհի Ջիրոյան, ի՞նչ է նշանակում այս ամենը, - պոռթկաց Կարեն Շախուլյանը, մինչ Հարություն Մամյանը, արդեն ամեն ինչ հասկանալով, ծիծաղում էր բռունցքի մեջ:

- Անուշ արեք, ցավդ տանեմ, - ասաց Սվետան, քանի որ նա, իրոք, երկու բարձրահարկ շենքերի մեջ գտնվող միահարկ տան բնակչուհի չքնաղ և անամոթ Սվետան էր: - Հյուրասիրում եմ, ազիզ ջան:

- Անմիջապես ստացեք դրամը, - Մամյանի ծիծաղից ավելի ամաչեց ու բարկացավ տեղամասային տեսուչը:

- Ինչի՞, ազիզ ջան, - քնքշությամբ առարկեց Սվետան, - ես որ մարդ եմ դարձել, քո շնորհիվ չէ՞: Ես որ աշխատանքի եմ անցել ու կանգնել վաճառասեղանի ետևում, ազնիվ ճանապարհի վրա, քո շնորհիվ չէ՞... Եթե քո դաստիարակչական գրույցները չլինեին, որ անց էիր կացնում գիշերները, մեր տանը...

Հասմիկն ու Արևիկը մեկ Սվետային էին նայում, մեկ Կարենին:

- Լսեք, դուք հո, դուք հո... - եռ էր գալիս Կարենը... - Սա ի՞նչ անպատկառություն է, բնակչուհի Ջիրոյան... Ես ձեզ հետ ե՞րբ եմ գիշերները գրուցել...

- Սվետա, վերջ տուր, - ծիծաղից թուլանում էր Հարություն Մամյանը: - Վերջ տուր, այ աղջի, կատակից անցավ:

- Վա՛յ, - ձեռքերն իրար խփեց Հասմիկը, - Հարություն, դու էլ ես ճանաչո՞ւմ...

- Ես ձեզ այնքան եմ հարգում, այնքան եմ պարտք, որ չեմ նեղանում՝ հեզությամբ արտասանեց աղջիկը և թեքվելով Մամյանի ականջին՝ շնջաց. - Ասեք, որ քիթը շատ վեր չցցի և ձեռք քաշի ինձանից. - Ցտեսություն, անուշ արեք, - դարձավ նա բոլորին - Ինչ հրաշալի երեխաներ են... Ներողություն... - ու նեղ իրանը նազանքով օրորելով, հեռացավ

- Այ տղա, քո ականջին ինչ ասաց, - իրար էր խառնվել Հասմիկը:

- Կարե՞ն, ուրեմն դու գիշերները դաստիարակչական գրույցներ ես անցկացնում, - չէր հանգստանում Արևիկը:

- Արևիկ ջան, եթե ես... - ուզում էր սկսել Կարենը, բայց Մամյանը ընդհատեց նրան:

- Սեր բուֆետում էր աշխատում, - ասաց նա - Խախտումներ էր թույլ տալիս: Ուզում էինք հեռացնել, բայց երեք երեխա է պահում և ծնողներն էլ կույր են, խղճացինք. ու թույլ տվեցինք ազատվել համաձայն իր դիմումի. Ըստ որում՝ մի քիչ էլ պակաս է, զգացի՞ք, - ասաց նա, - խեղճ, դժբախտ մարդ է... Կարեկցանքի արժանի...

- Չէ մի, երեք երեխա ունի, - կասկածեց Հասմիկը:

- Ես չասացի, թե ունի, Հասմիկ, ասացի, որ պահում է: Եղբոր երեխաներն են... Ծնողներն ավտովթարի զոհ դարձան... Ըստ որում, ինքն էլ նույն ավտուժեքենայի մեջ է եղել... Ուղեղի ցնցում է ստացել... Երկար ժամանակ բուժվում էր հոգեբուժարանում... ,

Կանանց հետ միասին զարմացած ու հետաքրքրությամբ նրան էր լսում նաև Կարեն Շախույյանը:

- Բա այդ վիճակում ինչո՞ւ թույլ տալ, որ այդպիսի ծախսեր անի, - հուզված մրմնջաց Արևիկը:

Հարություն Մամյանը բարձրացավ տեղից.

- Մի անհանգստացեք, հիմա ես կմտտենամ և կվճարեմ հաշիվը: Համոզված եղեք: Հը՞, նորությո՞ւն կա, - հարցրեց հեծիկ իրեն մոտեցած միլիցիայի աշխատողին:

- Ձեզ է ուզում, ընկեր Մամյան, - շնչասպառ ասաց միլիցիոները: - Ասում է՝ ուզում եմ խոստովանել:

- Խնդրեմ՝ սա էլ մեր կիրակնօրյա զբոսանքը, - վիճակին սովոր, համակերպված ժպտաց Հասմիկը:

- Ինչ անեմ, Հասմիկ ջան, - ձեռքերը պարզեց քննիչը, - դե դուք կերեք, իսկ ես... - նա նայեց սեղանին ու բարձրաձայն ծիծաղեց: - Խնդրեմ, մինչև մենք հոգեկան ցնցում էինք ապրում, երեխաները հանգիստ կերել են բոլոր պաղպաղակները: Հիմա ես նորից կպատվիրեմ:

- Չէ, չէ, - սարսափած վեր թռավ Կարենը, - մի ուրիշ տեղ գնանք: Հա՞...

Նրանք դարս եկան ամպահովանու տակից և քայլեցին կարմրավուն արահետով: Կարեն Շախույյանը դստեր ձեռքը բռնած ետ ընկավ մի քիչ, սպասեց մինչև որ մոտենա քննիչը: Մամյանը շարունակում էր կամացուկ ծիծաղել:

- Վա՛յ, Կարեն, Կարեն, ես քեզ ավելի խեղճ վիճակում չէի տեսել:

- Ինչ անեմ, - ասաց տեսուչը, - լկտիության առաջ ես միշտ էլ խեղճանում եմ, ընկեր Մամյան: Մանավանդ՝ երբ այդ լկտին կին է... Բայց ի՞նչ դերասանուհի է... ինչպե՞ս էր խաղում... Եվ ինչի՞ համար, չեմ հասկանում, ինչի՞ համար:

- Նախ, - պատասխանեց Հարություն Մամյանը, - ինչպես երևում է, շատ ես նեղում նրան և ինքդ ես այդ աղջկան ծայրահեղության մղում: Հենց խոսեց, ես հասկացա, որ քո նկարագրած Սվետան է: Եվ երկրորդն ու ամենակարևորը այն է, որ նման տեսակի ամուսին, ընտանիք չունեցող և հատկապես գեղեցիկ աղջիկները սոսկալի նախանձով են նայում երջանիկ, իրենց ամուսիններին նվիրված, ամուսիններին հավատացող և մեծարող կանանց: Նրանց մեծ բավականություն է պատճառում տեսնելը, թե այդ կանայք ինչպես են այլայլվում, դուրս գալիս հավասարակշռությունից, ինչպես են սկսում խանդ ապրել, թունավորվել ու թունավորել իրենց ամուսիններին: Նրանք դրանով ուզում են ասել մեր կանանց, թե, հա, հա, դուք էլ կարծում եք, թե կարգին ամուսիններ ունեք, ուզենանք՝ հենց վաղն էլ մերը կլինեն... Հասկացա ր, ձախորդ երիտասարդ:

- Դա հասկացա, ասաց Կարենը: - Բայց չհասկացա, թե դուք ինչեր էիք հորինում նրա կույր ծնողների, երեք որբերի, ուղեղի ցնցման մասին:

Հարության Մամյանը ծիծաղեց սրտանց:

- Խնդրեմ: Մա էլ քո երախտագիտությունը թակարդից քեզ դուրս բերելու համար: Դա էլ հասկացիր, եղբայր, միշտ չէ, որ կանայք ուզում են լսել ճշմարտությունը: Հավատա իմ փորձին: Նրանք ավելի հաճախ ընդունում են սուտը: Միայն թե՛ անպայման չափազանց և զգայացունց պետք է լինի այդ սուտը, որպեսզի նրանք հնարավորություն ստանան կարեկցել, խղճալ որևէ մեկի: Ուրիշ հարցեր կա՞ն:

- Ոչ, հաջողություն ձեզ, ընկեր Մամյան:

- Շնորհակալություն, տղաս, - ասաց Մամյանը: - Դա ինձ շատ է պետք:

- Ես ուզում եմ խոստովանել, - ասաց կոմբինատի դիրեկտորը: - Հարցաքննեք ինձ:

Կարևորագույն գործերի քննիչը ձեռքն առավ գրիչը:

- Ես ձեզ լսում եմ:

- Այդ օրը ես իրոք եղել եմ Վասակ Սերոբյանի բնակարանում:

- Մենք դա գիտենք, - ասաց Հարություն Մամյանը: - Հիմա պետք է մանրամասն պատմեք, թե ինչպես եղավ, որ վճռեցիք այցելել նրան: Չէ՞ որ ձեր հարաբերությունները, որքան մեզ հայտնի է, ծայրաստիճան սրված էին:

- Այո, - ասաց կոմբինատի դիրեկտորը, - սրված էին: Բայց ինքը կանչեց ինձ:

- Ո՞վ կանչեց: Մերոբյա՞նը:
- Վասակ Մերոբյանը: Քնած էի, զանգահարեց, ասաց, որ հիվանդ է և ուզում է տեսնել ինձ:
- Ենթադրենք, ենթադրենք, հետո՞ ...
- Ես զարմացա ու հարցրեցի, թե ի՞նչ է ուզում ինձնից: Ասացի՝ վաղը կգամ: Ինքն էլ, թե՛ գործը մինչև առավոտ չպետք է հասնի: Քեզ համար եմ ասում, ասաց նա, ուշ կլինի:
- Այդպե՛ս, - գլուխը բարձրացրեց քննիչը, - և դուք հանկարծ մտածեցիք, որ կարող եք մեկընդմիջտ ազատվել նրանից:
- Չհասկացա:
- Ուրեմն ինչո՞ւ մտածեցիք թույնի մասին:
- Ի՞նչ թույն: Ոչ մի թույն էլ չի եղել:
- Չեղավ, - գրիչը կրկին մի կողմ դրեց Մամյանը: - Դուք ինձ կանչեցիք և հայտարարեցիք, որ ուզում եք խոստովանել: Ուրեմն համարձակություն ունեցեք ամեն ինչ անկեղծ պատմելու: Լռում եք: Այդ դեպքում ինձ լսեք, ես կշարունակեմ, իսկ եթե որևէ տեղ սխալվեմ, ուղղեք ինձ: Համաձայն եք:

Չնայած իր ողբերգական վիճակին, կոմբինատի դիրեկտորը քննիչին տվեց.

- Անեկդոտ չէ, ի՞նչ է: Դեպքն ինձ հետ է պատահել, բայց կարծում եք, թե իրողությունը ինձնից լավ գիտեք:
- Որովհետև ես փաստերով եմ առաջնորդվում: Միայն ու միայն փաստերով, - ասաց քննիչը: - Վասակ Մերոբյանը իր բողոք- նամակներով տարիներ շարունակ ձեզ հանգիստ չի տալիս: Գրում է որտեղ պատահի և ում պատահի՝ խնդրելով ու պահանջելով պատասխանատվության կանչել ձեզ՝ իբրև պետական ունեցվածքը հափշտակողի: Ըստ նրա հանցագործ կապի մեջ մտնելով ոսկեջրած գդալների արտադրամասի պետի և ոսկու պահեստապետի հետ, ձեզ հաջողվել է ամեն տարի ոսկու և ոսկու փոշու հսկայական ավելցուկ ստեղծել ու յուրացնել:

Կոմբինատի դիրեկտորը ծիծաղեց:

- Հսկայակա՛ն... Մեր գործից քիչ թե շատ հասկացող մարդը կհավատա՞, որ ոսկեջրման արտադրամասից կարելի է ոսկի յուրացնել... Այնտեղ յուրաքանչյուր միլիգրամը, փոշու յուրաքանչյուր հատիկն այնպիսի խստագույն հաշվառման մեջ է, որ աշխատողների մորուքներն ու մազերն էլ են ստուգում, որպեսզի ոսկու փոշի դուրս չտանեն հանկարծ: Իսկ եթե...

Մամյանը բարձրացրած ձեռքով ընդհատեց նրան:

- Ես ասացի, որ միայն փաստերով եմ առաջնորդվում, քաղաքացի Անդրանիկ Աթայան:- Ես այդ թեմայով չեի խոսի, եթե ձեր որդու և ձեր ավտոտնակներից, միայն ավտոյուղի բիդոնների միջից հայտնաբերած չլինեինք մոտ երկու կիլոգրամ ոսկու փոշի և ավելի քան տասը կիլոգրամ արծաթե ձուլվածք: Այդ բոլորը ընդամենը բիդոնների միջից: Եվ հանկարծ չասեք, թե որդու ավտոտնակում հայտնաբերածը ձեզ չի պատկանում, Անդրանիկ Աթայան: Չեք կարող համոզել, թե կոմերիտության շրջկոմում ոսկու փոշի են վճարում աշխատավարձի փոխարեն, ինչպես մի ժամանակ Քլոնդայքում:

Կոմբինատի դիրեկտորը փակեց աչքերը և ետ ընկավ աթոռին: Մի պահ լռություն տիրեց, և քննիչին թվաց, թե ամբաստանյալը ուշագնաց է եղել:

Սակայն ուրիշ կառուցվածք ուներ այդ մարդը:

Նա բացեց աչքերը, քննիչին նայեց անսահման ատելությամբ ու շշնջաց- հառաչեց աստամների արանքից.

- Ես այդպես էլ գիտեի... Ոչ ոք չի վայելել... ոչ մեկը...

- Այդ թեմայով մենք դեռ շատ ժամանակ կունենանք խոսելու, - ասաց Մամյանը: - Իսկ հիմա անցնենք առաջ: Դուք միայն ոսկու և արծաթի հափշտակությամբ չեք բավարարվել: Չարաշահելով ձեր պաշտոնական դիրքը, բազմաթիվ հանցանքներ եք գործել և օրինականության խախտումներ

թույլ տվել: Այդ բոլոր փաստերը հիմա ստուգվում են նորից... Եվ քանի որ Վասակ Սերոբյանը շարունակել է գրել այդ ապօրինությունների մասին, ձեր մեջ մի օր միտք է հղացել մեկուսացնել նրան: -Նա նորից բարձրացրեց ձեռքը և ընդհատեց կոմբինատի դիրեկտորին: - Երբ հաջողացրել եք Սերոբյանին թոշակի ուղարկել, մի պահ հանգստացել եք, Ենթադրել եք, թե նա այլևս տվյալներ չի ունենա և կլռի: Սակայն քանի որ չեն դադարել ստուգող հանձնաժողովներն ու նամակները, գայրույթի և հուսահատության պահին թույն եք ձեռք բերել, ինչ- որ պատրվակով մտել եք Սերոբյանի տուն և նրան հասցրել հոգեկան այնպիսի վիճակի...

- Ես լսում եմ, բայց այդ բոլորը ցնդաբանությունն է, - պոռթկաց կոմբինատի դիրեկտորը:

- ... որ նա սրտի նոպա է ունեցել և ձեզ խնդրել է մի բաժակ ջուր տալ իրեն գուցե և դեղ խմելու համար: Ահա հենց, այդ ժամանակ էլ աննկատելի բացել եք ձեզ հետ բերած սրվակը, թույն եք լցրել բաժակի մեջ և մատուցել նրան: Փաստը՝ բաժակի և սրվակի վրա մնացած մատնահետքերը: Հետո քրքրել եք դարակները, գտել ձեզ վարկաբեկող նյութերի պատճեններն ու պաշտոնական պատասխանները, փաթաթել թղթի մեջ, դրել անձրևանոցի տակ ու հեռացել:

- Սուտ է, - գոռաց կոմբինատի դիրեկտորը, - սկզբից մինչև վերջ սուտ է: Ոչ մի թույն չի եղել: Իմ մեղքերը քիչ չեն, ինչու եք սպանությունն էլ վրաս բարդում: Ես մարդ չեմ սպանել:

- Միայն փաստեր, - հանգիստ ասաց քննիչը:- Միայն փաստեր: Վկա ունենք, որի հետ շուտով կհանդիպեք առերես հարցաքննության ժամանակ: Այդ վկան ցուցմունք է տվել, որ ձեզ տեսել է, երբ դուրս եք եկել մուտքից և հեռացել գրեթե պատերին քսվելով:

- Դռնապանը, - ակամա մրմնջաց Աթայանը:

- Այո: Դռնապանը: Հիշեցի՞ք: Ասում էի, չէ՞, որ ամեն ինչ կհիշեք: Նա պնդում է, որ հեռանալիս դուք արտասանել եք բառացիորեն հետևյալ խոսքերը. ”Ես քո հերն եմ անիծել... Հո պրծա... Հո պրծա քեզանից... Ես քո հերն եմ անիծել”: Ի՞նչ են նշանակում այդ խոսքերը, Անդրանիկ Աթայան:

Անդրանիկ Աթայանը ծանր տնքաց.

- Ինչ ուզում եք՝ արեք, - ասաց նա:- Ըստ ձեր փաստերի՝ իսկապես ես եմ սպանել: Ձեր փոխարեն ես էլ այդպես կմտածեի... Հաստատ: Որովհետև, ինչ- որ ասում եք՝ ճշմարտության նման է: Ճշմարտության նման է, բայց ճիշտ չէ: Ես մարդ չեմ սպանել: Ուզում եք դուք ինձ սպանեք՝ պրծնեմ... ճիշտ չէ...

- Նորի՞ց, - հոնքերը կիտեց կարևորագույն գործերի քննիչը:

- Նորից, հազար անգամ, - հանկարծ փղձկաց, լաց եղավ կոմբինատի դիրեկտորը: - Ես մարդ չեմ սպանել: Երեխա չեմ, հասկանում եմ, տեսնում եմ, որ փաստերն իմ դեմ են... Տեսնում եմ... Բայց ինչ որ ասում եք՝ այդպես չի եղել:

- Բա ինչպե՞ս է եղել, - սրտնեղած հարցրեց քննիչը, - ինչպե՞ս...

- Հիմա կասեմ: Մի բաժակ ջուր տվեք, հա՞...

“Ժամանակ” հեռուստատեսային ինֆորմացիոն ծրագիրը ավարտին մոտ էր, մարզական նորություններն էին հաղորդում, երբ հնչեց հեռախոսի զանգը:

- Արևի՛կ, - ձայնեց Կարեն Շախուլյանը:

- Վերցնում եմ, - միջանցք-հուլից պատասխանեց Արևիկը և անմիջապես էլ ինքը ձայն տվեց.- Քեզ են ուզում, Կարեն:

- Ո՞վ է, - հայացքը էկրանից չկտրելով, սրտնեղած հարցրեց տեղամասային տեսուչը:

- Սվետան, - ասաց Արևիկը:

- Ո՞վ, - տեղից վեր թռավ տեսուչը: - Դե, եթե այս ժամին զանգ է տալիս, ուրեմն Սվետան կլինի, էլի, Կարեն ջան: Երևի գիշերային դասախոսության է հրավիրում:

Մինչև հեռախոսին հասնելը, Կարենը հանկարծակի մեկնեց ձեռքը, փորձեց բռնել կնոջը, բայց նա ծիծաղելով խոհանոց փախավ:

- Լսում եմ, - ասաց տեսուչը լսափողի մեջ:
 - Ընկեր Շախույան, դուք եք, - հարցրեց իրոք մի կանացի ձայն:
 - Ես եմ, լսում եմ:
 - Մելինե Մուրադյանն է, ընկեր Շախույան, Խանջյան փողոցի N8 շենքից:
 - Լսում եմ, տիկին Մելինե, - զարմացավ Կարեն Շախույանը: Լսափողի մեջ ինչ- որ խեղդված, խորհրդավոր շշուկ լսվեց և արագ շնչառության ձայն:
 - Ոչինչ չեմ հասկանում, բարձր խոսեք, - առաջինն ինքը ձայնը բարձրացրեց տեղամասային տեսուչը:
 - Էլի եկել է, - շնջաց տիկին Մելինեն:
 - Ո՞վ է եկել,
 - Նա, անձրևանոցով մարդը, կապի բաժանմունքի պետը: Բայց հիմա հազի՛ն անձրևանոց չկա:
 - Ինչու՞ է եկել, - ոչինչ չհասկացավ տեսուչը: - Որտե՞ղ է:
 - Էլի նույն ծառի տակ: Կանգնել՝ մեր շենքին է նայում: Դուք ինձ վրա չբարկանաք, ընկեր Շախույան: Ուզում էի աղբը թափել: Լուսամուտից ցած նայեցի ու մեկ էլ տեսա...
- Տեղամասային տեսուչը ափով փակեց լսափողն ու ծիծաղեց անձայն:
- ... որ տեսա կանգնած է նույն տեղում, ծառի ստվերի տակ թաքնված, անմիջապես ձեզ հիշեցի ու մտածեցի չէ որ մենք ձեր օգնականներն ենք և պարտավոր ենք աչալուրջ լինել: Ճիշտ չէ՞, ընկեր Շախույան: Հիմա ի՞նչ եք կարգադրում... Շարունակե՞նք հսկողությունը, թե ինչ անենք: Ճիշտ կլինի, եթե իմանանք մեր հետագա գործողությունների ծրագիրը:
 - Մե՞նք, - հարցրեց Կարեն Շախույանը, - Դուք մենակ չե՞ք:
 - Սկզբում մենակ էի, ընկեր Շախույան, բայց մտածեցի, որ մինչև զանգահարեմ ձեզ, նա կարող է թաքնվել, անհետանալ, դրա համար էլ զանգահարեցի եղբայր Խաչիկին և տիկին Արաքսյային, գիտեք, չէ, ձեր ուսուցչուհին է եղել: Հիմա նրանք հսկողության տակ են առել կապի բաժանմունքի պետին... Ես նրանց տեսնում եմ: Խաչիկ եղբայրը ցախավելը վերցրած իբր թե մայթն է ավլում, իսկ տիկին Արաքսյան զբոսանքի է դուրս բերել շանը: Գլխի չի ընկնի, չէ՞, ընկեր Շախույան:
 - Իսկ դուք տնից եք զանգահարում, - հազիվ պահելով իրեն, որ չքրքջա, հարցրեց տեղամասային տեսուչը:
 - Ոչ, ի՞նչ եք ասում, ես կարդացել եմ, գիտեմ: որ նման դեպքերում հեռախոսը վստահելի չէ... փողոցի ավտոմատից եմ զանգահարում:

Կարեն Շախուլյանը պատկերացրեց Հայկազ Ավետիսովի թշվառ վիճակը:

- Տիկին Մելինե, - ասաց նա ամենայն լրջությամբ: - Կարգադրում եմ վերացնել հսկողությունը, դիտակետերից զգուշությամբ հանել Խաչիկ եղբորը և տիկին Արաքսյային ու հանգիստ գնալ քնելու: Ինձ հայտնի է, թե նա ինչու է այդտեղ: Անհանգստանալու բան չկա: Շնորհակալություն: Բարի գիշեր:

Նա լսեց Մելինե Մուրադյանի հիասթափված «բարի գիշերը», ցած դրեց լսափողը, ծիծաղեց ու ձայնեց խոհանոցի կողմը.

- Արևիկ, որ մեկ էլ դետեկտիվ ես կարդացել, ձեռքիցս չես պրծնի...

- Ինչ որ սկզբից ասացի, հենց այդպես էլ եղել է, - ասաց կոմբինատի դիրեկտորը: - Կեսգիշեր էր, երբ ինձ զանգ տվեց Վասակ Մերոբյանը ու խնդրեց, որ գնամ իրենց տուն: Շատ զարմացա: Ասացի՝ վաղը կգամ: Ասաց՝ չէ, վաղը ուշ կլինի, հիմա եկ, գործի համար է: Մերոնք քնած էին, վեր կացա, սուսուփուս դուրս եկա, մի պատահական ավտո կանգնեցրի...

- Իսկ ինչու ձեր ավտոյով չգնացիք:

- Տնեցիք քնած էին, - սրտնեղեց կոմբինատի դիրեկտորը: - Բուրբին իրա՞ր խառնեի:

- Հետո :

- Հետո բարձրացա երրորդ հարկ, սեղմեցի 9-րդ բնակարանի զանգի կոճակը ու մեկ էլ լսեցի, որ Վասակը ներսից ձայն է տալիս ինձ, ”Ներս արի, դուրը բաց է”: Դուռն իսկապես բաց էր: Ներս մտա, տեսա Վասակը պառկած է անկողնու մեջ:

- Ի՞նչ է, - ասացի, - ինչի՞ ես կանչել ես կեսգիշերին:

- Անդրանիկ, - ասաց նա, - կանչել եմ ասեմ քեզ, որ դու հաղթեցիր ինձ:

Ես շատ զարմացա...

- Քեզ ի՞նչ է պատահել, - ասացի, - հո երազ չե՞ս տեսել:

- Չէ, - ասաց Վասակը, - հոգնեցի քո դեմ կովելուց: Ինչ արեցիք ոչ մի բան դուրս չեկավ: Աշխարհն իրար խառնեցի, բայց ոչ մեկը չեղավ, որ իմ կողմից լինեի, բոլորը քեզ են պաշտպանում: Կամ էլ չեն ուզում վատամարդ դառնալ, մեջ ընկնել, շարժվել տեղից: Ուրեմն երևի ճիշտը դու ես:

- Բայց խոսքը ինչի՞ մասին էր, Անդրանիկ Աթայան: Ի՞նչ էր ուզում նա ձեզանից:

- Այս մի քանի օրերին մեկուսարանի չոր տախտակների վրա ես շատ եմ մտածել այդ մասին, քննիչ, ու եկել եմ այն կարծիքին, որ մեր կոիվը երևի մարդկության ամենահին կոիվն է եղել, - ասաց նա: - Չախորդ ու հաջողակ մարդկանց կոիվը: Չեմ թաքցնի, ու արդեն աչքով տալու

հարց էլ չկա, որովհետև բանը բանից անցել է, բայց մինչև հիմա ես հաջողակ մարդ եմ եղել: Մինչև հիմա: Ավելի պարզ ասեմ: Երկու ընկերներ տուն են սարքում իրենց համար: Իրար կողքի: Մի տարի չանցած՝ պարզվում է, որ մի ընկերոջ սարքած տունը ավազի վրա է եղել, փլվում է, ծառերն էլ չորանում են չգիտես ինչու, փեթակների մեջ էլ հիվանդություն է ընկնում, կոտորվում են մեղուները: Իսկ մյուսը հենց տան հիմքը փորելու ժամանակ կճուճով ոսկի է գտնում, ծառերն էլ բարձրանում ու բերքով են լցվում, փեթակներն էլ մեղր են տալիս իրենց համար: Այ ես այդ երկրորդ ընկերն եմ: Ուր ոտք եմ դրել՝ կանաչել է, ինչի ձեռք եմ տվել՝ հաց է դարձել, ինչ գործ բռնել եմ՝ հաջողվել է: Այդպես է: Թե չէ ժողովո՞ւրդն ինչու է ստեղծել ձախորդ, անբախտ և երջանիկ, հաջողակ բառերն ու հասկացողությունները: Ու հենց պետությանը դա չի՞ ընդունում, երբ դրամա-իրային վիճակախաղի մեկ միլիոն տոմս է բաժանում: Չգիտի, որ այդ միլիոնից մեկն է շահելու ու մեկն է լինելու երջանիկը, իսկ մնացած ինը հարյուր իննսունինը հազար ինը հարյուր իննսունինը մարդը այդ մի մարդու թշնամին են դառնալու ու նախանձելու են նրան, իսկ իրենց համարելու են դժբախտ:

- Ձեզ շատ ձեռնտու փիլիսոփայություն է, - քննադատական տվեց Հարություն Մամյանը:

- Չէ, ինչ փիլիսոփայություն, մտքեր են, էլի, - ասաց Անդրանիկ Աթայանը: - Ու ես համոզված եմ, որ ամեն տեսակի անախորժությունները, տհաճությունները, նույնիսկ նախանձը պակասությունից են գալիս: Եթե ամեն ինչ առատ լիներ ու բոլորն էլ ունենային, էլ ինչո՞ւ պիտի մեկը գողանար, իսկ մյուսը նախանձեր: Մի օրինակ ասեմ, մեր կոմբինատի տարածության մեջ մի մթերային խանութ կա: Բանվորներն եկան, բողոքեցին, թե իրենք գիտեն, խանութն ապրանք է ստացել ու մեջտեղ չի հանում: Վեր կացա, անձամբ գնացի, բացեցի խանութի պահեստն ու տեսա, որ իսկապես մի կիլո սև իկրա կա պահած և երկու կիլո օսետրինա: Սա՞ ինչ բան է, բարկացա վարիչի վրա, ինչո՞ւ վաճառքի չեք հանում: Ու տեսեք, թե վարիչն ինչ ասաց, «Ընկեր Աթայան, - ասաց, - մի կիլո իկրա է և հինգ հարյուր բանվոր: Եթե բաժանեմ, ամեն մեկին երկու գրամ է ընկնելու: Վաճառքի հանեմ, կոտորելու են իրար: Ի՞նչ անեմ»:

- Եվ որպեսզի բանվորները չկոտորեին իրար, որոշել էր եղած- չեղածը իր տուն տանել, - հեզմեց Մամյանը: - Ու դուք նա...

- Ես ի՞նչ...

- Երևի նույն նկատառումներով եք երկու կիլոգրամ ոսկին և տասնմեկ կիլոգրամ արծաթը ձեր տուն տարել:

- Է՛հ, - նորից խամրեց, լռեց Անդրանիկ Աթայանը:

- Ձեր փիլիսոփայությունը, ինչպես ասում են, չբռնեց, շատ է խախուտ: Հիմքը ձեր բերած օրինակի նման ավազ է: Այնպես որ առաջ անցեք:

- Դե, ինչ ասեմ. Վասակն ասաց, թե հիվանդ է և հոգնել է ու որոշել է այլևս հին միջոցներով չպայքարել իմ դեմ, և իր խոսքը հաստատելու համար առաջարկեց վերցնել ու տուն տանել իր բոլոր բողոք- դիմումների պատճեններն ու պատասխանները, որ նախօրոք դրել էր սեղանին:

- Ասենք թե, ասենք թե, հետո :

- Երբ նամակների այդ կապը տվեց ինձ, ճիշտն ասած ես նոր միայն հավատացի նրան: Ձուր տեղը թունավորեցինք իրար, ասացի, և ինչի՞ համար: Ի՞նչ ենք տանելու աշխարհից: Բայց ինչ ուզում, եք ասեք՝ չար մարդ էր: Այդ մասին դու պետք է մտածես, Անդրանիկ, ասաց, ես ոնց որ եկել եմ, այնպես էլ գնում եմ: Դժվարը քեզ համար է լինելու, այնքան բան ես կուտակել, որ ծանր է լինելու քեզ համար այդ բոլորը թողնելն ու էս աշխարհից հեռանալը: Ու շատ ցավոտ է լինելու: Եթե գոնե հաջողվի, որ բնական ճանապարհով գնաս, համարիր, որ էլի բախտդ բերել է... Մեկ ուզեցի պատասխանել, մեկ էլ մտածեցի, թե չարժե այդ նամակներից հետո... Ասացի, լավ, մոռանանք... անցածն անցած է, հիմա, եթե ուզում, ես՝ նորից ետ արի, աշխատանքի ընդունեմ: Չէ, ասաց, ես քեզ հետ աշխատել չեմ կարող, եթե ուզում ես ինձ լավություն անել՝ տեսնո՞ւմ ես այն փոքրիկ սրվակը, իմ դեղն է, տասնհինգ կաթիլ կաթեցրու բաժակի մեջ, մի քիչ ջուր լցրու ու տուր ինձ: Ես այդպես էլ արեցի:

- Դեղը ձեզ մո՞տ խմեց, - հարցրեց քննիչը:

Կոմբինատի դիրեկտորը մտածեց.

- Չէ, - ասաց նա: - Չէ, - ավելացրեց նա հաստատ: - Բաժակը կողքի փոքրիկ պահարանին դրեց:

Կարևորագույն գործերի քննիչը գրիչը նետեց սեղանին, ոտքի ելավ ու սկսեց քայլել առանձնասենյակում: Մոտեցավ պատուհանին, ձգեց, ուղղեց հոգնած ուսերն ու դուրս նայեց: Դրսում գարուն էր: Տերևակալել էին ծառերը, ծաղկում էին: Հենց դատախազության շենքի մուտքի մոտ ինչ- որ ծերունի փոքրիկ զամբյուղի միջից մուգ կապույտ մանուշակներ էր վաճառում: Հասմիկը շատ է սիրում մանուշակներ, տուն գնալիս կտանեմ իր համար, թող ուրախանա, մտածեց Հարություն Մամյանը: Փողոցները լիքն էին մարդկանցով, որոնցից անմիջապես առանձնանում էին զբոսաշրջիկները: Արևի կարոտ հյուսիսցիները գրեթե կիսամերկ էին շրջում, աշխատելով բաց չթողնել արևի ոչ մի ճառագայթ՝ մեկ այս, մեկ այն կողմ շրջելով կարմրած ուսերն ու դեմքերը: Վաղուց փչացած ժամացույցի տակ մի տղա էր կանգնած՝ ծաղիկները ձեռքին ու ամաչելով սպասում էր...

Հարություն Մամյանը հառաչեց, շրջվեց պատուհանից, եկավ, նստեց իր տեղը, նայեց կոմբինատի դիրեկտորի տրորված կոստյումին, վզի մոտ քրտինքից սևացած փողկապին, մազակալած դեմքին ու հարցրեց հանկարծ.

- Ինչո՞ւ չեք սափրվում:

- Էհ, - զարմացավ, կզակը շփեց Անդրանիկ Աթայանը: - Անցավ, անցավ, ամեն ինչ անցավ:

- Անդրանիկ Աթայան, - ասաց քննիչը: - Քանի օր է մենք իրար հետ ենք առավոտից մինչև իրիկուն: Նստում ենք դեմ- դիմաց, ասում ենք ինչ ուզում ենք, ընդհատում ենք միմյանց, ուղղում ենք, չենք համաձայնում իրար հետ, վիճում ենք... Ես անընդհատ, անընդհատ ուզում եմ հասկանալ ձեզ, ուզում եմ, որ համոզեք ինձ, և երբ խոսում եք հնարավորություն ունեմ, տեսնում եմ ձեր աչքերը, ձեր ռեակցիան, ձեր ձեռքերը, լսում ձեր ձայնը, նույնիսկ ձայնի նրբերանգները... Գիտե՞ք, ինչի համար եմ այս ամենն ասում, որ այդքանից հետո դուք չեք կարողանում համոզել ինձ, ես ձեզ չեմ հավատում: Որովհետև ձեր պատմածը ոչ մի կապ չունի տրամաբանության հետ և ամրապնդված չէ փաստերով: Ձեր դեմ այնքան փաստեր կան,

որ դրանցով կարելի է երկու հոգու մեղադրել: Որ հենց այս վիճակով, իհարկե, առերեսումներից հետո, որոնք ավելի կամրացնեն մեղադրանքը, ձեր գործը կարելի է ավարտված համարել և ուղարկել դատարան, և որ դատարանն անպայման, հավատացեք իմ փորձին, անպայման ձեզ ամենախիստ պատիժը կտա, ես դրան մագաչափ իսկ չեմ կասկածում: Տեսնում եմ այժիս առաջ: Նույնիսկ այս վիճակով, առանց ձեր անկեղծ խոստովանության և մեղադրանքն ընդունելու: Ուրեմն, եթե նույնիսկ այդքանից հետո ես չեմ կարողանում հավատալ ձեզ, ինչպես կարող եմ հավատալ դատավորները, որոնց այժի առաջ դուք հայտնվելու եք միլիցիոներների ուղեկցությամբ, խուզած գլխով, նրանց հետ խոսելու եք բավականին հեռվից և հիմնականում միայն հարցերի եք պատասխանելու: Երբ այդ դատավորները անձամբ չեն խոսելու ձեզ հետ, չեն նայելու ձեր այքերին, այլ ձեր մասին պատկերացում պիտի կազմեն միայն թղթերից, արձանագրություններից ու փորձաքննության անվիճելի եզրակացություններից, որոնք բոլորը ձեր դեմ են խոսում: Ես ձեզ կարողացա՞ րացատրել ձեր իրական վիճակը. Անդրանիկ Աթայան:

- Այո, - ծանր հառաչեց կոմբինատի դիրեկտորը: - Այո:

- Ուրեմն՝ վերջին անգամ եմ առաջարկում - խոստովանել հանցանքը: Եթե դա կատարվի դատարանում՝ դուք այլևս փրկության ոչ մի հույս ունենալ չեք կարող:

- Իսկ հիմա հույս կա՞, - աղերսական այքերով նրան նայեց Անդրանիկ Աթայանը:

- Չեմ խաբի, չեմ կարող վստահեցնել, - ասաց քննիչը: - Ամեն ինչ որոշում է դատարանը: Կարող եմ ասել միայն, որ անկեղծ խոստովանությունն ու զոջումը ի վերջո հաշվի են առնվում: Մի մոռացեք, որ դուք մեղադրվելու եք առնվազն երկու հոդվածով, որոնցից յուրաքանչյուրի համար գնդակահարություն է նախատեսվում: Ըստ որում՝ առաջին հանցանքը կանխամտածված, չարանենգ սպանություն է, առանձնապես վտանգավոր հետևանքներով, որովհետև այդ սպանությամբ դուք աշխատել եք պատասխանատվությունից փրկել պետական ունեցվածքը խոշոր չափով հափշտակողների մի մեծ խումբ ձեր ղեկավարությամբ:

- Իսկ այդ ո վ ասաց, թե ղեկավարը ես եմ:

- Ուրեմն՝ ո՞վ է,

Կոմբինատի դիրեկտորը խոնարհվեց, ձեռքերով բռնեց գլուխը և սկսեց օրորվել, ինչպես անում էր միշտ հոգեկան ծանր ապրումների պահին:

Հարություն Մամյանը աշխատում էր նույնիսկ չճնչել ու սարսափով էր նայում հեռախոսին, մտածելով, թե հիմա ամեն մի շարժում, ամեն մի ավելորդ ձայն կարող է խանգարել ամբաստանյալին, որն, ինչպես երևում է՝ պատրաստվում է խոստովանության:

Անդրանիկ Աթայանը բարձրացրեց գլուխը.

- Գրեք, - ասաց նա:

- Հը,՞ - առաջ թեքվեց քննիչը:

- Ուրեմն ասում եք, որ առանձին-առանձին, թե սպանության, թե՛ հափշտակության համար ինձ գնդակահարություն է հասնում: Այդպե՞ս է:

- Այդպես է, - ասաց Մամյանը:- Քրեական օրենսգիրքն է ասում: Օրենքն է ասում:

- Ուրեմն ես փաստորեն ոչ մի շահ չունեմ, եթե ընդունեմ կամ չընդունեմ, մեղադրանքներից որևէ մեկը: Եթե գնդակահարություն է, էլ ինչ տարբերություն: Հո երկու անգամ չե՞ն գնդակահարելու:

- Այդպես է, - ոչինչ չհասկանալով և սկսելով անհանգստանալ, համաձայնեց քննիչը,

- Ես մարդ չեմ սպանել, - ասաց կոմբինատի դիրեկտորը:

- Չհոգնեցիք, - նողկանքով բարձրացավ տեղից քննիչը,

- Ես մարդ չեմ սպանել, - կրկնեց կոմբինատի դիրեկտորը: - Ու, որպեսզի վերջնականապես համոզվեք, որ ճիշտ եմ ասում, որ ես ամեն ինչ կարող էի լինել, մարդասպանից բացի, խոստովանում եմ իմ մեղքը՝ երկրորդ հոդվածի կապակցությամբ, Ոչ միայն խոստովանում եմ, այլև պատրաստ եմ հենց հիմա ձեզ հետ դուրս գալ և իմ ու որդիներիս մատնացույց անել այն բոլոր թաքստոցները, որտեղ ես իմ կուտակած ոսկին, զարդերն ու դրամներն եմ պահել, և որոնք, ինչպես երևում է, դուք չեք կարողացել հայտնաբերել: Մա՛մեկ: Երկրորդ՝ ես պատրաստ եմ ապացուցելու, գաղափարական ու գործնական ղեկավարը ես չեմ ոսկու հափշտակության և յուրացման հարցում ու մատնացույց անել ոչ միայն ղեկավարին, այլև մեր խմբի բոլոր անդամներին: Մեկ առ մեկ: Եթե նրանք այս օրերին ոչինչ չեն անում իմ կաշին փրկելու համար, ե՛ս ինչու պետք է պահեմ- պահպանեմ նրանց: Նրանց ո՞ր լավության դիմաց: Դուք փաստեր եք սիրում, չե՞ք, փաստերով եք ղեկավարվում: Դե, ուրեմն գրեք: Գրեք անուններն ու փաստերը: Նրանք ինձ մենակ են թողել, ոչ մեկը նույնիսկ սիգարետ չի ուղարկում ինձ: Իսկ ես չեմ սիրում մենակ մնալ, սովոր չեմ, թող գան, թող հավաքվեն, գոնե չեմ ձանձրանա, գոնե հետաքրքիր կլինի: Հո գուր չե՞ն ասում, թե ընկերովի մահը հարսանիք է:

Անդրանիկ Աթայանը այդ բոլորն ասաց արագ-արագ, հևհև, հազալու պես, ասես աշխատելով վայրկյան առաջ ազատվել այն մադձից, որ կոկորդում էր կանգնած, ասաց կարծես թե տենդի մեջ գառանցելով, իսկ հետո լրջացավ միանգամից ու հարցրեց շտապով.

- Հիմա... հիմա հավատում եք, որ ես մարդասպան չեմ:

Կարևորագույն գործերի քննիչը գլխով արեց.

- Նախ և առաջ անուններն ու փաստերը:

- Գրեք, - առաջ թեքվեց կոմբինատի դիրեկտորը, - գրեք...

Վերելակը շխնոցով կանգ առավ առաջին հարկում, և անաղմուկ բացվեց դուռը: Վարորդը ձեռքը մեկնեց կապոցներից խոշորին, բայց տիկին Վարդուհին կանխեց նրան:

- Դա թեթև է, Սաշիկ, դու մյուսը վերցրու...

Վարորդը չառարկեց: Նա ձեռքն առավ համեմատաբար փոքր փաթեթը և դուրս եկավ վերելակից: Նրանից հետո դուրս եկավ նաև տիկին Վարդուհին, սավանների հանգույցից բռնած բարձրացրեց խոշոր կապոցը, և նրանք դեպի դուռը քայլեցին:

Դրսում տաք, վառ արև էր:

Մուտքից առաջինը տիկին Վարդուհին դուրս եկավ, նայեց շուրջն ու արագ քայլելով մոտեցավ մայթին կիպ սեղմված ”Վոլգային”: Հետո շրջեց գլուխն ու սպասեց, որ վարորդը մոտենա: Սակայն վարորդի փոխարեն նրան մի երիտասարդ մոտեցավ, որի դեմքը շատ ծանոթ էր, բայց տիկին Վարդուհին ոչ մի կերպ չկարողացավ մտաբերել, թե որտեղ է տեսել նրան:

- Բա ձեզ սագո՞ւմ է, տիկին Վարդուհի, որ այդպիսի անհարմար ծանրություն էք բարձրացնում, - ասաց երիտասարդը: - Տվեք, ինձ տվեք կապոցը:

- Իսկ դուք ո՞վ եք, - հարցրեց տիկին Վարդուհին:

- Ուրեմն մոռացե՞լ եք, - ժպտաց երիտասարդը: - Ես ձեր տեղամասային տեսուչն եմ: Կարեն Շախուլյանը:

- Հա՛, - անմիջապես հիշեց տիկին Վարդուհին, հիշեց ու զգաց, որ միանգամից սարսռաց մարմինը: - Հա, Կարեն ջան, - ծիծաղեց նա: - Ախր ես քեզ երբեք առանց համազգեստի չէի տեսել: Սաշիկն ի՞նչ եղավ: - ավելացրեց նա նյարդայնորեն՝ մուտքի կողմը նայելով:

- Իսկ այդ ո՞ւր եք գնում, տիկին Վարդուհի, - հարցրեց Կարենը: Ես ձեզ չե՞մ կարող օգնել:

- Լվացքատուն, - ծիծաղեց տիկին Վարդուհին: - Չգիտե՞ս, որ Պետիկյանն ամեն ինչ իմ ուսերին է գցել... Ի՞նչ եղավ Սաշիկը, - գրեթե ճչաց նա:

- Մուտքի մեջ է, - ասաց Կարեն Շախուլյանը: - Մեզ է սպասում:

- Ինչո՞ւ... Ի՞նչ է պատահել նրան...

- Աղմուկ մի բարձրացրեք, տիկին Վարդուհի, - կամացուկ ասաց տեղամասային տեսուչը, - Այստեղ ձեզ բոլորը ճանաչում են, անհարմար է: Տվեք կապոցը, տվեք ու գնանք միասին:

- Սաշիկ, - հուսահատ աղաղակեց կինը:

Կարեն Շախուլյանը մի ձեռքով իր կողմը ձգեց սպիտակեղենի կապը, իսկ մյուսով ամուր բռնեց տիկին Վարդուհու արմունկը:

- Առանց հիստերիկայի, - ասաց նա խիստ: - Ուրիշ տեղ չենք տանում: Նորից բարձրանալու ենք ձեր տուն: Ձեր տանը խուզարկություն է կատարվելու, և արտոնագիրը մայրը Լալայանի գրպանում է: Նա հիմա, ինչպես երևում է, արդեն զրուցում է Սաշիկի հետ:

Տիկին Վարդուհին ավելի շատ ահավոր զարմացած էր ու դողում էր ողջ մարմնով:

- Ուրեմն Պետիկյանը մեռած է, - հարցրեց նա: - Պետիկյանի տանը խուզարկություն: Ամբողջ կյանքում ինքն է խուզարկել ու հիմա... Ու դուք, նրա ընկերները, նրա ստորադրյալները, ագռավների նման հավաքվել էք, որ ցրե՞ք նրա լեշը: Բռլորին բռնեցիք՝ պրծաք, հիմա էլ իրա՞ր էք բռնում: Հետո՞, տակն ո՞վ կմնա... Վաղն էլ դու ես նույն օրն ընկնելու, Կարեն: Հիշիր իմ խոսքերը... Դուք աշխատավարձով ապրո՞ղ էք... Կապրեք, բա չէ՛...:

- Հա, ես շա՞տ գիտեի մեջն ինչ կա, - մուտքից լսվեց Սաշիկի ձայնը: - Խազեինիս կնիկն է, զանգ տվեց, ասաց արի օգնի լվացքը տանենք լվացքատուն: Ես ի՞նչ իմանայի, որ զարդեղեն է լվացքի մեջ: Ես կյանքում զա՞րդ եմ տեսել:

Տիկին Վարդուհին թուլացավ միանգամից, փափկեց, հալվեց մի տեսակ ու դանդաղ-դանդաղ ցած սահեց Կարենի կողքով:

Մետաղյա իրերի արտադրության գլխավոր վարչության գլխավոր ինժեներ Պետրոս Մինասյանը փակեց անկեզ պահարանը, բանալին գրպանը դրեց և մոտենալով առանձնասենյակի ձախ պատին, սեղմեց գունավոր պաստառի տակ գրեթե չերևացող կոճակը: Պատը մի կողմ սահեց բացելով զգեստապահարանը: Պետրոս Մինասյանը ուսակախիչից խնամքով հանեց պիջակը, հագավ ու նայեց կողքի հայելուն: Հոնքերի ուղիղ մեջտեղում մի նոր կնճիռ էր հայտնվել, և լրիվ սպիտակել էին քունքերը:

- Դե, դե, - ասաց նա ինքն իրեն: - Ի՞նչ ես խառնվել իրար: Եթե քեզ հետ ինչ-որ բան պատահեր, արդեն պիտի պատահեր: Ուրեմն այս անգամ էլ անցավ:

Նա նորից սեղմեց կոճակը, փակեց պահարանը և արդեն դռանն էր մոտենում, երբ դուռը թակեցին:

Մտեք, - ձայնեց նա:

Ներս մտան երկու անձանոթ:

- Տեսնում էք, որ ընդմիջման եմ գնում, - ակամա անորոշ տազնապ զգալով, մեղմորեն ասաց Պետրոս Մինասյանը: - Եկեք կես ժամ հետո:

- Բարև ձեզ, շեֆ, - ասաց այցելուներից տարեցը: - Ենթադրում եմ, որ ձեր ընդմիջումը կես ժամից շատ ավելի երկար կտևի:

- Դուք ո՞վ էք, ի՞նչ էք ուզում, - միանգամից գունաթափված շուրթերով, հենց այնպես, ակամա հարցրեց Պետրոս Մինասյանը:

- Դա կարևոր չէ, - ասաց այցելուներից կրտսերը: - Կարևորն այն է, որ ձեզ Անդրանիկ Աթայանն է սպասում: Ասում է՝ ես առանց իմ շեֆի ապրել չեմ կարող:

- Ոչխա՛ր, - ատամների արանքից նետեց գլխավոր ինժեները: - Ոչխա՛ր...

Հեռախոսի զանգը շատ տարօրինակ հնչեց: Կոմբինատի գլխավոր հաշվապահը վերցրեց լսափողը:

- Այվազ, - լսվեց լսափողի մեջ, - մեր բանը բուրդ է, շեֆին վերցրեցին:

- Դո՛ւ ես, Պարզև, - վախեցած գոռաց գլխավոր հաշվապահը: - Լու՛րջ ես ասում:

Հեռախոսալարի մյուս ծայրում հայհոյեցին:

- Ինչ էլ մի կատակի տրամադրություն ունեմ: Ես ծկկել եմ, Այվազ... Եթե դուրս պրծար, իմ վերջին բաժինը կնոջս կտաս... Հո գիտես, որտեղ էլ լինես, կգտնեմ քեզ... Էն աշխարհում էլ կգտնեմ...

- Հիմար, - բղավեց գլխավոր հաշվապահը: - Որ դու փախչում ես, բա ե՞ս ինչ անեմ: Հիմար, որ փախչում ես, ուրեմն վերցնում ես քեզ վրա... Շուտ, արի ինձ մոտ, մի բան կմտածենք... Շուտ, արի, Պարզև:

Նա տեսավ, թե ինչպես բացվեց դուռը ու ներս մտան երկու հոգի...

- Չե՞ք տեսնում, որ խոսում եմ, - գոռաց նրանց վրա հաշվապահը: - Էս ի՞նչ մարդ են, տո... Դրսում սպասեք:

Բայց այցելուները ավելի էին մոտենում նրան, և նրանցից տարեցը գլխավոր հաշվապահի թուլացած ձեռքից վերցրեց լսափողը:

- Պարզև Մահակյան, - ասաց նա, - լսափողը ընկեր Լալայանին տվեք: Այդտեղ է, այդտեղ, միջանցքում կլինի, - ծիծաղեց նա: - Մոտեցա՞վ, տեսնո՞ւմ եք... Ամեն ինչ կարգի՞ն է, մեզ մոտ էլ ամեն ինչ կարգին է:

- Ինչ որ տեղ ինչ- որ բան սխալ է, - ասաց տեղամասային տեսուչ Կարեն Շախուլյանը:

- Որ հարցում, - առաջ թեքվեց Հարություն Մամյանը:

- Դա իմ խոսքը չէ, ընկեր Մամյան, Վիլյամ Մարոյանն է ասել աշխարհի վերաբերյալ: Բայց հենց մտածում եմ Անդրանիկ Աթայանի գործի մասին, ակամա այդ խոսքերն եմ հիշում:

Նրանք նստած էին կարևորագույն գործերի քննիչ Հարություն Մամյանի տան ճաշասենյակում, ցածրիկ սեղանի երկու կողմերում դրված փափուկ ու խոր բազկաթոռների: Այսինքն՝ նստելն այն բառը չէ, ավելի շուտ խրվել- մնացել էին բազկաթոռների մեջ: Մեծ

սեղանը զբաղված էր: Խոհանոցից երբեմն-երբեմն հայտնվում էին Հասմիկն ու Արևիկը, տեսակ- տեսակ ուտելիքներով լի ափսեներ էին բերում և դասավորում սեղանին:

- Քեզ ինչ է անհանգստացնում, Կարեն, - հարցրեց Մամյանը:

- Ընկեր Մամյան, չնեղանաք, խնդրում եմ, բայց այս գործն իր տեսակի մեջ է շատ տարօրինակ: Կարծես թե ամեն ինչ նախապես հաշված, նախապատրաստված է եղել, ամեն մանրամասն: Ես ձեր տաղանդի ու փորձի մասին ունեմ իմ վերջնական կարծիքը և դուք, գիտեք թե ինչ կարծիք է դա... Որտեղ էլ լինեք, իմ ուսուցիչն եք դուք ...

- Կարեն, - մատով սպառնաց Հարություն Մամյանը, - առանց շողոքորթության, ասելիքդ ասա:

- Չեմ շողոքորթում, այդպես է, բայց իմ կարծիքը կասեմ: Շատ եմ մտածել այդ մասին: Ի վերջո մենք ինչ ենք արել այդ սպանությունը բացահայտելու համար: Գրեթե ոչինչ: Մեզ ամեն ինչ մատուցել են, ընկեր Մամյան: Կուզե՞ք հերթով հետևենք գործին:

- Հետևենք, - տեղում շարժվեց, աշխուժացավ քննիչը:

- Դիակը մենք չենք հայտնաբերել: Հարևանուհին է հայտնել իր կասկածը, ճի՞շտ է: Հետո տեղագնության ժամանակ հանգուցյալի ձեռքի մոտ ընկած էր մի բաժակ, որը կարծես աղաղակում էր, թե ստուգեք ինձ, այստեղ մի մուտք պատմություն կա: Այդպես ս էր: Այդպես էր: Ինչն էր պակասում, որպեսզի ամբողջանար թունավորման վարկածը՝ թույնի սրվակը: Մենք գտանք: Ո՛չ: Գտնվեց, այն էլ՝ փողոցում, որպեսզի մենք համոզվենք, որ ոչ թե սուկ ինքնասպանություն է, այլ սպանություն: Այստեղ ես բաց եմ թողնում վկաների մասը, որովհետև նրանք մեզ գրեթե ոչինչ չտվեցին ու նույնիսկ շեղեցին իրական գծից և անցնում եմ առաջ: Մպանությունը կա, մատնահետքերը կան, բայց չկան ոչ սպանողը, ոչ էլ նրա մատնահետքերը: Եվ հանկարծ իրեն-իրեն ստանում ենք նամակներ, որոնք փողոցների խաչմերուկում ատամնատելնիկի տունը ցույց տվող ձեռքի նման մեզ մատնացույց են անում Անդրանիկ Աթայանին: Ընդ որում, նամակներից մեկը բացարձակ անհեթեթություն է, բայց միևնույն է՝ ճշգրիտ ցույց է տալիս բանալին: Վե՛րջ: Ամեն ինչ պարզ է: Ոչ, դարձյալ ինչ- որ բան պակասում է: Հենց սկզբից տարօրինակ է թվում, որ հանգուցյալի տանը ոչ մի նամակ չկա, իսկ հետո այդ փաստը շատ ավելի տարօրինակ է թվում, երբ իմանում ենք, ավելի ճիշտ՝ երբ մեզ իմացնում են, թե հանգուցյալը շատ նամակներ է գրել ու շատ պատասխաններ ստացել: Որտեղ են դրանք: Եվ ահա այդ նամակները, Ամանորի նվեր - տոպրակների նման, գտնում ենք մարդասպանի տանը, անփութորեն սեղանին նետված: Մարդասպանը ոչ միայն չի մտածել դրանք ոչնչացնելու մասին, այլև նույնիսկ թաքցնելու մասին չի մտածել: Մի քիչ շատ չեն մատուցման փաստերը, ընկեր Մամյան:

Ներս մտավ Հասմիկը՝ երկու ձեռքով բռնած մի մեծ սկուտեղ, որի վրա ոտքերը դեպի վեր ծալած, կարմրացրած մի աքլոր կար տապակած կարտոֆիլի շեղջերով շրջապատված:

- Տղաներ, անմիջապես լվացվել: Ամեն ինչ բերում եմ, որ բոլորս միասին սեղան նստենք: Արագ...

Ո՞վ, կարող էր հակառակվել: Հարություն Մամյանը և Կարեն Շախուլյանը նեղլիկ լողասենյակը մտան: Կարենը մի կողմ քաշվեց, սպասելով, որ լվացվի տարեց գործընկերը, և Հարություն Մամյանը պատից պոկեց մագնիսով ամրացված օձառը: Ձեռքերն ու օձառը պահեց հոսող ջրի տակ, բայց մոռացավ լվացվել, գլուխը դեպի Կարենը շրջեց:

- Այսքան տարի աշխատում եմ, - ասաց նա, - բայց դեռ մի դեպք չեմ հիշում, որ նման լինի մյուսին: Եվ գիտե՞ս ինչու: Որովհետև ամեն անգամ տարբեր մարդ է լինում հանցագործը, և տարբեր են լինում նրա մեթոդները, նրա մտածողությունը, շարժումները, բնավորությունը... Ես քեզ հետ համաձայն եմ, Կարեն, որ սրա մեջ կարծես թե շատ են փաստերը: Բայց ինչո՞ւ չէր կարող հենց այդպես լինել: Մի թե հատուկ ծրագիր կա, որով պետք է ղեկավարվեն հանցագործները այս կամ այն ոճրագործության դեպքում: Տեսությունը մեր գործում դատարկ բան է, ախպերս:

Ճաշասենյակից լսվեց Հասմիկի սպառնալի ձայնը:

- Ի՞նչ պատահեց ձեզ: Դե շուտ, սառչում է ամեն ինչ:

- Գալիս ենք, - ձայն տվեց Հարություն Մամյանը՝ արագ-արագ լվացվելով, նա իր տեղը Կարեն Շախուլյանին զիջեց, վերցրեց սրբիչը, սկսեց սրբվել ու հետո էլ շարունակեց իր միտքը: - Հետո հո մենակ ես չեմ, գործի հետ մեր շրջանի դատախազն է ծանոթացել ու հաստատել, քաղաքի դատախազն է ծանոթացել, հանրապետական դատախազությունում մեր գործերին հսկող դատախազը, քննչական բաժնի պետը, հանրապետության դատախազի տեղակալը և վերջապես գերագույն դատարանի այն անդամը, որ դատավարությունն է գլխավորելու: Եվ բոլորը գտնում են, որ քննությունը կատարված է անթերի...

- Հենց դա էլ վախեցնում է ինձ, ընկեր Մամյան, - ասաց տեղամասային տեսուչը:

- Ոչ թե վախեցիր, այլ սովորիր, ախպերս, սովորիր, - ժպտաց Մամյանը:

Կարեն Շախուլյանը նրա ձեռքից վերցրեց սրբիչը:

- Եթե այդքան անթերի ու անհերքելի է, ընկեր Մամյան, ինչո՞ւ մարդասպանը մինչև վերջ էլ չխոստովանեց, չկռացավ փաստերի ծանրության տակ, չընդունեց իր մեղքը: Ինչո՞ւ իր ձեռքով մեզ հանձնեց պրոֆեսիոնալ հանցագործների մի ռիմակ, համարձակվեց իր կողքին, մեղադրյալի աթոռին նստեցնել նույնիսկ մեր ԲԽՍՍ- ի պետ Շավիղ Պետիկյանին, բայց այդպես էլ չընդունեց սպանության փաստը:

- Դու հո երեխա՞ չես, Կարեն, - բարկացավ Հարություն Մամյանը - թե նրան ես երեխայի տեղ դնում: Ի դեպ, ասեմ քեզ, որ նա ինձ հանդիպած ամենախելացի հանցագործներից մեկն է: Թող թույլ տրվի ասել մի հանճարեղ սրիկա: Նա հրաշալի գիտի, որ իր միակ փրկությունը սպանություն գործելուց հրաժարվելն է: Միակ փրկությունը, միակ հույսը, լույսի միակ շողը: Որովհետև ոչ մի դատարան, գնդակահարությունից բացի, այլ վճիռ չի կարող կայացնել նրա չարանենգ, կանխամտածված սպանության առթիվ: Պա՞րզ է: Դրա համար էլ նա համառությամբ հրաժարվում է սպանության մեղադրանքից և խորամանկորեն ծանրացնում հափշտակության մեղադրանքի նժարը: Նրա հույսն այն է, որ եթե դատարանը հավատա իրեն և անմեղ ճանաչի սպանության հարցում, ապա բացառվում է, որ բարձրագույն պատիժ սահ-

մանի հափշտակությունների համար: Որովհետև դժվար է գնդակահարության դատապարտել մի մարդու, որն ընդունում է իր հանցանքը, զոջում է անկեղծորեն, օգնում է քննչական մարմիններին վնասազերծելու պետական ունեցվածքը հափշտակողների մի մեծ խմբի, մերկացնում է նրանց առերես հարցաքննությունների ժամանակ և անձամբ թաքստոցները ցույց տալով հատուցում է պետությանն իր հասցրած վնասը: Հիմա քեզ Համար ամեն ինչ պարզ է ընկեր Շախուլյան:

- Ուրեմն ձեր կարծիքով դատարանը կհաստատի նրա դեմ հարուցված սպանության մեղադրանքը, - հարցրեց Կարենը:

- Մազաչափ իսկ կասկած չունեմ, - ասաց կարևորագույն գործերի քննիչը - եթե միայն դատավարության ժամանակ հանկարծ որևէ հրաշք տեղի չունենա:

- Հարություն, - համբերությունից դուրս եկած, սրտնեղած ճշաց Հասմիկը:

- Եկանք, եկանք, Հասմիկ ջան, - ձայն տվեց Հարություն Մամյանը և դարձավ կրտսեր ընկերոջը. - Գնանք, ախպերս, գնանք, ուտենք մեր դառը հացը:

Կարեն Շախուլյանը ծիծաղեց.

- Նույնիսկ փոխաբերական առումով այդ խոսքը ձեր սեղանին չի սագում, ընկեր Մամյան, - ասաց նա:

Դատարանը գնաց խորհրդակցելու, վճիռ կայացնելու:

Քանի որ նիստը տեղի էր ունենում Մետաղյա իրերի կոմբինատի դահլիճում, քաղաքի ծայրամասում և մոտակայքում քիչ թե շատ օրինավոր ռեստորան չկար, դատական նիստի մասնակիցներն ու ունկնդիրները գրավեցին կոմբինատի աղքատիկ ճաշարանը: Վերցնում էին ինչ ասես, նույնիսկ՝ ձկան պահածոներ, որոնց վրա ուրիշ ժամանակ ուշադրություն չէին դարձնի: Այլ ելք չկար: Ընդմիջումը երկու ժամ էր տևելու, և քաղաք գնալն ու վերադառնալը փաստորեն միտք չունեի: Դահլիճը գրեթե ամբողջությամբ դատարկվել էր: Գրեթե, որովհետև կենտրոնական միջանցքի մոտ, չորրորդ շարքի անկյունային աթոռին նստած էր մնացել միայն մի ծեր մարդ՝ մեծ, սպիտակ բեղերով և ոտքերի արանքում ձեռնափայտը սեղմած: Կու շտ էր, թե՛ դրամ չունեի ճաշարանից, օգտվելու համար, ո՞վ իմանար:

- Ես ստամոքսի հիվանդություն ունեմ, - ասաց փաստաբան Մուշեղ Իսպիրյանը իր ուղեկցին:
- Եթե որևէ բան չուտեմ՝ կծկումներ են սկսվելու:

- Ես ավտոյով եմ, - ասաց նրա ուղեկիցը, որ Անդրանիկ Աթայանի կրտսեր որդին էր: - Շատ չի տևի, գնանք մի տեղ հաց ուտենք:

- Չէ, - ձեռքը թափահարեց փաստաբանը: - Չեմ ուզում:

- Գուցե ե՞ս գնամ բերեմ:

- Միտք չունի, - կրկին առարկեց փաստաբանը: -Բուֆետից որևէ բան վերցրու՝ թեկուզ հաց ու պանիր, բավական է:

Նա նստեց անկյունում, ծաղկավոր մոմլաթով ծածկված սեղանի մոտ, կողքի աթոռին դրեց իր հնամաշ, ուռած պայուսակը, փակեց կարմրած կոպերն ու գլուխը մի կողմ թեքած, քնեց միանգամից, կարճատև, խորը քնով, այնպես որ Հակոբ Աթայանը ստիպված էր ձեռքով արթնացնել նրան: Սեղանին մի կտոր երջիկ կար, պանիր ու հաց և երկու շիշ մածուն:

- Եղած- չեղածն այս էր, - մեղավորի նման ձեռքերը տարածեց Հակոբ Աթայանը:

Նա սպասեց, մինչև որ փաստաբանը դժվարությամբ կուլ տվեց մի երկու պատառ. էլի սպասեց, մինչև որ մի քիչ մածուն խմեց ու հարցրեց անհամբերությամբ արմունկներով սեղանին կոթնած.

- Ի՞նչ կարծիքի եք ընկեր Իսպիրյան, հույս կա՞ :

Փաստաբանը դժվարությամբ. բացեց կարմրած կոպերը, չգիտես ինչու ձեռքը պայուսակին տարավ՝ ասես համոզվելու համար, թե տեղում է արդյոք և խոսեց գրգռված, կերկերուն ձայնով, որը ոչ մի կապ չուներ դատական նիստում հնչող նրա թավ, ինքնավստահ արտասանության հետ.

- Ես արեցի այն ամենը, ինչ կարող էի և հնարավոր էր: Դու տեսար; չէ՞, որ դահլիճը հուզվեց: Բայց դահլիճն ո՞վ է, է՞, կամ փաստաբանն ով է: Մեզ ո՞վ է բանի տեղ դնողը: Ես իմ ճառից գոհ եմ, բայց դու գիտե՞ս ինչի է նման, որ ասում են՝ վիրահատությունը հաջող անցավ. բայց հիվանդին, հնարավորություն չեղավ փրկել: Դատավորները մեծ մասամբ արդեն վճիռը գրպանում են դատական նիստը բացում: Այն էլ՝ այնպիսի գործում, որտեղ ամեն ինչ շատ խելոք ձևակերպված է, փաստերն էլ պողպատից են և հասարակական կարծիք կա:

- Ուրեմն հույս չկա՞, - աչքերը լցրեց Հակոբ Աթայանը:

- Ես քո հայրիկին հազար անգամ ասացի. ինչ եղել, եղել է, ասացի, եկ ընդունիր, որ դու ես թունավորել ու ես կփրկեմ քեզ: Կփրկեմ հարյուր տոկոսով, կլացացնեմ բոլորին, կնկարագրեմ, թե ինչեր ես կրել այդ տարիների ընթացքում, թե հոգեկան ինչ ծանր ապրումների մեջ են պահել քեզ այդ հնաճ բանսարկու Վասակ Մերոբյանի դիմումներն ու այդ դիմումների հիման վրա ստեղծված հանձնաժողովները: Ոչ ժողովուրդը, և ոչ էլ հատկապես դատավորներն ու դատախազները հոգու խորքում տանել չեն կարողանում այդ դիմում գրողներին: Եվ կհասկանային ինձ: Ես, ասացի, անվերապահորեն կհամոզեմ բոլորին, որ դու քո արարքը թույլ ես տվել անմեղսունակ վիճակում, հոգեկան զարհուրելի խռովքի պահին: Ես ձեռքերս կարկառած նեղում կհայցեմ քեզ համար, արցունքն աչքերիս կբացականչեմ. նայեցեք այս մարդուն և ինչպեք ու զթացեք նրան՝ քանզի նա չի հասկացել իր արածը: Ես կասեմ՝ մի սպանեք նրան, որն արդեն սպանել է ինքն իրեն՝ մենության մեջ խորապես գոջալով և աղի արտասուք հեղելով: Նա անգիտակից մարդասպան է, մենք գիտակից փրկիչներ լինենք: Ահա թե ինչ կասեմ ես: Մի թե նրանք կարող են դիմանալ այս խոսքերին: Երբեք: Բայց քո հայրը, քո հայրը, ինչպես ժողովուրդն է ասում՝ իր էշից չի իջնում: Ես անմեղ եմ, ես մարդ չեմ սպանել... Չո խոսքերով չէ՞ ...

Փաստեր բեր: Իսկ փաստեր նա չունի, ունեցածն էլ հենց իր դեմ է...

- Բա ի՞նչ անենք, ընկեր Իսայիրյան, ասեք, ի՞նչ անենք, - մատները հուսահատությունից կոտրատեց Հակոբ Աթայանը:

- Ինձ թվում է, թե մենք այստեղ անելիք չունենք, - վիրահատի անողոքությամբ ասաց փաստաբան Իսայիրյանը: - Ես, այնուամենայնիվ, հետս ներման դիմում էի բերել, բայց քանի որ Անդրանիկ Աթայանը մինչև վերջ էլ չընդունեց իր հանցանքը, դիմումը պայուսակից հանելը միտք չունի:

- Բայց մի թե ոչ մի ելք չկա, - չէր հանգստանում Հակոբ Աթայանը: - Հնարավո՞ր բան է, որ ոչ մի ելք չլինի:

- Ես ասացի, որ այնտեղ անելիք չունենք, երիտասարդ, այստեղ, ընդգծում եմ: Սակայն ընդհանրապես կանենք այն ամենը, ինչ անհրաժեշտ է, հսկողական կարգով բողոք կներկայացնենք վերադաս մարմիններին... Եթե համաձայն եք՝ Մոսկվա կհասնենք... կփորձենք...

- Ամեն ինչի, ամեն ինչի, համաձայն եմ, - մրմնջաց Հակոբ Աթայանը:

- Ուրեմն՝ սպասենք դատարանի վճռին, - ասաց փաստաբանն ու փակեց կոպերը:

- Ապրես, Խաչիկ եղբայր, - ասաց ուսուցչուհի Արաքսյա Սահակյանը, երբ ճաշարանից դուրս գալուց հետո նրանք տեղավորվեցին բակում, խոտերին փոված լրագրերի վրա, - Եթե ինձ ստիպեին անգամ, չէի կարողանա քեզ նման համարձակ ամբիոն բարձրանալ:

- Իսկ ես կբարձրանայի, - միջամտեց Մելինե Մուրադյանը, - և ինչ որ պետքն էր՝ կասեի, միայն ափսոս, որ ինձ հարցնող չեղավ. Հետաքրքիր է, ինչու ինձ հարցնող չեղավ: Ես իմ լուսամուտից ամեն ինչ տեսնում եմ...

- Ոչ, ոչ բնավորության խնդիր է, - ասաց ուսուցչուհին, - ես, օրինակ, մարդկանց դիմաց կանգնել ու խոսել չեմ կարող, չհաշված՝ երեխաներին: Երբ Խաչիկ եղբայրն ասաց, "Դո՛ւ էիր, էլի, այ մարդ, հենց դու էիր, ականջներս էլ խուլ չեն, պարզ լսեցի, որ ասացիր՝ "Չո պրծա քեզանից, ես քո հերն եմ անիծել"... որ չասաց այդ խոսքերը, մարմինս փշաքաղվեց:

- Է՛, - տնքաց, մի կողքի շուռ եկավ Խաչիկ եղբայրը: - Տխուր պատմություն է: Կյանքումս մարդասպան չէի տեսել ու կարծում էի, թե դրանք շատ ուրիշ տեսակ մարդիկ են, սովորական մարդկանց նման չեն, Բայց ի՞նչ: Նայում էի երեսին ու զարմանում, մի քիչ էլ քաշվում էի... Ախր նրան որ տեսնեի փողոցում, ցախավելս կանոնեի, մի կողմ կքաշվեի, որ փռչի չնստեր վրան: Որ ասեր՝ գնա թերթ առ ինձ համար, կգնայի... Էդպես ո՞նց կլինի... Էդքան տարի ապրել եմ, հիմա ի՞նչ անեմ, ու՞րիշ տեսակ նայեմ մարդկանց: Ոնց իմանամ, թե ով է ազնիվը ու ով է գող-մարդասպանը... Հագուստից հո չի՞ երևում:

Ուսուցչուհին թաշկինակը աչքերին տարավ:

- Որ պատկերացնում եմ, թե ինչպես է թույնով լի բաժակը մեկնել իմ խեղճ, հիվանդ հարևանին...
- Գնանք, - չդիմացավ, ոտքի կանգնեց Խաչիկ եղբայրը: - Ոնց որ թե սկսվում է... Գնանք տեսնենք ի՞նչ է լինելու էս բոլորի վերջը:
- Գնանք, - տեղից բարձրացավ նաև Մելինե Մուրադյանը, - անչափ հետաքրքիր է...
- Ես չեմ կարող, - ասաց ուսուցչուհին, - Ես տուն եմ գնում: Եթե հանկարծ հայտարարեն գնդակահարություն, էս կմեռնեմ, չեմ կարող նայել նրա աչքերին: Կներեք ինձ, Խաչիկ եղբայր...

Դատարանի քարտուղարը բարձր ձայնով ազդարարեց,

- Ոտքի, դատարանը գալիս է:

Դահլիճը ոտքի ելավ ու պահեց շունչը:

Ներս մտան դատարանի նախագահն ու ատենակալները և այլևս չգրավելով իրենց տեղերը, շարունակեցին կանգնած մնալ իրար կողքի: Սովորության համաձայն նախագահողը մեկ աջ նայեց, մեկ ձախ, գլխով արեց՝ չգիտես ում, երկու ձեռքով բռնեց որոշումը, աչքերին մոտեցրեց ու սկսեց կարդալ.

- Հանուն Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության...

Ճիշտ նույն վայրկյանին տեղի ունեցավ անսպասելին: Միջանցքի մոտ, չորրորդ շարքի անկյունում նստած երկար բեղերով ծերունին առաջ պարզեց ձեռքը ու ձայն տվեց,

- Սպասեք, էս ասելիք ունեմ:

Ամեն ինչ խառնվեց իրար: Դատավորն իջեցրեց ձեռքերը, բարձրացրեց գլուխն ու շփոթված, զարմացած դեպի դահլիճ նայեց, իսկ դատարանի քարտուղարը բղավեց զայրացած.

- Ո՞վ է այդ մարդը, ինչո՞ւ է խանգարում: Դուրս հրավիրեք անմիջապես...

- Սպասեք, - անվրդով կրկնեց ծերունին, - սպասեք, ասում եմ: Ես իմ ընկերոջ վերջին կամքն եմ կատարում: Խոսք եմ տվել:

Ձեռնափայտը վճռականությամբ հատակին թխկթխկացնելով, նա համարձակ առաջ եկավ, մոտեցավ դեռևս կանգնած, այլայլված դատավորին ու մեկնեց ձեռքը, որի մեջ մի ծրար կար:

- Վերցրու, - ասաց նա, - քեզ են գրել:

- Ո վ՞ - ակամա հարցրեց դատավորը:

- Հանգուցյալ ընկերս, Վասակ Սերոբյանը, - ասաց ծերունին: - Մի օր կանչեց, ինձ տվեց էս նամակն ու ասաց, »Բենիամին, էս մեռնում եմ և խնդրում եմ, որ դու կատարես իմ վերջին կամքը: Երկու ամիս հետո ամեն շաբաթ Գերագույն դատարան կգնաս ու կկարդաս դատական նիստերի ցուցակները: Հենց որ տեսնես գրված է »ըստ մեղադրանքի Անդրանիկ Աթայան և ուրիշներ« կգնաս, կնստես դահլիճում ու էս նամակը քո ձեռքով կհանձնես գլխավոր դատավորին»:

- Իսկ ինչու շուտ չէիք տալիս, - սրտնեղած ընդմիջեց դատավորը:

- Որովհետև նա ինձ ասաց, «Բենիամին, կտաս միայն այն ժամանակ, երբ որ գլխավոր դատավորը կասի »Հանուն Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության»:

Նա գրագետ մարզ էր, ինձ նման չէր ու գիտեր ինչ էր անում:

- Իսկ դուք գիտե՞ք, թե ինչ է գրված նամակում:

- Չէ, - ասաց ծերունին, - բայց ինչ էլ գրված լինի՝ ճիշտ է: Որովհետև Վասակ Սերոբյանը կյանքում սուտ բան ասած չկար:

- Բայց սա դատավարական կանոնների խախտում է, - հանկարծ անհանգստացավ դատավորը:

- Մեռնողի կամք է, - պնդեց ծերունին, - կարդացեք:

Դատավորը մեկ աջ նայեց, մեկ ձախ, գլխով արեց չգիտես ում, բացեց ծրարը, միջից մի թուղթ հանեց ու սկսեց կարդալ:

- Բարձր ձենով կարդացեք, - խնդրեց ծերունին, - ինքն էդպես էր ուզում:

Դատարանի քարտուղարը զգաց, որ իր հերթը հասել է.

- Դուք այստեղ կարգադրելու իրավունք չունեք, հայրիկ, - խիստ ձայնով ասաց նա:

Ծերունին նրա կողմը դարձավ.

- Նախ՝ եթե հայրիկ եմ, ուրեմն՝ իրավունք ունեմ, - պատասխանեց նա: - Եվ հետո իրավունք ունեմ, որովհետև իմ ընկերների հետ ես եմ ստեղծել էս կարգերն ու էս դատարանը: Այսինքն՝ ես էլ եմ պատասխանատու էն բոլորի համար, ինչ որ դուք անում եք: Հասկացար, ընկեր: Եվ երբորդը՝ որովհետև ես խոսք եմ տվել Վասակ Սերոբյանին:

Դատարանի նախագահը կրկին բարձրացրեց գլուխը և բոլորը տեսան, որ նա հուզված ու այլալված է,

- Վերջացրեք, - ասաց նա վիճողներին: - Առանց այդ էլ ես պարտավոր եմ հրապարակել այս նամակը, որպես դատավարության ընթացքի հետ կապված կարևոր մի փաստաթուղթ:

Դահլիճն ախ քաշեց:

“Հարգելի ընկեր նախագահ., - կարդաց դատավորը: - Քիչ առաջ դուք արտասանեցիք ինձ համար և յուրաքանչյուր հայի համար թանկ այդ խոսքերը` ”Հանուն Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության”: Եվ իմ խնդրանքով իմ ավագ ու մեծ ընկերը, հնագույն հեղափոխական Բենիամին Դարբինյանը, հենց այդ խոսքերից հետո ընդհատեց Ձեզ, որովհետև ես չեմ ուզում, որ անարդարություն կատարվի հանուն Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության: Որովհետև ճիշտ է ասում` Անդրանիկ Աթայանը: Նա մարդասպան չէ: Ես եմ դիտավորյալ նրան մեր տուն կանչել ու հանձնել իմ նամակները: Ես եմ սպանել ինձ, նրա հեռանալուց հետո թույն լցնելով բաժակի ու սրվակի մեջ և սրվակն էլ պատշգամբից նետել ցած:

Դահլիճի խոր լռության մեջ հանկարծ այնտեղից, որտեղ մեղադրյալներն էին նստած, հեծկլտոց լսվեց.

- Լսիր, է՛, լսիր, քննիչ Մամյան, - սուր ձայնով բղավեց կոմբինատի դիրեկտորը: - Կյանքս կերար, լսիր, է՛ ...

Չորս կողմից սաստեցին նրան, և դատավորը շարունակեց.

“Ինչո՞ւ արեցի ես այդ բանը: Ահա հարցը հենց այդ է, ինչու՞: Որովհետև եթե Անդրանիկ Աթայանը անմեղ է իմ սպանության մեջ, ապա ոտքից գլուխ մեղավոր է որպես խարդախ, անազնիվ մարդ, որպես գող ու պետական ունեցվածքի հափշտակիչ: Բայց ամենավտանգավորը դա չէր, ամենավտանգավորն այն էր, որ նա իր ոգով էր դաստիարակում, փչացնում ոչ միայն իր որդիներին, այլև մեր կոմբինատի ջահել տղաներին:

Ես տեսնում էի, թե ինչպես է տարիների ընթացքում պաշտոնով անընդհատ բարձրանում, բայց որպես մարդ ընկնում Անդրանիկ Աթայանը: Բայց կոնկրետ փաստեր չունեի: Մինչև որ մոտավորապես հասկացա մեր նախկին դիրեկտոր Պետրոս Մինասյանի ղեկավարությամբ ստեղծված ավագանների այդ խմբի հանցագործության կառուցվածքը: Եվ քանի որ Անդրանիկ Աթայանը իմ ընկերն էր, առաջինը նրան դիմեցի. Անդրանիկ, ասացի, քանի ուշ չէ, ես դառ այդ ճանապարհից: Անդրանիկը ծիծաղեց ինձ վրա: Դու ապրել չգիտես, դրա համար էլ նախանձում ես ինձ, ասաց: Երեսուն տարուց ավելի է, աշխատում ես` ինչ ունես, մի տղա, որին իսկի քաղաքում, կողքիդ չկարողացար պահել, տարան բանակ և այնտեղ էլ մնաց: Ուրիշ ի՞նչ ունես: Բարի անուն, ասացի ես: Ու քանի որ նորից ծիծաղեց, սպառնացի, որ կգրեմ նրանց արարքների մասին, կխայտառակեմ աշխարհով մեկ: Ծաղրեց ինձ ու հայիոյեց Անդրանիկ Աթայանը: Ասաց գրում ես` գրի, մարդիկ էլ բան ու գործ չունեն, քո գրածները պետք է կարդան: Բոլորը քեզ վրա են ծիծաղելու: Նա ինձ վիրավորեց մինչև սրտիս խորքը, նա իմ ամբողջ կյանքն ու աշխատանքը, իմ հավատն էր ծաղրում: Դա տասնհինգ տարի առաջ էր: Եվ ես գրեցի իմ առաջին դիմումը բացահայտ, սրտացավությամբ, փաստերով:

Հարգելի դատավորներ, ասում եմ անկեղծ, սրտի խոր ցավով, եթե իմ այդ առաջին նամակը կարդային ինչպես պետք է, այսօր ոչ այդքան մեծ կլինեք մեղադրյալի աթոռին նստած մարդկանց թիվը, և ոչ էլ այդքան մեծ նրանց հասցրած վնասը:

Բայց ես իմ դիմումի նույնիսկ պատասխանը չստացա:

Եվ ահա տասնհինգ տարի է, ինչ գրում եմ: Հանձնաժողովներ են կազմվում, բայց չեն հասնում կոմբինատ, հասնողներն էլ, հանցագործներին թողած, իմ հարցն են քննում: Նորից եմ գրում, գալիս են նորից, բայց հենց տեղեկանում են, որ ես եմ գրել, թափ են տալիս ձեռքերը, ”Վա յ, էլի էդ Սերոբյա՞նն է”: Ու չեն ուզում ինձ լսել, նույնիսկ արհամարհանքով են նայում, ”Չհոգնեցի՞ր, այ մարդ, - ասում են, - դու էլ բան ու գործ չունես՝ ա... Քանի՞ անգամ պիտի ստուգենք... Քո գրածները չեն հաստատվում”:

Վերջին տարիներին նույնիսկ նամակները չէին կարդում, չէին ծանոթանում նոր փաստերին, արտագրում էին հին պատասխանները և ուղարկում ինձ ու պատճեններն էլ նրանց, ում մասին ես բողոքում էի:

Իսկ թե ոնց էին վարվում ինձ հետ կոմբինատում... ճաշարանում ոչ մեկը չէր նստում իմ կողքին, պետերը ժամերով սպասեցնում էին իրենց ընդունարաններում, Անդրանիկ Աթայանի մանկլավիկները սպառնում էին ինձ, անվանում ինչ ասես՝ էլ մաղձ, էլ թույն, էլ գրպարտիչ, էլ դավաճան, և կողքովս անցնելիս իբր պատահաբար հրում, մի կողմ էին զցում:

Բայց մեծ էր իմ համբերությունը և անվերջ՝ համառությունը: Հո գուր չէ՞ր, որ չորս տարի հետախույզ էի եղել Հայրենական Մեծ պատերազմում: Ես շարունակում էի իմ կոնվր և կշարունակելի մինչև վերջ, եթե այդ վերջը հանկարծ չկանգներ իմ դեմ- դիմաց: Ինձ ասացին, որ ես քաղցկեղ ունեմ և ինձ հաշված շաբաթներ են մնացել: Բժիշկները հիմա դա չեն թաքցնում: Ասում են՝ աչքերիդ հանգիստ նայելով: Ահա հենց այդ ժամանակ էլ սարսափեցի, որ մեռնելու եմ, իսկ հանցագործները մնալու են անպատիժ: Սարսափեցի, որ ես մեռնելու եմ, իսկ Անդրանիկ Աթայանն ու իր ընկերները շարունակելու են հափշտակել պետության ոսկին, փչացնել, թունավորել ջահելությանը և ծիծաղել ինձ նման մարդկանց վրա: Դա մեծ, շատ մեծ անարդարություն կլիներ: Ես հանգիստ չէի ունենա նույնիսկ այն կյանքում: Ու հանկարծ մտածեցի, որ եթե իմ կյանքով չեմ կարողացել պայքարել նրանց դեմ, գուցե թե մա՞ հըր օգնի: Մահը: Մարդիկ դեռևս այնքան էլ անտարբեր չեն անցնում սպանության փաստի կողքով: Եվ եթե ես կարողանամ կյանքումս մի անգամ անազնվություն գործելով գրավել նրանց ուշադրությունը և այդ ուշադրությունը հանցագործների վրա հրավիրել... գուցե թե վերջապես հաղթի արդարությունը: Գուցե թե վերջապես ժողովրդի դատի առաջ կանգնեն ուրիշի քրտինքն ու արյունը խմողները, պետության ունեցվածքը գողացողները, մարդկանց աշխատասիրության հավատի ու ազնվության վրա ծիծաղողները... Ու որպեսզի հետո ուրիշներին, երիտասարդներին ևս չգայթակղի, չգրավի հանցանքի անպատժելիության գաղափարը:

Ահա թե ինչու ես ինքնասպանություն գործեցի, այն ցուցադրելով իբրև կանխամտածված սպանություն: Ահա թե ինչու ես սարքեցի նաև պաշտպանության մինիստրին ուղղված դիմումի պատմությունը, որովհետև մարդիկ ավելի հաճախ ստին են ուշադրություն դարձնում, և որովհետև վախեցա, թե հանկարծ այլևս նամակ չի գա ինձ և միլիցիան չի գտնի հետքը:

Իսկ պաշտպանության մինիստրությունը երբեք որևէ նամակ անպատասխան չի թողնում:

Խնդրում եմ, շատ եմ խնդրում հասկանալ ինձ:

Ու ներել ինձ:

Վասակ Սերոբյան”:

Դատարանի նախագահը ավարտեց նամակը ու մեկ աջ նայեց, մեկ ձախ:

Լարված լռություն տիրեց: Եվ այդ լռությունը հանկարծ ճեղքեց եղբայր Խաչիկի ձայնը:

- Ճիշտ է արել:

- Ինձանից փոքր էր, բայց իմ ընկերն էր, - մի տեսակ հպարտ բացականչեց գավազանով ծերունին:

Դատարանի նախագահը բարձրացրեց ձեռքը և առանց աջ ու ձախ նայելու, ասաց,

- Այս նամակը էական ուղղում է թելադրում դատավարությանը: Դատարանը որոշում է գործը վերադարձնել լրացուցիչ քննության:

- Տո՞ւն եք գնում, ընկեր Մամյան, - կամացուկ հարցրեց տեղամասային տեսուչ Կարեն Շախույանը: - Ընկերս ավտոմեքենայով է, մեզ կտանի:

- Չէ, - ասաց կարևորագույն գործերի քննիչը: - Չէ, դու նստիր, Կարեն: Ես ուզում եմ ուտքով գնալ:

Կուսակցության քաղաքային կոմիտեի քարտուղարը ցած դրեց լսափողը և հավաքեց հանրապետության դատախազի հեռախոսի համարը:

- Բարև ձեզ, - ասաց նա: - Հենց նոր ինձ զանգահարեցին և շատ իրավացիորեն դիտողություն արեցին՝ աշխատավորական նամակներին պատշաճ ուշադրություն չդարձնելու համար: Առաջիկա պլենումում իմ զեկուցումն է դրված և ձեր հաշվետվությունը այդ հարցում: Չէ, բայց խղճի՞ բան է, ինչ տեղի է ունենում ձեզ մոտ: Նորմալ և ներելի՞ եք համարում, որ մարդը մեռնում է, ու նոր են միայն նրա ահազանգերը տեղ հասնում: Ահազանգեր, որոնք կարող էին նույնիսկ կանխել հանցագործությունը: Մա մեծ, չափազանց մեծ դաս պետք է լինի մեզ համար: Այնպես որ նախապատրաստվեք:

Ներքին գործերի մինիստրը ցած դրեց լսափողը և վերցրեց մյուսը, որը նրան ուղիղ գծով կապում էր քաղաքի վարչության պետի հետ:

- Ես որքա՞ն պետք է ձեր պատճառով նախատինքներ լսեմ, - ասաց նա: - Ես ստուգեցի, Վասակ Սերոբյանի բոլոր նամակները ես կամ իմ տեղակալները անձամբ ձեզ ենք մակագրել,

մի քանիսը նույնիսկ, ”Հսկողության տակ է” մակդիրով: Ո՞ւմ ձեռքին են եղել, ի՞նչ ճակատագիր են ունեցել, ովքե՞ր են ստուգել այդ նամակները: Բոլորին մեջտեղ բերեք: Եվ ընդհանրապես՝ ամենայն ուշադրություն նամակներին ու բողոքներին: Մի մոռացեք, որ յուրաքանչյուր նամակի ետևում մարդ է կանգնած: Եվ նախապատրաստվեք՝ երեքշաբթի օրը կոլեգիայում ձեր հաշվետվությունն է՝ նամակների հետ տարվող աշխատանքի մասին: Աշխատեք ինքնաքննադատաբար խիստ լինել ձեր և ձեր աշխատողների նկատմամբ, որպեսզի ուրիշներին հնարավորություն չտաք ավելի խիստ լինելու, Ինձ թվում է, թե հասկացաք:

Ներքին գործերի քաղաքային վարչության պետը զգուշությամբ լծակին դրեց լսափողը, մտածեց մի պահ, խոր հոգոց հանեց և վերցրեց այն հեռախոսի լսափողը, որ նրան ուղիղ գծով կապում էր ներքին գործերի շրջանային բաժնի պետի հետ:

- Մուքիասյան, - ասաց նա: Ետ ընկավ աթոռին, դիմացի պատին կախված նկարին նայեց, ձախ ձեռքով շփեց ճակատն ու ասաց. Մուքիասյան, Մուքիասյան... Ճիշտ է, դու նոր մարդ ես, բայց ճար չկա: Վաղն առավոտյան զեկուցագրով կլինես ինձ մոտ: Այդքան բան, ախպերս:

29.06.86 թ.